Azg
Azg armenian daily

8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2001 ՇԱԲԱԹ 226 (2430)

Ղանդահարը հանձնվեց, մոլլա Օմարը փախավ

Վաղը լրանում է Աֆղանստանում ամերիկյան ռազմական գործողությունները սկսելու 2-րդ ամիսը: Իսկ երեկ, երկօրյա ծնծումներից ու բանակցություններից հետո, թալիբների վերջին ամրոց Ղանդահարը հանձնվեց 2 շաբաթից ավելի խաղաղը շրջապատած փուշտու ցեղախմբերին պատկանող ուժերին: Այսպիսով պաշտոնապես վերջ տրվեց թալիբների իշխանությանը: Զինվածներից շատերն իրենց զենքերը հանձնեցին խաղաղի նոր տերերին, մինչդեռ թալիբների առաջնորդ եւ հոգեւոր ղեկավար մոլլա Մոհամմեդ Օմարը փախուստ տվեց անհայտ ուղղությամբ: Նորանշանակ վարչապետ Համիդ Քարզայը, ինչպես փուշտու ցեղապետերն առայժմ վճռական են նրան ձերբակալելու եւ դատարանին հանձնելու, քանի որ նրան համարում են վերջին 5 տարիներին Աֆղանստանին անպատմելի բվաառություն պատճառած գլխավոր պատասխանատու: Նրան փնտրում են նաեւ ամերիկացիները մեկ այլ պատճառով՝ ահաբեկչությանը նպաստելու եւ գլխավոր ահաբեկիչ հայտարարված Ուսամա բեն Լադենին ապաստան տալու համար: Ամերիկացիները փնտրում են նաեւ վերջինին, այս անգամ՝ Թորա-Բորա բնակավայրին հարող լեռների քարանձավներում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«Եվրոպայի ակտիվացմանը մեր տարածաշրջանում, մասնավորապես ԼՂ խնդրում պիտի լուրջ վերաբերվել»

Հավաստում է ԼՂՀ նախագահի քաղաքական հարցերով խորհրդական Մանվել Սարգսյանը

ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վերջերս Բեռլինում գումարվել էր Հարավային Կովկասի վերաբերյալ՝ «Հնարավո՞ր է կայունության պակս Եվրոպայի հետ» թեմայով կոնֆերանս՝ Հարավային Կովկասի երեք պետությունների, Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի, Օսիայի եւ հարեւան երկրների՝ Ռուսաստանի, Թուրքիայի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հավաքը կազմակերպել էր Ֆրիդրիխ Էբերտի անվան հիմնադրամը: Սա սոցիալիստական, կառավարությանը մոտ կանգնած կառույց է: Կոնֆերանսին, որին յուրաքանչյուր երկրից հրավիրվել են ե՛ւ պետական պաշտոնյաներ, ե՛ւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնակցել է նաեւ ԼՂՀ նախագահի քաղաքական հարցերով խորհրդական Մանվել Սարգսյանը:

Ստորեւ նա «Ազգին» ներկայացնում է կոնֆերանսի մանրամասները՝ նշելով, թե քանի որ Աբխազիայի ներկայացուցիչները չեն ընդունել հրավերը, Օսիայից ժամանածներն էլ իրենց խնդիրը սուր անկյան տակ չեն բարձրացրել, երկօրյա հավաքի գլխավոր նյութ է դարձել ԼՂ հակամարտությունը:

– Պրն Սարգսյան, Ձեր ամենակարեւոր դիտարկումները Բեռլինի կոնֆերանսից:

– Սեպտեմբերի 11-ից հետո առաջին անգամ էի դրսում լինում եւ տպավորություն ունեցա, թե աշխարհում մթնոլորտն իսկապես լրիվ փոխվել է: Ֆորմալ էթիկան արդեն դուրս է բերված ասպարեզից: Այսպես, կոնֆերանսում մեր տարածաշրջանի հակամարտության գոտիները հաճախ կոչվում էին անիշխան, անօրեն տարածքներ, որոնց տիրում են էթնիկական գաղափարներով զինված ուզուրպատորներ՝ դարձնելով այդ տարածքները քրեական բիզնեսի բներ: Իհարկե, ուղղակի ձեւակերպումներ չեղան, բայց ակնարկ կար նաեւ, որ Հարավային Կովկասի բուն պետություններն էլ այդպիսին են:

Տես էջ 3

ԵՐԿՐԱՇԱՐԺ-13

Այց Գյումրի

Երեկ՝ 1988 թ. երկրաշարժի 13-րդ տարելիցի օրը, նախագահ Ռոբերտ Քոչարյանն այցելել է Գյումրի:

Հանրապետության նախագահը «Շիրակ» գերեզմանատանը ծաղկեպսակ է դրել երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

Այնուհետեւ Շիրակի մարզպետարանում Ռոբերտ Քոչարյանն անցկացրել է աշխատանքային խորհրդակցություն՝ երկրաշարժի գոտու վերականգնողական աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Գարեգին Բ կաթողիկոսը Ֆրանսիայում

ՍԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ: Ինչպես հաղորդել ենք, դեկտեմբերի 6-ի վաղ առավոտյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը հովվապետական անդրանիկ այցով մեկնեց Ֆրանսիա: Փարիզի Շառլ դը Գոլ օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորել են զինվորական պատիվներով, պատվո հյուրերի սրահում: Դիմավորողների թվում են եղել հայ եկեղեցու հոգեւոր դասը՝ Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ եւ Փարիզի առաջնորդ Տ. Գյուս արք. Նազգաջյանի գլխավորությամբ, Ֆրանսիայում ՀՀ դեսպան Էդվարդ Նալբանդյանը, քույր եկեղեցիների հոգեւորականներ, ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչներ:

Երեկոյան Նորին Սրբությունը Հրապարակով մուտք է գործել Փարիզի առաջնորդանիստ Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի, ուր Վեհափառ հայրապետին դիմավորել ու նրա օրհնությանն են արժանացել բազմաթիվ բարեպաշտ հայեր:

Դեկտեմբերի 7-ին՝ 1988 թ. աղետալի երկրաշարժի զոհերի հիշատակի օրը, Ամենայն հայոց հայրապետը Ֆրանսահայ «Այբ» ռադիոկայանով ողջույնի եւ աղա՝ Սոչիի երկրաշարժի 13-րդ տարելիցի առիթով ոգեկոչման խոսք է հղել Ֆրանսահայությանը: Նորին Սրբությունը մասնավորապես երախտագիտությամբ է հիշատակել երկրաշարժի աղետյալներին ցուցաբերած «Ֆրանսիայի պետության ու ասվածասեր ժողովրդի օգնությունը», ինչպես նաեւ ֆրանսահայ համայնքի աջակցությունը:

«Այսօր վիշտն ու սուգը չէ, որ գերակշռում են մեր հոգիներում, ինչպես այն աղետալի եւ ահավոր օրերին: Այսօր մեր հոգիներում առավել տեղ ունեն լավատեսությունն ու հավատը, թեեւ Հայաստանի հյուսիսային շրջանները տնքացող վերքի պես դեռ կրում են երկրաշարժի ավերիչ հետեւանքը, որ պիտի սրբվեն ու վերանան մեր ժողովրդի՝ հայոց պետության եւ սփյուռքի համընդհանուր հոգածությամբ ու ջանքերով», նշել է հայոց հայրապետը:

Դեկտեմբերի 7-ին, շարունակելով հովվապետական այցը Ֆրանսիա, Նորին Սրբությունն այցելել է Ռուս օրթոդոքս եկեղեցու Սեն Սերժ Աստվածաբանական ինստիտուտ:

Նույն օրը կաթողիկոսը եղել է նաեւ Փարիզի Լը Ռենսի արվարձանում գտնվող դպրոցասեր տիկնանց վարժարանում եւ հանդիպել ավելի քան 100-ամյա կրթօջախի սաների հետ:

Երեւան կայցելի Դոնալդ Ռամսֆելդը

Առաջիկա շաբաթվա կարեւոր դեպքերը

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ դեկտեմբերի 10-ին, ժամը 14-ին Երեւանի Ազատության հրապարակում տեղի կունենա հանրահավաք՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության հասարակական խորհրդի հովանու ներքո:

Դեկտեմբերի 10-ին Բրյուսելից Երեւան կվերադառնա Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը, որը մասնակցում է Եվրասլանդյան համագործակցության խորհրդի արտգործնախարարների հերթական նիստին:

Դեկտեմբերի 11-ին երկօրյա այցով ե[illegible] կժամանի Վրաստանի խորհրդ[illegible]ի նախագահ Նինո Բուրջանաձեն: Նույն օրը նա կհանդիպի Հայաստանի Աժ նախագահ Արմեն Խաչատրյանի, խորհրդարանի մշտական հանձնաժողովների, խմբակցությունների ու խմբերի ղեկավարների հետ:

Դեկտեմբերի 12-ին Ն. Բուրջանաձեն Երեւանում կհանդիպի Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանի, վարչապետ Անդրանիկ Մարգարյանի եւ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Նույն օրը ՀՀ խորհրդարանի շենքում տեղի կունենա Վրաստանի խորհրդարանի նախագահի մամլո ասուլիսը:

Դեկտեմբերի 12-ին ՀՀ խորհրդարանն իր արտահերթ նիստում կքննարկի 2002 թ. պետբյուջեն:

Դեկտեմբերի 15-ին Հայաստան իր առաջին աշխատանքային այցը կկատարի ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը, որը Հայաստանի պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի եւ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ կհանդիպի ռազմական համագործակցության հարցերի քննարկման համար: Նույն օրը՝ իր երկժամյա այցի ավարտից հետո նա ճեպազրույց կունենա լրագրողների հետ:

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանում Ինտերֆաքսի սեփ. թղթակից

ՀԱՄԱՌՈՏ

Թուրքմենստանը հավանաբար կմասնակցի Իրան-Հայաստան գազատարի շինարարությանը

ԱՇԳԱԲԱԴ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Թուրքմենստանի նախագահ Սափարմուրադ Նիյազովը դական է գնահատում Իրան-Հայաստան գազատարի շինարարության նախագծի իրականացմանը իր երկրի միանալու հնարավորությունը: Այս մասին հաղորդվել է դեկտեմբերի 6-ին Կասպից ծովի իրավական կարգավիճակի որոշման հարցերի գծով Իրանի հատուկ ներկայացուցիչ Մեհդի Սաֆարիի հետ Նիյազովի հանդիպման ժամանակ: Էներգետիկական ոլորտում իրանա-թուրքմենական համագործակցության համատեքստում զրուցակիցները քննարկել են թուրքմենական գազը Իրանով Հայաստան փոխադրելու հնարավորությունը: Ներկայումս Թուրքմենստանն ամեն տարի Իրանի հյուսիսային տարածաշրջաններ է մատակարարում մոտ 2 մլրդ. խմ գազ: Ծրագրվում է, որ 2002 թվականին այդ ծավալները կաճեն, որոնց մի մասը կհասնի նաեւ Հայաստան:

Որեւէ պետության մի մասն էլ կարող է միանալ Ռուսաստանին

ՄՈՍԿՎԱ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ռուսաստանի Դաշնության խորհուրդն ընդունել է «ՌԴ ընդունելության եւ նրա կազմում դաշնության նոր սուբյեկտի կազմավորման կարգի մասին» դաշնային սահմանադրական օրենքը: Օրենքին համաձայնասխան Ռուսաստանի կազմում նոր սուբյեկտի ընդունելությունն իրականացվում է արտասահմանյան պետության կամ նրա մի մասի Ռուսաստանին միանալու միջոցով: Ընդ որում այդ արտասահմանյան պետության հետ Ռուսաստանի ընդհանուր սահմանի առկայությունը պարտադիր չէ:

2002 թ. Ռուսաստանն ու ՆԱՏՕ-ն կմշակեն համագործակցության «նոր մեխանիզմ»

ՄՈՍԿՎԱ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: 2002 թվականի սկզբին Ռուսաստանն ու ՆԱՏՕ-ն կձեւակերպեն համագործակցության նոր մեխանիզմ ստեղծելու կոնկրետ առաջարկներ: Այս մասին ուրբաթ հայտարարել է Ռուսաստանի ԱԳՆ ղեկավար Իգոր Իվանովը Ռուսաստան-ՆԱՏՕ համատեղ մշտական խորհրդի նիստից հետո կայացած մամլո ասուլիսում, Աթենքում, որտեղ գտնվում է նաեւ Վլադիմիր Պուտինը: Ըստ նրա, «նոր մեխանիզմը հագեցած կլինի իրատեսական բովանդակությամբ»: «Նովոստի» գործակալության համաձայն, Իգոր Իվանովն ընդգծել է, որ Ռուսաստանը «պատրաստ է ամենակառուցողական ձեւով աշխատել այդ ուղղությամբ»:

Մուբարաքը չի հավատում Շարոնին

ԿԱՅԻՐԵ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը ուրբաթ կասկած է հայտնել, որ Իսրայելի վարչապետ Արիել Շարոնը լրջորեն շահագրգռված է Մերձավոր Արեւելքում զինված հակամարտության դադարեցման մեջ: «Ռոյթեր» գործակալության համաձայն, Մուբարաքը հայտարարել է. «Պաղեստինցիների հետ խաղաղ համաձայնագիր կնքելու ոչ մի հնարավորություն չի լինի, եթե Շարոնը շարունակի իր ներկայիս քաղաքականությունը: Այժմ դրա հույսը չկա, եթե, իհարկե, հրաշք չկատարվի», ասել է Մուբարաքը:

ԱՅՑ

ՀՌԱԿ պատվիրակությունը Երուսաղեմում

Ինչպես արդեն հայտնել էինք, Երուսաղեմ էր մեկնել Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության պատվիրակությունը՝ աստնաղետ Ռուբեն Միրզախանյանի գլխավորությամբ:

Դեկտեմբերի 5-ին ՀՌԱԿ ներկայացուցիչներն այցելեցին Սրբոց թարգմանչաց վարժարան, ուր հանդիպեցին ուսուցչական կազմի եւ աշակերտության հետ: Սոյա կուսակցության ատենապետը հանդիպեց Երուսաղեմում Հայաստանի Հանրապետության պատվո հյուպատոս Ցոլակ Մոմջյանի հետ, այցելեցին Մոմջյանի գործարան: Հանդիպմանը մասնակցում էին Ռամկավար Ազատական կուսակցության Երուսաղեմի կազմակերպության ղեկավար Հակոբ Շոհմելյանը, Հայ երիտասարդաց միության ատենապետ Հակոբ Անդրեասյանը, ՀՌԱԿ Երեւան քաղաքի «Այգեստան» ակումբի ատենապետ Արմեն Ստեփանյանը, ՌԱԿ Երուսաղեմի վարչականներ: Նույն օրը տեղի ունեցավ Ռուբեն Միրզախանյանի հանդիպումը Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի հետ: Զրույցի ընթացքում արծարծվեցին ազգային, եկեղեցական խնդիրներ, հայրենիքի սփյուռք հարաբերություններին առնչվող հարցեր:

Երեկոյան, ի պատիվ հյուրերի, տեղի ունեցավ ընդունելություն Հայ երիտասարդաց միության ակումբում:

տեղական

ԳՅՈՒՄՐԻ

Աղրելու ենք, միեւնույն է, աղրելու ենք

Ցավի ու տառապանքի օր է՞ր երեկ: Ոչ: Վերապրելու օր: Հայ մարդն արդեն սովորել է ապրելու գիտությունը: Մարդկության պատմությունը հաստատել է հայի ապրելու մշտնջենական կեցվածքը:

– Երբ 1988-ի դեկտեմբերի 8-ին, ահեղ արհավիրքի հաջորդ օրը ես, համողը, մարդ, որը, անկախ ամեն ինչից, անկախ կուսակցության պատկանելությունից, հայ մարդ էր, որ 1988-ի դեկտեմբերի 7-ի հենց հաջորդ օրը Լենինական-Գյումրիում էր, թեեւ ծանոթ-ազգական չուներ այստեղ: Հայ էր, հայի էր փրկում: Ինքն իրեն էր փրկում:

զարավոր հայերի պես, աշխատում էի Լենինականում (Գյումրիում), դպրոցի ավերակներում, ինձ համար անչափ դաժան մի տեսարանի ականատես եղա: Կար մի դպրոց քաղաքի կենտրոնում, որոշ պատեր կային: Բայց սարսափելի տեսարան բացվեց իմ առջեւ. դասասենյակի պատը կար, դպրոցի աշակերտների դիակները կային (որոնք մեկ առ մեկ հանում էին փլատակներից), բայց կանգուն մնացած միակ պատի վրա մնացել էր կախիչը, ուր շարված էին փոքրիկ, փոքրիկ վերարկուներ: Երեխաների վերարկուներ: Դա չեմ մոռանա երբեք...

– Իսկ ո՞ր դասարանն էր դա:

Շարունակեց: Չկարողացավ շարունակել:

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության փոխատենապետ Հարություն Առաքելյանն է պատ-

Եվ երեկ, երբ Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության անունից պսակ էր դնում 1988-ի զոհերի հիշատակին, իր հետ էր վերցրել նաեւ 10 տարեկան որդուն, որպեսզի իր Վաղարշ որդին ոչինչ չմոռանա, որպեսզի հիշի ապրելու օրերը (հայության ապրած մնացած մյուս օրերը):

ՀՈԱԿ ատենադպիր Գառնիկ Հովակիմյանը Գյումրիում ասաց. «Մենք չենք եկել սգալու, մենք եկել են ոգեկոչելու»: Այսպես, այս կերպ են ապրում հայերը: Եթե չեք հավատում, կարդացեք Սարոյանին, որն ասում է, եթե ավերեք ամեն ինչ, եթե ավերեք նրանց (այսինքն՝ մեր՝ հայերիս ամեն ինչը), ապա գոնե հիշողությունն ավերել չեք կարող:

Այս ենք, այսպես ենք ապրելու:

Ապրելու ենք:

ՄԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Տնտեսագետն առաջարկում է Գյումրին դարձնել ազատ առեւտրի գոտի

«Միայն Գյումրին ազատ տնտեսական գոտի դարձնելով է հնարավոր աղետի գոտու վերացումը», գտնում է տնտեսական գիտությունների թեկնածու Թաթուլ Մանասերյանը: ՀՀ կառավարության կողմից ՀՀ Աժ ներկայացված հարկային փոփոխությունների փաթեթի «Օրինաց երկիր» կուսակցության գրասենյակում կազմակերպված ճնշարկմանը Թ. Մանասերյանը առաջարկեց նաեւ հարկային քաղաքականությունը տարբերակել ըստ տնտեսության ճյուղերի եւ հանրապետության մարզերի, ընդ որում աղետի գոտու եւ սահմանային բնակավայրերում սահմանել հարկային արտոնություններ: Սեփականաշնորհված, սակայն չաշխատող ձեռնարկությունները վերագործարկելու եւ անավարտ շինությունները կառուցել պարտադրելու համար Թ. Մանասերյանն առաջարկեց կիրառել գույքահարկի պրոգրեսիվ սանդղակ:

ԼՏ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Քննադատում են «Ազգին»

Թույլ տվեք Ձեր հարգարժան թերթի ուշադրությանը հանձնել ինտերնետային սայթով նոյեմբերի 15-ին հաղորդված երկու հոդված, մեկը վերնագրված «Կանայք զբաղվում են կավատությամբ», իսկ մյուսը՝ «Հայ փախստականները՝ բափառաշրջիկներ»: Այս երկու հոդվածների հայտնվելը միջազգային սայթում վկայում է, որ Ձեր ղեկավարությանը չի հաջողվել ճիշտ գնահատել այն հնարավոր վնասը, որ նման հոդվածները կարող են պատճառել հայրենիքում թե սփյուռքում ապրող մեր երիտասարդներին՝ դեռ չխոսելով այն նվաստացման մասին, որ հայ կանայք կարող են զգալ եւ կամ այն բացասական պատկերի, որով դուք ներկայացնում եք նրանց համայն աշխարհին:

Տարօրինակ է, որ Ձեր սայթն է եզակի հաղորդելու նման «զգայուն» հրապարակումներ, որոնք կարող են վնաս հասցնել ինչպես մեր համախոհացիներին, այնպես էլ ընդհանրապես հայի իմիջին աշխարհով մեկ, որն այլ խոսքով կարելի է որակել «ինքն իրեն պատճառած վերք»: Ավելին՝ դուք պետք է հաշվի առնեք, որ այլ սայթեր (օրինակ՝ «Կոունկը») օգտվում են Ձեր սայթից՝ առավել ընդլայնելով հնարավոր վնասի տարածման չափերը: Սա պարզապես անընդունելի է:

Հուսով եմ, որ պատշաճ միջոցներ կձեռնարկվեն «Ազգի» կողմից հետագայում նման անզգուշություններից խուսափելու համար:

Հարգանքներով՝

դոկտ. Ա. Բ. ԿՅՈՒՐԵՂՅԱՆ,

Եվ Գալուստ Սահակյանին

Խնդրում եմ, այսուհետեւ Հայաստանի Ազգային ժողովի մեծամասնության խմբի ղեկավար Գալուստ Սահակյանի տելե-ռադիո ելույթները թարգմանել հայերեն, քանի որ նրա ասածները միայն հայերեն բառերի կույտ են ու անհասկանալի:

Եթե մարդիկ անգրագետ են ու չեն կարող իրենց մտքերն արտահայտել հայերեն ու հստակ, ապա պետք չէ նման մարդկանց ելույթները հեռարձակել, դա անհարմար է ու վիրավորական:

ՎԱՍԱԿԻՄԻՐ ՊՈՂՈՍՅԱՆ,

Երեւան

Պատվաստման օրենքը կփրկի հազարավոր մարդկանց կյանք

Պատվաստման միջազգային մանկական հիմնադրամի (WCTF) հայկական մասնաճյուղի գործադիր տնօրեն Մարիա Եգանյանը անհրաժեշտ է համարում Հայաստանի խորհրդարանի կողմից այնպիսի օրենքի ուսումնասիրությունը, որը թույլ կտար պատվաստել մարդու օրգանները: Ինտերֆաքսի թղթակցին տված հարցազրույցում նա նշեց, որ ոչ պաշտոնական տվյալներով ներկայումս Հայաստանում տարեկան մոտ 1000 մարդ օրգանների պատվաստման կարիք է զգում, այդ թվում, 1998 թ. տվյալներով, 100 երեխա: Սակայն համապատասխան օրենսդրության բացակայությունը խոչընդոտում է երկրում այդ թանկարժեք վիրահատության կատարմանը (նման մեկ վիրահատության արժեքը կազմում է 50-300 հազար դոլար): Տեղեկացնելով, որ համապատասխան օրինագիծն արդեն ներկայացված է խորհրդարանի քննարկմանը, Մ. Եգանյանը հույս հայտնեց, որ մինչեւ տարեվերջ Ազգային ժողովը կհաստատի այն: Ի դեմ, այդ օրենքի ընդունումը թույլ կտա Հայաստանում վերջապես բացել Պատվաստման միջազգային մանկական բարեգործական հիմնադրամի մասնաճյուղ, որը պետք է դառնա տարածաշրջանային: «Տվյալ փուլում Հայաստանից ոչինչ չի պահանջվում. հարկավոր է միայն ընդունել համապատասխան օրենք», ընդգծեց նա: Նրա խոսքերով, հիմնադրամի ղեկավար Մարկ Կրոկերը, որի կենտրոնակայանը Լոս Անջելեսում է, անչափ շահագրգռված է, որ մասնաճյուղեր գործեն նաեւ զարգացող երկրներում, քանի որ համանման կառույցներ գործում են ԱՄՆ-ում եւ Եվրոպայում: Արդեն մասնաճյուղեր են բացված Արգենտինայում եւ Կոստա Ռիկայում: Ի դեմ, Երեւանի օգտին ընտրության համար Մ. Եգանյանը զգալի ջանքեր է գործադրել, քանի որ պատվաստման տարածաշրջանային կենտրոնի բացման գլխավոր հավակնորդը համարվում էր Թբիլիսին: Որոշակի դեր խաղաց նաեւ այն հանգամանքը, որ հիմնադրամի խորհրդի անդամ է հայազգի Վելարի Սակեֆրին (Բուլգարիայի): Այդ հայրենասեր կնոջ շնորհիվ, որը միաժամանակ հոլիվուդյան «Նյու լայն սինեմա» ընկերության փոխնախագահն է, հաջողվեց հոլիվուդյան հանրաճանաչ աստղերի մասնակցությամբ անցկացված աճուրդի միջոցով Հայաստանի համար հանգանակել 60 հազար դոլար կազմող նախնական անհրաժեշտ գումարը: Ի դեմ, նման աճուրդներին մասնակցում են այնպիսի աստղեր, ինչպիսիք են Մադոննան, Բարբարա Սթրեյզենդը եւ ուրիշներ:

Հետաքրքիր է հիմնադրամի ստեղծման բուն պատմությունը, որը հիմնվեց 1988 թ.: Ամերիկացի նախկին ոստիկան Մ. Կրոկերը Արգենտինայում աշխատանքային ուղեւորության ժամանակ իր գործընկերոջից լսեց 11-ամյա աղջնակ Վերոնիկա Ագուիերոյի մասին, որի լյարդը հարկավոր էր պատվաստել: Ոստիկանը որոշեց աճուրդ կազմակերպել աղջնակի օրգանի պատվաստման համար անհրաժեշտ միջոցներ հանգանակելու նպատակով: Վիրահատությունն անցկացվեց երեք փուլով, բայց բոլոր դեպքերում պատվաստումը չհաջողվեց, աղջնակը մահացավ: Հանուն այդ աղջնակի նա որոշեց շարունակել գործը, ստեղծեց հիմնադրամ, որը գոյություն ունի մինչեւ օրս:

Պարզվում է, որ արդեն հունվարին հիմնադրամի ներկայացուցիչները Երեւան կայցելեն բժշկական օբյեկտներին ծանոթանալու եւ մանկական որեւէ հիվանդանոցի հիմքի վրա կենտրոն բացելու հնարավորություններն ուսումնասիրելու: Մ. Եգանյանը նշեց, ցանկալի է, որ ընտրվելիք հիվանդանոցը լինի լավ հանդերձավորված: Ճիշտ է, հիմնադրամի միջոցներով կառավարվեն նորագույն սարքավորումներ: Ինչ վերաբերում է բժիշկներին, անձնակազմը կընտրվի երկրի բոլոր համապատասխան բուժհաստատություններից հարցազրույցների հիման վրա, ապա կկատարելագործվի արտասահմանում: Ներկայումս որպես գլխավոր խորհրդատու հիմնադրամի հայկական մասնաճյուղի ղեկավարը նաեւ ուզում է փարատել այն երկյուղները, թե նման օրենքի ընդունումից հետո Հայաստանում կսկսվի մարդու օրգանների զանգվածային վաճառք: «Նախ, օրգանը կարող է գոյատեւել օրգանիզմից դուրս միայն մեկ օր: Երկրորդ, մարդու օրգանը երկար պահելու համար հարկավոր է ունենալ համապատասխան թանկարժեք սարքեր: Հայաստանը ներկայումս այս առումով այնքան աղքատ երկիր է, որ չի կարող զբաղվել օրգանների անօրինական վաճառքով», հայտարարեց Մ. Եգանյանը:

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանում Ինտերֆաքսի սեփ. թղթակից

«Ազգի» համար

«Հարկային վարչարարության դաժանությունների» մասին պատմեց կին գործարարը

Հսկիչ-դրամարկղային մեքենաների (ՀԴՄ) ներդրման անհրաժեշտության մասին, որպես երկրի ապրանքաշրջանառության արձանագրման եւ սպեցիալ տնտեսության դեմ պայքարի միջոց, շատ ենք խոսել: Սակայն ցանկացած դրական երեւույթ կարելի է վարկաբեկել այնպես, որ այլեւս ոչ ոք դրական չանվանի: Մեր պետական չինովնիկները լավ գաղափարներ եւ ձեռնարկումներ վարկաբեկելու հարուստ փորձ ունեն: Նման մոտեցման կոնկրետ օրինակի, իր բնորոշմամբ, «ՀԴՄ-ների հետ կապված վարչարարական դաժանությունների մասին» մեզ պատմեց խմբագրություն այցելած կին գործարար Էլմիրա Գալոյանը: Դրանց հեղինակները, ինչպես կարելի էր ենթադրել, հարկային տարածքային մարմինների աշխատակիցներն են:

150 հազար դրամ տուգանելու համար որպես հերթական զոհ ընտրված խանութում ապրանքներ գնելիս հարկային տեսուչը կամ նրա ուղարկած անձը, գնումներն ավարտելուց հետո, եթե կտրոնը նրան տվող է, խնդրում է եւս մեկ էժանագին ապրանք: Երբ վերջինիս կտրոնը չի տրամադրվում, անմիջապես հետեւում է վարչական տուգանքի ենթարկելու արձանագրության կազմումը: Ցանկանում ենք ընդգծել՝ դա այն դեպքում, երբ տվյալ խանութը որպես կանոն տրամադրում է ՀԴՄ-ի կտրոնը: Էլմիրա Գալոյանն ասում է, որ իր խանութը նման ձեւով աշխատող խանութ է: Սակայն իրեն տուգանել են մեկ այլ ձեւով: Ըստ Էլմիրա Գալոյանի, Շենգավիթի տարածքային հարկային տեսչությունն իրեն տուգանել է ոչ թե կտրոնը չտալու, այլ ուշացումով տալու պատճառով: Սակայն այդ կես րոպե ուշացման համար նա հարկադրված է եղել վճարել 150 հազար դրամ տուգանք եւ դրանից բացի եւս 15 հազար դրամ, որը տիկին Գալոյանը չգիտի, թե ինչի համար է: Վերոնշյալ գումարը վճարելու ժամանակ Շենգավիթի հարկային տեսչությունում նրա հետ շատ կոպիտ եւ արհամարհական են խոսել: Էլմիրա Գալոյանը որպես «լկտի պահվածքով» անձնավորության նշեց հարկային տեսուչ Լյովա Հովհաննիսյանի անունը: Նա նաեւ տարակուսանք հայտնեց, թե որտեղից են վերցված տուգանքի 150 հազար դրամ կամ կրկնվելու դեպքում 300 հազար դրամ թվերը: «Ես պետությունից ոչինչ չեմ խնդրել, թող հնարավորություն տա, որ ես չսնանկանամ: Ի՞նչ է շահելու պետությունը, եթե ես որպես հարկատու տվեմ», ասում է Էլմիրա Գալոյանը: Նա ընդհանրապես անիմաստ է համարում ՀԴՄ-ների գործածությունը, ասելով, որ ավելի նպատակահարմար է հաստատագրված վճարը: Սակայն մեր հարցին, թե այդ դեպքում ինչպե՞ս հնարավոր կլինի պարզել հարկվող, բայց տնտեսվարող սուբյեկտի թաքցրած եկամուտը, մեր զրուցակիցը չկարողացավ պատասխանել: Իսկ երբ բերեցինք զարգացած երկրների օրինակը, որտեղ ՀԴՄ-ների ներդրումը վաղուց արդեն լուծված հարց է, տիկին Գալոյանը կարծիք հայտնեց, որ «նրանց մոտ դա երեւի նորմալ ձեւով է կատարվում»: Այս պատասխանին թերեւս չէինք կարող չհամաձայնել, քանզի չինովնիկական կամայականությունները իսկապես մեզ մոտ ազգային չարիք են դարձել, որոնց դեմ առ այսօր խաղ չկա:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժԱ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ

Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս: 374-1-562863
e-mail: azg2@arminco.com

www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221

Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353

Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483

Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353

Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՂՂԱԳԻԾ

Ընդգծված անտարբերությամբ՝ հանուն երկրի բարգավաճման

Խորհրդարանն ավարտեց հերթական աշնանային նստաշրջանը

Չնայած շատ հարցերում դրսևորած բացարձակ անտարբերությանը, խորհրդարանին հաջողվեց այս նստաշրջանի ընթացքում քննարկել եւ ընդունել այնպիսի կարեւորագույն օրենսդրական նախաձեռնություններ, որոնք նպաստակուղղված են երկրում քաղաքական համակարգի առողջացմանը: Սակայն դրանց հիմնական մասը վերջնական լուծում կստանա հաջորդ նստաշրջաններում, եթե խորհրդարանին հաջողվի պահպանել ուժերի այն հարաբերակցությունը, որն առկա է հիմա:

ԱԺ նախագահի տեղակալ Տիգրան Թորոսյանն արդեն պաշտոնական դարձած 2001 թվականի աշնանային նստաշրջանը հետեւյալ կերպ գնահատեց. «Կարծում եմ խորհրդարանը բավականին արդյունավետ աշխատեց: Շատ լարված եւ մեծ ծավալի աշխատանքներ են տարվել: Կարող եմ առանձնացնել ԵՄ-ին անդամակցության մեր պարտավորությունների փաթեթի հետ կապված աշխատանքները, այնպիսի կարեւոր օրենքներ, ինչպիսիք են «Քաղաքացիական ծառայության մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին», օրենքները: Առաջին ընթերցմամբ ընդունվեցին «Կուսակցությունների մասին», «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» օրենքները, աշխատանքներ են սկսվել սահմանադրական փոփոխությունների փաթեթների ուղղությամբ: Սակայն առջեւում պակաս կարեւոր աշխատանքներ չեն մնում: Կարելի է նշել ընտրական օրենսգրքի փոփոխությունները, քրեական օրենսգիրքը, սահմանադրական փոփոխությունների հիմնական աշխատանքը եւս առջեւում է: Այս ամենը երկու հիմնական ուղղվածություն ունի. առանց պետական կառավարման բարեփոխումների եւ առանց քաղաքական համակարգի բարեփոխումների հաջողությունն ակնկալել չի կարելի: Սրանց համատեղումը տնտեսական բարեփոխումների հետ հնարավորություն կտա որեւէ հաջողություն ունենալու: Վերջին մեկուկես տարվա ընթացքում լուրջ համագործակցություն է ստեղծվել խորհրդարան-կառավարություն, խորհրդարան-նախագահ ուղղություններով: Ինչ-որ բանի հասել ենք»:

Խորհրդարանի քաղաքական մեծամասնության համար նման համագործակցությունն անհրաժեշտ է օդ ու ջրի նման: Դա է նաեւ պատճառը, որ վերջին շրջանում հաստկապես հանրապետականներին հաջողվում է խորհրդարանում հարաբերական կայունություն ապահովել եւ համագործակցության եզրեր ամրապնդել խորհրդարանական խմբերի հետ: Դա պայմանավորված էր այն պարզ հանգամանքով, որ իրենց քանակով այդ երկու խմբերը՝ ժողովրդավարական եւ ազգայնաբերողներ՝ գերազանցում են մյուս բոլոր խմբակցություններին: Մասնավորապես այդ համագործակցության հետեւանքով ՀԺԿ-ին խորհրդարանում որեւէ լուրջ նախաձեռնություն իրականացնել չի հաջողվում, բացառությամբ թերեւս «Կուսակցությունների մասին» օրենքի ընդունման, որը թեեւ շատ քաղաքական ուժեր հակասահմանադրական որակեցին, սակայն հետեւությամբ ընդունվեց: Մյուս բոլոր դեպքերում ՀԺԿ-ի նախաձեռնությունները եղել են անարդյունավետ:

Վերջերս, օրինակ, ՀԺԿ-ի բարձրացրած աղմուկը, կապված «Քաղաքացության մասին» օրենքի սահմանադրականության հետ, քաղաքական ներխորհրդարանական ուժերը պետական «Կուսակցությունների մասին» օրենքի ընդունման, որը թեեւ շատ քաղաքական ուժեր հակասահմանադրական որակեցին, սակայն հետեւությամբ ընդունվեց: Մյուս բոլոր դեպքերում ՀԺԿ-ի նախաձեռնությունները եղել են անարդյունավետ:

Վերջերս, օրինակ, ՀԺԿ-ի բարձրացրած աղմուկը, կապված «Քաղաքացության մասին» օրենքի սահմանադրականության հետ, քաղաքական ներխորհրդարանական ուժերը պետական ուժերը պարզապես բանի տեղ չդրեցին: Իսկ խորհրդարանի նախագահությունն անտարբերության մատնեց ՀԺԿ-ի պահանջը՝ հրապարակավ ներկայացնել օրինագծի սահմանադրականության մասին Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունը: Չնայած պետականակերտ նշանակությանը, զարմանալի հետեւությամբ ընդունվեց նաեւ «Կուսակցությունների մասին» օրենքը, առանց հաշվի առնելու, որ որոշ հոդվածներ լուրջ վերանայման կարիք ունեն նախքան առաջին ընթերցմամբ ընդունելը: Որոշվեց հիմնական փոփոխությունները կատարել մինչեւ երկրորդ ընթերցումը:

Պատգամավորների վերաբերմունքը մազաչափ չփոխվեց նաեւ 2002 թ.-ի բյուջեի քննարկումների ընթացքում, երբ խորհրդարանական դահլիճում նախարարներն ավելի շատ էին, քան պատգամավորները:

ԱԺ մեծամասնության անդամ, փոխնախագահ Տիգրան Թորոսյանը, սակայն, ամեն կերպ փորձում էր արդարացնել պատգամավորների պահվածքը եւ բացատրել հանձնաժողովների նիստերին մանրամասն քննարկումներ անցկացնելով: Խնդիրն այն է, որ «օրենսդիր այրերը» բյուջեի հետ կապված բազմաթիվ առաջարկներ էին ներկայացրել եւ նիստին ներկա լինելով առնվազն կարող էին պարզել՝ կառավարությունը որքանո՞վ է պատրաստ ընդունելու առաջարկները:

ՀՅԴ-ն, որը վերջին օրշանում սերտացել է հանրապետականների հետ եւ փաստացի կիսում է կառավարության գործունեության պատասխանատվությունն՝ արդարացումն այլ կերպ է ներկայացնում: Ըստ Արմեն Ռուստամյանի՝ խորհված ու իյաբաբ ուսելով էլ կարելի է մտածել բյուջեի մասին, նայած թե ուսողներն ովքեր են: Կարելի է ենթադրել, որ եթե ուսողները կառավարության սատարողներն են, արդարացվում է քննարկումներին այդքան պասիվ մասնակցությունը: Այս պատգամավորի խորին համոզմամբ, միջանցքներում էլ կարելի է նման պետական կարեւորության խնդիրներ լուծելը, թեեւ ակնհայտ է, որ ԱԺ միջանցքներում շատ ավելի անձնական խնդիրներ են լուծվում:

Ինչեւէ. նստաշրջանն ավարտվեց, պատգամավորները բյուջեն ընդունելուց հետո կսկսեն Նոր տարվա կարիքները հոգալ: Նման կարգի կարիքներ նրանք կշարունակեն հոգալ մինչեւ փետրվար, երբ ԱԺ-ում կինչի հերթական նստաշրջանն ավետող ՀՀ պետական հիմնը:

Գոռ Աբրահամյան



ՇՈՒԿԱՅՈՒՄ

Մի քանի «միամիտ» հարցեր

Ի վերջո, ներկայումս սոցիալապես ապահո՞վ, թե՞ անապահով ժողովուրդ ենք հայերս: Այս հարցին դժվար է միանշանակ պատասխանելը, թեպետ, համոզված ենք, երկրի բնակչության սվար մասն այս հարցին վստահաբար կպատասխանի՝ անապահով: Այո, անապահով, եթե հաշվի առնենք աշխատավարձային «հիասքանչ» քաղաքականությունը Հայաստանում. աշխատավարձեր, որոնք թույլ չեն տալիս մարդկանց հոգալու անգամ նվազագույն կարիքները, կամ էլ թույլ են տալիս հոգալու ընդամենը այդ նվազագույն կարիքները, ասենք, միայն հարկերը վճարելով արդեն իսկ մնալու ձեռնունայն...

Եվ այդուհանդերձ... Իրական պատկերը նկատելիորեն այլ է, հակասում է պաշտոնական թվերին ու վիճակագրությանը: Ամբողջ կարող է ծառայել պարզ մի դիտարկում. շրջել երեւանյան խանութներով ու տոնավաճառներով, առեւտրի կետերով, որոնք ամեն քայլափոխի են՝ ապրանքատեսակներով գերբեռնված, այդ «շրջագայության» ընթացքում հետեւել գնորդներին ու նրանց գնումների ծավալին, եւ ակամա կմտորես: Իսկ այդօրինակ մտորումներն անխուսափելիորեն հանգեցնում են մեր շարադրանքի սկզբի հարցին. սոցիալապես ապահո՞վ, թե՞ անապահով ժողովուրդ ենք հայերս:

Առջեւում Ամանոր է, նախատոնական առեւտուրն ընթանում է լրիվ թափով: Հազարավոր դրամներ են «հալչում» առեւտրի կետերում՝ «վերածվելով» մեծ ու փոքր փաթեթների, դրամներ, որոնք ծախսելիս ես միայն զգում, թե որչափ անարժեք են: Երբեմն միամտաբար մտածում ես՝ ո՞ւմ են պետք այդքան խանութներն ու տոնավաճառները, այդքան ապրանքատեսակները, որոնց զգալի մասը գնային առումով թվում է անմատչելի, ինչպե՞ս է, որ դիմանում են իրենց պես այլ վաճառասների մրցակցությանն ու չեն փակվում, կարողանո՞ւմ են արդյոք իրացնել ապրանքի այդպիսի քանակությունը: Երեւի կարողանում են, երեւի սոցիալապես անապահով ժողովուրդն ի վիճակի է այդքանը գնելու: Այլ հարց է, թե ինչ միջոցներով...

Խնդիրն այն է, որ հայերս, պատմական ճակատագրի եւ այլազան հանգամանքների բերումով, չափազանց հնարամիտ ենք եւ կարողանում ենք, սոցիալապես անապահով լինելով, հնարավորինս ապահով ապրել: Ինչպե՞ս: Սրանք փոքրիկ «գաղտնիքներ» են, որ յուրաքանչյուրս էլ գիտի: Մեր սոցիալական ապահովության երաշխիքը մեծ մասամբ, ցավոք, մեր իշխանությունների եւ մեր գործատուների սահմանած «բարձր» վճարումները չեն, այլ՝ արտասահմանում բնակվող եւ այնտեղից այստեղ մեզ ֆինանսավորող ազգականբարեկամները, կամ՝ այսպես կոչված կողմնակի եկամուտները եւ այլ զարտուղի ճանապարհները: Այսպիսի ժողովուրդը չի կորչի: Երեւի հենց այս հանգամանքն էլ յուրատեսակ «փափուկ բարձ» է բոլոր նրանց համար, ովքեր պատասխանատու են ժողովրդի առջեւ...

Անուշ Բաբայան

«Եվրոպայի ակտիվացմանը մեր տարածաշրջանում, մասնավորապես ԼՂ խնդրում պիտի լուրջ վերաբերվել»

Սկիզբը էջ 1

Սա է թերեւս առաջին դիտարկումը երկրորդը՝ ընդհանուր առմամբ [illegible]ություն կար, որ Գերմանիան մասնակիցների դիրքորոշումն ամփոփում էր միջազգային մի այլընտրանքային քաղաքականություն: Մինչ այժմ ԼՂ հակամարտության կարգավորման գործում ունեցել ենք ԵԱՀԿ Մինսկի խումբը, որ տարիներ շարունակ, արդեն բոլորիս հայտնի սկզբունքներով առաջ է գնում: Բայց Եվրոպայում կարծես ձեւավորվում է այլ սկզբունքների վրա հիմնված այլընտրանքային քաղաքականություն այս խնդրում: Այդ սկզբունքներից առաջինը ռացիոնալիզմն է: Կազմակերպիչները քննարկումներին էին հրավիրել փաստորեն հակամարտության գոտի տարածքների կոնկրետ ներկայացուցիչներին: Բնութագրությունները, ձեւակերպումները նրանց քիչ էին հետաքրքրում:

Եվրոպան կամենում է Կովկասում ծանրության նոր կենտրոն ստեղծել: Գերմանիան առաջին փորձերն է անում: Կոնֆերանսի սկզբում Գերմանիան ներկայացնողները՝ խորհրդարանականներ եւ այլք, անգամ առաջարկ արեցին հավաքի արդյունքների ամփոփմամբ մի դիմում հղել ԵԱՀԿ Մինսկի խմբին՝ կոչելով նրան ԼՂ խնդրում փոխել աշխատանքի մեթոդը, մասնավորապես փորձել ոչ թե լուծել, այլ կարգավորել: Ընդ որում, կարգավորումը նկատի է առնում տեւական, ծանրակշիռ ընթացք: Բայց ոչ մի երկրի ներկայացուցիչ, բացի մեզանից, իր խոսքում չանդրադարձավ առաջարկին, եւ դիմումն ի վերջո չպատրաստվեց:

– Դուք հատկապես ի՞նչ շեշտադրումներ արեցիք Ձեր ելույթում:

– Նշեցի, որ վիրաբուժական միջամտության մեթոդով խնդրի լուծումն անհնար է: Հետխորհրդային տարիների ընթացքում ի վերջո տարածաշրջանում ձեւավորվել է մի հավասարակշռություն, երբ գոնե պատերազմ չկա: Այսինքն՝ գրանցվել է ինչ-որ զարգացում: Եվ նույն՝ ասիճանական զարգացման ճանապարհով էլ պիտի շարունակել հակամարտային իրավիճակը փոխել ոչ հակամարտայինի: Սրա իրականացման ձեւը կարող է լինել տարածաշրջանում առաջընթացային փոփոխություններին միջազգային հանրության աջակցությունը: Եթե տարածաշրջանում ներկա որեւէ սուբյեկտի առաջընթացը պատշաճի միջազգային հանրությունը, ռեգրեսիվ տարրերն ինքնաբերաբար կմեռնեն: Այլապես, այստեղ որեւէ բան փոխելու այլ տարբերակ չեմ տեսնում:

– Նկատի ունեք, որ տարածաշրջանի պետությունները, սուբյեկտները զարգանում են այնքան, որ գնում են ինքնակարգավորման եւ որպես ինքնակարգավորվող համակարգ լուծո՞ւմ եղած խնդիրները:

– Դա առաջարկում էին կոնֆերանսի գերմանացի կազմակերպիչները, ինչը շեշտում է նաեւ Հայաստանը՝ կոչելով Ադրբեջանին տնտեսական հարաբերությունների զարգացման: Այս համատեքստում ես առաջարկեցի տարբերակ, երբ Եվրոպան մեր տարածաշրջանում կանգնում է իրապես պետականություն կառուցող սուբյեկտի կամ սուբյեկտների կողքին: Այս դեպքում կլանային համակարգով երկրներն էլ ի վերջո ստիպված կլինեն միանալ առաջընթացին եւ, ասենք, հինգ տարի հետո մենք այսօրվանից բոլորովին տարբեր պատկեր կունենանք: Բելգիայում Ադրբեջանի ներկայացուցիչներին հայտնվեց նաեւ ԼՂՀ-ի պատրաստակամությունն իրենց երկրի հետ բազմաբնույթ, ասենք, միասնական անվտանգության հարցերի շուրջ քննարկումներ կազմակերպելու առումով: Բայց, ցավոք, կովկասում պատմականորեն ինտեգրացիա չի եղել, այսօր էլ չկա, եւ ոչ ոք չի ձգտում դրան:

– Այսինքն չե՞ք հավատում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վստահության քայլերի ձեռնարկմանը, տնտեսական, մշակութային համագործակցություն սկսելուն, ինչը միակ նոր մասնիկն էր ԵԱՀԿ ՄԽ՝ տարածաշրջան կատարած վերջին այցի ժամանակ արված հայտարարություններում:

– Չեմ կարծում, որ այդ քայլերը ռազմավարական նշանակություն ունենան: Վստահության հաստատման միակ ճանապարհը ընդհանուր շահերի ապահովումն է՝ գեթ մեկ ռազմավարական խնդրի շուրջ: Այլապես, որքան էլ երկու կողմերի գրողները, լրագրողները հանդիպեն...

– Այդ դեպքում, կարելի՞ է ասել, որ Մինսկի խմբի միջնորդական առաքելությունը փակուղում է հայտնվել:

– Այդպիսին էր Գերմանիայի ներկայացուցիչների տեսակետը: Հետաքրքրական էր, որ նման դիրքորոշում հայտնեց նաեւ ԼՂ խնդրով Ռուսաստանի նախկին բանագնաց Վլադիմիր Կազիմիրովը:

Նա Մինսկի խումբը հայտարարեց ոչ լեգիտիմ, որը պարզապես ուղղորդեց է Մինսկի կոնֆերանսի մանդատը: Ըստ ոուս ներկայացուցչի, այդ խումբը դարձել է գերտերությունների շահերը պաշտպանելու մեխանիզմ:

Բայց բաց տեքստով հայտարարություն, որ ԵԱՀԿ ՄԽ-ն փակուղում է, չարվեց որեւէ մեկի կողմից: Ի վերջո սա ընդամենը մեկ կոնֆերանս է, անշուշտ, հետաքրքիր, քանզի մի երկրի հովանու ներքո էր, որի դիրքորոշումն այսօր չափազանց հետաքրքրում է բոլորին եւ կարող է նորություն բերել:

– Այնուամենայնիվ, ամփոփելով կոնֆերանսում եվրոպական երկրների ներկայացուցիչների տրամադրությունները, հնարավոր համարո՞ւմ եք ԼՂ խնդրի կարգավորման անցումն այլ ֆորմատի:

– Եվրախորհրդի ակտիվացումը մեր տարածաշրջանում եւ մասնավորապես ԼՂ խնդրի շուրջ նկատելի է: Սրան պիտի լուրջ վերաբերվել: Քանի որ Եվրոպական մոտեցումն, ինչպես արդեն նշեցի վերեւում, տարածաշրջանի երկրների տեսակետների անտեսման սկզբունք ունի: Եվ գուցե Եվրոպան գա մեկ նախագծի, որ ինչ-որ պահի հետաքրքրի նաեւ Մինսկի խմբին:

– Իսկ Ղարաբաղն ի՞նչ է կամենում՝ անկախությո՞ւն, թե՞ վերամիավորում Հայաստանին:

– Ղարաբաղը ձգտում է անկախության, եւ մենք զգում ենք, որ այդ ճանապարհն առավել ընդունելի է եւ ճիշտ ռազմավարական տեսակետից: Այլ խնդիր է, որ հայ հասարակության շրջանում վերամիավորման խնդիրը շարունակում է լայնորեն քննարկվել:

ԴԵՄՔԵՐ

Բագրատի ցանած հատիկները չեն մեռնի

ՁՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

Դադարեց բաբախել Բագրատ Ուլուբաբյանի սիրտը: Նրա մահը տանջալից երկար տեւեց: Ամեն անգամ այցելելով նրան եղվարդում, որտեղ մշտակյաց աղրում էր Բագրատը, ես աճող ծանրություն էի զգում՝ այն գիտակցությունից, որ իմ իմաստուն ուսուցիչն ու հավատարիմ բարեկամը մեռնելու է, ինչպես ասում են, եթե ոչ այսօր, աղա վաղը: Հիպերտոնիկ հիվանդության ծանր տեսակ, որ ուղեկցվում էր ոչ պակաս ծանր ախտանիշների մի ամբողջ փնջով: Նա միանգամայն առողջ մարդու տեսք ուներ միայն արտաքուստ. առանց կնճիռների, առանց աչքերի տակ այտուցների գեղեցիկ դեմք, ճերմակ ատամնաշար, ինչպես ընդունված է ասել, հոլիվուդյան ժպիս: Մարդ, որ իր կյանքում երբեք չի նստել սոմատոլոգիական բազկաթոռին: Չի լսել բոր մեքենայի սարսռեցուցիչ բզզոցը: Երեսուներկու ատամներն էլ առողջ էին: Չէր խամրել նույնիսկ ատամների ճերմակաթույր էմալը: Սակայն նենգ հիվանդությունը երկար տարիներ շարունակ մաշում էր նրան ներսից: Այս վերջին տարին նա ընդունում էր միայն ամենա-ամենամտերիմներին: Այնպես որ մենք բոլորս՝ հարազատներն ու մտերիմները, աշակերտներն ու գինակիցները, սպասում էինք տագնապալից ուրով՝ մեզ թույլ չտալով բարձրաձայն արտահայտվել այդ ցավալի թեմայով: Եվ այնուամենայնիվ, բոլոր հարազատներից ու մտերիմներից, աշակերտներից ու գինակիցներից ես, լինելով բժիշկ, խաչ գիտեի, որ Բագրատի սիրտն ամեն րոպե կարող է կանգ առնել:

2000 թ. դեկտեմբերի 9-ին, երբ լրանում էր նրա յոթանասունհինգ տարին, Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի շենքում, դպրոցական դասարանի պես մի ոչ մեծ, ցուրտ՝ ինչպես ծմեռային տունդրան, լսարանում հավաքվել էին, թերեւս, ամենահավատարիմ բարեկամներն ու հոբելյարի երկրպագուները, նշելու տարեդարձը, որ, որպես օրենք, նման դեպքերում նշվում է բավական շքեղորեն: Եղյամապաս պատուհաններով սառը սենյակում նստած, ես, ցավոք, մտածում էի, թե իսկապես չկա չարիք առանց բարիքի: Հոբելյարը ողջ է, բայց չգիտի նույնիսկ, որ լրացել է իր յոթանասունհինգ տարին: Մտածում էի նաեւ, որ առանձնապես զարմանալի բան չկա: Դա մեզ համար սովորական բան է: Չէ որ մենք տառապում ենք դամբանականամոլությամբ հանգուցյալների հանդեպ սիրով: Պատահական չէ, որ հնուց ի վեր պահպանել ենք «Գնա մեռիր, ապրի սիրեմ» թախծալի հեգնանքը: Սակայն արհամարհելով ինձ համակող տխուր մտքերը, ուշադիր ունկնդրում էի Բագրատի՝ ելույթ ունեցող գործընկերների խոսքը՝ նվիրված, այսպես ասած, հոբելյանին: Մենք խոսում էինք լրացնելով մեկս մյուսիս, ֆանդակագործի նման կերտելով դարաբաղյան շարժման առասպելական նախագուշակի ամբողջական կերտարը:

Դրանից 12 տարի առաջ հետխորհրդային ամբողջ տարածքում շատ էին խոսում ԽՍՀՄ առաջին եւ վերջին նախագահ Մ. Գորբաչովի հրապարակած «Կյանքը եւ ռեֆորմները» կոպիտալ երկհատորյակի մասին, որում հեղինակը վիթխարի երկրի տապալման սկիզբը նշում է «Դարաբաղյան ժայթքում» արտահայտությամբ: Իհարկե, երկրի առաջնորդը եւ պետականական նախաձեռնողը որոշակիորեն խորամանկում էր՝ մի ամբողջ կայսրության անկումը կապելով պստլիկ Դարաբաղի հետ: Թեեւ, որ մտածում ես «Դարաբաղյան ժայթքում» տերմինը ինքնին բնորոշ է եւ ստույգ: Իսկ բիկֆորդյան լարը տասնյակ տարիներ շարունակ ձգվել էր դեպի այդ ժայթքումը: Եվ առասպելական ութսունութ թվականը նույնպես ունեցել է իր նախնիներ-տարիները, որոնցից ամենածանրակշիռը պատմության մեջ մտավ որպես «Բագրատ Ուլուբաբյանի տարի» 1965 թվականը: Այդ ժամանակ ես, գտնվելով Կամչատկայում, կանոնավորապես նամակներ էի ստանում Ստեփանակերտից. գրում էր հորեղբայր Անդրանիկ Զաքարյանը, որն ամեն անգամ ծրարի մեջ դնում էր ոչ միայն լրագրերից կտրված հոդվածներ, այլեւ ձեռագրով արտագրված հայրենասիրական բանաստեղծություններ, կուսակցության եւ կառավարության ղեկավարներին հասցեագրված դարաբաղյան գործիչների ուղերձներ: Ամբողջացնող էր այն հանգամանքը, որ ուղերձների հեղինակները բացեիբաց գրում էին Դարաբաղում տիրող ծանր վիճակի, մարզի հայ բնակչության ցեղասպանության, պատմական հայկական մարզը Մայր հայրենիքին միացնելու անհրաժեշտության մասին: Կարդալով այդ նյութերը, ես ինձ բռնում էի այն մտքի վրա, որ «ազգային ինքնագիտակցություն» արտահայտությունը, պարզվում է, միանգամայն իրական, շոշափելի իմաստ ունի: Դա նշանակում է ոչ միայն եւ ոչ թե պարզապես ապրել կարոտելով հայրենիքը, որ զբաղվում է վտարանդիների ու փախստականների հայրենաբաղձությամբ, այլ՝ քո ժողովրդի պայքարին գործուն մասնակցություն ունենալու իմաստավորմամբ եւ ըմբռնմամբ: Ես մի շնչում կարդում էի Բագրատ Ուլուբաբյանի եւ նրա գործակիցների գրած բազմաթիվ նամակները: Հիշեցնենք, որ դա մի ժամանակ էր, երբ արդեն սառցապատվել էր Խրուշչովյան հալոցքը, երբ համամասնական ծայն սուսլով-բրեժնեւյան դիրքորոշման՝ երկրում միահամուռ եւ ակտիվորեն, մեղմ ասած, լռում էին ԽՄԿԿ 20-րդ եւ 22-րդ համագումարների որոշումների մասին, երբ սկսվել էր Ստալինի եւ ստալինականության անթաքույց եւ գործնական վերականգնումը, երբ սկսվել էին Սինյավսկու, Դանիելի եւ այլ, այսպես կոչված, այլախոհների, այսպես կոչված, հակադիսիդենտական գործընթացները: Եվ հանկարծ նման ռեպրեսիաների ժամանակաշրջանում Արցախից Մոսկվա, ավելի ճիշտ՝ Կրեմլ է գնում ուղերձ ուղերձի հետեւից, որոնցում պատմվում է, որ քսանական թվականներին խոստացված Դարաբաղի «լայն ինքնավարությունից» հետք անգամ չի մնացել, թե ազատվելով բնիկ հայ բնակչությունից Նախիջեւանում, Գարդմանում եւ պատմական Հայաստանի այլ տարածքներում, հիմա, ազգայնականների ու այլախոհների դեմ պայքարի ֆոնի տակ, անցել են Դարաբաղին:

Դժվար չէ կռահել, որ այդ ժամանակ սկսված շարժման անվիճելի լիդերը Բագրատ Ուլուբաբյանն էր: Հորեղբայր Անդրանիկն այն ժամանակ ինձ գրում էր, որ Բագրատը ոչ միայն գրող է, լրագրող («Խորհրդային Դարաբաղ» թերթի գլխավոր խմբագիրն էր), պետական գործիչ, ոչ միայն քաղաքական հայտնի ուղերձների հեղինակն է, այլեւ, որ գլխավորն է, նա «իսկական գործնական մարդ է»: Միայն հետո ես հասկացա, թե ինչ էր նշանակում այդ «գործնական» բառը: Ծանոթանալով մարզային կուսակցական պլենումի նյութերին, որոնցում «մերկացրել» էին ուլուբաբյանականներին (նրանք տասներեքն էին), ես ընդգծում էի այն մասերը, որտեղ պլենումի ամբիոնից ելույթ ունեցողները նշում էին, թե Բագրատն ինչպես է անձամբ շրջել գյուղ առ գյուղ՝ կազմակերպելով սոցրագրահավաքի գործը:

Քառասունհինգ հազար դարաբաղցիներ ստորագրել էին այն նամակը, որում նրանք պահանջում էին Արցախի միացումը Հայկական ԽՍՀ-ին: Դա Խորհրդային Միությունում առաջին հանրաքվեն էր կամ, եթե կցանկանաք, պլեբեսցիտը: Ոչ Բագրատ Ուլուբաբյանը, ոչ էլ նրա գինակիցները միամիտ մարդիկ չէին: Նրանք հրաշալի հասկանում էին, թե ինչ է տպասում իրենց մի հանրապետությունում, որի ՊԱԿ-ի նախագահը հրապարակայնորեն հայտարարում է. «Ես օրենք-մորենք չեմ հասկանում, ինձ համար գոյություն ունի միայն ալլահը՝ դա կուսակցությունն է»: Այն օրը, երբ մենք նշում էինք Բագրատ Ուլուբաբյանի յոթանասունհինգամյա հոբելյանը, հիշեցիք եւ այն մասին, որ տասներեք ուլուբաբյանականների հետ տուժեցին ոչ միայն նրանց ընտանիքները, այլեւ հարյուրհազարավոր այլ ընտանիքներ: Հայոց երկրում վախ ու սարսափ էին տարածում, որպեսզի ուրիշները չգայթակղվեն: Սակայն կուսակցությունը, որը ալիեւները համարում էին ալլահ, խորհրդային սխալվեց: Բագրատի ցանած սերմերը Արցախի լավ մշակված մայր դաշտում փարթամորեն ծլարձակեցին: Թերեւս պատահական չէ նաեւ, որ գրող Բագրատ Ուլուբաբյանի հրաշալի վիպակներից մեկը հենց այդպես էլ կոչվում է «Հատիկը չի մահանում»:

Վաքսունականների դարաբաղյան շարժման լիդերը Արցախում ամենաշատ ընթերցվող արձակագիրն ու հրապարակախոսն էր: Չէ որ քաղբյուրոյին հասցեագրված բազմաթիվ ուղերձների հեղինակն այդ ժամանակ արդեն տասնյակ վիպակների ու պատմվածքների, վեպերի ու դրամատուրգիական ստեղծագործությունների հեղինակ էր: «Հայրենի հող», «Մարդը», «Այգեստան» եւ «Հատիկը չի մահանում» գրքերում ոչ միայն շնորհալիորեն, այլեւ արհաբար գրանցված էր Դարաբաղի ցավի ողջ ախտանշաբանությունը եւ դիֆերենցված ախտորոշումը. նրան որոշակիորեն սպասում էր Նախիջեւանի եւ Գարդմանի ճակատագիրը: Բագրատի ոչ մի ստեղծագործություն աննկատ չանցավ: Դրանք գրեթե բոլորն արժանացել են ոչ միայն ընթերցողի, այլեւ գրականագետության բարձր գնահատականին: «Թարթար» վիպակի համար (որտեղ լույս է տեսել «Վիպակ իմ ընկերոջ մասին» անունով) հեղինակն արժանացել է միութենական հեղինակավոր «Դրուժբա նարոդով» մրցանակի: Մեծ հետաքրքրությամբ ընդունվեց ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում նրա «Զրուցարան» գիրքը (Հայաստանի պատմության եւ մշակույթի մասին զրույցների ժողովածուն): Ընթերցում էինք մեր ժողովրդի պատմության զարմանալի էջերի մասին՝ մեզ համար պատասխաններ գտնելով բոլորիս խորապես հուզող բազմաթիվ հարցերին: Այդ իսկապես հանրագիտարանային աշխատության համար Բագրատն արժանացավ Հայաստանի գրողների միության հատուկ մրցանակին:

Անդադրում սխրագործի եւ Արցախի պատմության անկրկնելի սոխակի մեջ հետաքրքրությամբ համատեղվում էին գրողն ու պատմաբանը, հրապարակախոսն ու քննադատը: Նա պարզապես ակնարկներ ու մենագրություններ չէր գրում Արցախի պատմության մասին: Որպես իսկական գիտնական՝ դիսերտացիա պաշտպանեց մի թեմայով, որը նա ընդունել էր որպես Արցախի տված սոցիալական պատվեր: Թեկնածուականը՝ «Արցախի պատմությունը հնագույն ժամանակներից մինչեւ 10-րդ դար», դոկտորականը՝ «Խաչենի իշխանության պատմությունը (10-16-րդ դարեր)»: Կարդալով «Ոսկե շղթա» անունով այդ յուրօրինակ հետազոտական աշխատությունը, մենք բոլորս, ովքեր պատրաստվում էին 1988 թվականին ընդառաջ, սթափորեն պարզեցինք մեզ համար, որ մեր աշխարհաքաղաքականությունը ստեղծված պայմաններում, երբ արդեն ի հայտ եկան ԽՍՀՄ-ի անկման, թվում է, աննկատելի նշանները, որ երկրի քարտեզի վրա մեր աշխարհագրական դիրքն ամենեւին էլ անհույս չէ, ինչպես կարծում էին մեր նախնիները: Ավելին՝ մեզ համար պարզեցինք, որ հնուց եւ իմաստուն քաղաքականության դեպքում մենք կարող ենք մեր բարձունքներից պարզորոշ

ԴԵՄՔԵՐ

տեսնել երջանիկ հեռանկար:

Ծանր հիվանդ մեր ուսուցիչը չէր դադարում աշխատել նաեւ մեր վզին փաթաթած Արցախյան պատերազմի տարիներին, որը նորագույն պատմության մեջ մտավ որպես 20-րդ դարի Ավարայր: Հենց որ Ստեփանակերտում եւ Երեւանում ժողովուրդը դուրս եկավ հրապարակները՝ պահանջելով Արցախի միավորումը Մայր Հայաստանին, հենց որ Արցախում բարձրացված ազատության դրոշն իրենց ձեռ առան աշխարհի բոլոր հինգ մայրցամաքների սփյուռքում, Բագրատը, ինչպես ոչ այլ ոք, հստակ գիտակցելով, որ ութսունութը հանդիսանում է տասնութի եւ վաթսունհինգի տրամաբանական եւ օրգանական շարունակությունը, բոլոր գործերը մի կողմ դրեց եւ ծեռնարկեց գիտա-հրապարակախոսական մի աշխատություն, որում անհրաժեշտ մեկնաբանություններ էր տալիս բոլոր իրադարձություններին, որոնք նախորդել էին Ղարաբաղյան շարժման այդ նոր փուլին: Գիրքը կոչվում է «Արցախյան պայքարը հանուն գոյատեւման» (Արցախի պատմությունը 1918 թվականի գարնանից մինչեւ 1988 թվականի փետրվարը): Զուգահեռաբար կրկին կատարելով նորաթուխ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական պատվերը, Ուլուբաբյանը դասագիրք գրեց Արցախի պատմության մասին՝ ուսումնական հաստատությունների համար:

Մեր ժողովուրդը երբեք չի մոռանա հայ պատմաբանների ու հրապարակախոսների մի ամբողջ կաճառի գործած սխրանքը, որոնք հեռեւողականորեն ու վճռականորեն մերկացնում էին թուրքական եւ ադրբեջանական կեղծ գիտնականներին եւ հատկապես ոչ անհայտ բունիաթովների, զայուշեւների, մամեդովների, ախունդովների եւ նման այլոց հակագիտական մեթենայությունները: Միայն Աստծուն է հայտնի, թե այդ մարտնչող կեղծարարները որքան ուժ ու եռանդ են խլել Բագրատ Ուլուբաբյանից, որը միշտ գտնում էր, թե գաղափարական եւ տեղեկատվական դաշտը մարտադաշտ է: Հաճախ էր սիրում կրկնել. «Մեր ժամանակներում պատմաբանը պետք է զինվոր լինի»: Եվ մեկ անգամ չէ, որ Բագրատին սա [illegible] եմ զինվորի դերում: Մոտավորապես յոթանասունականների կեսերին Ադրբեջանի կոմկուսի այն ժամանակվա առաջին քարտուղար Հ. Ալիեւի ղեկավարությամբ ԽՍՀՄ բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովը պարտադրեց Ուլուբաբյանին՝ երկու տարի առաջ արդեն պաշտպանած դոկտորական դիսերտացիան նորից պաշտպանել: Այն ժամանակ նույնիսկ նման տերմին գոյություն ուներ՝ «վերապաշտպանություն»: Ալիեւը պահանջեց նաեւ, որ ադրբեջանական գիտնականները մասնակցեն, այսպես կոչված, վերապաշտպանությանը: Ինձ բախտ վիճակվեց այդ օրը Մոսկվայում լինել Բագրատի կողքին: Եվ տեսա, թե ինչպես իմ ուսուցիչը տառացիորեն ջախջախեց բախվեցի «փորձագետներին»: Տարիներ անց ես մամուլում հրապարակեցի իմ որոշ գրառումները, որ կատարել էի Բագրատի եւ նրա բոլոր բարեկամների համար այդ երջանիկ օրը: Այժմ կցանկանայի մի դրվագ մեջբերել. «Բագրատի տրամադրությունը բարձր էր: Չնայած շատ էր հուզվում, բայց պատասխանում էր բոլոր հարցերին աշխուժորեն եւ նույնիսկ սրամտելով: Երբեմն քրքիջ էր բարձրանում, ասես խոսքը ոչ թե պատմության ծանծրալի էջերի մասին էր, այլ Արկադի Ռայկինի ելույթների: Լսարանն այնքան բուռն ու այնպիսի հեգնանքով էր արձագանքում Բախվի՝ ինչպես նրանց անվանել էին, փորձագետների ռեպլիկներին, որ նախագահը հարկադրված էր լինում ցուցափայտով տկտկացնել ջրով լի գրաֆինին: Վերջապես նախագահն ինքը չդիմացավ եւ, տարակուսանքը չթաքցնելով, հարցրեց. «Մի՞թե այդ բազմախոս ու միաժամանակ տարօրինակ քննադատության մեջ մի որեւէ էական եւ, որ գլխավորն է, դիսերտանտի համար օգտակար բան չկա, որ նա հաշվի առներ Ղարաբաղի պատմության վերաբերյալ իր հետագա աշխատանքներում»: Անսպասելիորեն, ասես պայմանավորված, մեկը մյուսի հետեւից տեղերից վեր էին թռչում մոսկովյան պատմաբան-գիտնականները եւ, միմյանց ընդմիջելով, վրդովմունք արտահայտում դիսերտացիայի վերապաշտպանության հենց փաստի դեմ: Ինչ-որ մեկը բավական բարձրաձայն ասաց. «Հարգելի փորձագետների խոսքի մեջ ոչ միայն էական, այլեւ մարդկայնորեն տանելի որեւէ բան չկա»: ՎԱԿ-ը միաձայն հաստատեց Ուլուբաբյանի դոկտորական դիսերտացիայի պաշտպանության մասին իր նախկին որոշումը...»:

Այդ օրը ինձ համար մեկընդմիշտ պարզեցի, որ ռազմաճակատային դիրքերը պետք է փորել ոչ միայն արցախյան հողում: Դա հայ պատմաբանի հաղթանակն էր, որ իսկական նախակարապետ դարձավ մեր ապագա հաղթանակների համար ղարաբաղյան ռազմաճակատում, որտեղ որոշվում էր ոչ միայն եւ ոչ այնքան Արցախի եւ արցախցիների ճակատագիրը, որքա՛ն եւ նույնքա՛ն Հայաստանի եւ հայության ճակատագիրը:

Սարսափելի ոչինչ չկա, որ ժողովրդի մեջ ճանաչում գտած տաղանդավոր գիտնական-պատմաբանին, Ղարաբաղյան շարժման տեսաբանին եւ գործնական տղամարդուն, տասնյակ կարիքավոր մենագրությունների հեղինակին ակադեմիկոս չընդունեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայում: Նա ինքը, արհամարհելով սեթեւեթանքը, այդ առիթով ասաց, որ լրացրեց դեռ անմահություն գնացող Պարույր Սեւակի, Հովհաննես Շիրազի, Ջոն Կիրակոսյանի հոյակապ շարքը, որոնց առաջ փակել էին ազգային ակադեմիայի դռները: Եվ իսկապես, սարսափելի ոչինչ չկար: Որքան ավելի սարսափելի էր այն, որ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործչի հանդեպ սառը վերաբերմունքը պահպանվել է նույնիսկ նրա մահից հետո: Չգործեց նույնիսկ մեր ժողովրդի մեջ հայտնի տխուր հեգնանքը «Գնա մեռիր, արի սիրեմ»: Հայրենական բազմաթիվ թերթեր ընդհանրապես ոչ մի տող չտպագրեցին հայ պատմաբանի վախճանվելու մասին, որն ապրում էր իսկական հայրենասերի անեղծ սկզբունքով. «Հանուն հայրենիքի քիչ է արված, եթե չի արվել ամեն ինչ»: Լռեցին նաեւ բազմաթիվ հեռուստաալիքներ, որի հետեւանքով հանրապետության բնակչության մեծ մասը չի իմացել ոչ միայն հուղարկավորման օրը, այլեւ հենց մահը: Բագրատի հին բարեկամ Ալեքսեյ Մաստվեյի Կիրակոսյանը տարակուսանք է հայտնել այն առթիվ, որ ղարաբաղյան շարժման հանրաճանաչ առաջնորդի հուղարկավորմանն արժանավայել չէր ներկայացված ինքը Ղարաբաղը:

Ի՞նչ արած, ուր է խոսել այդ մասին, հարկավոր է, ինչպես Բագրատն էր ասում, մտածել վաղվա մասին: Նա ինքը քանիցս կրկնել է. «Կործանարար երկպառակությունը կանխելու համար հարկավոր է ամեն ինչից առաջ սովորել նրել մեկ մեկու, հատկապես այն ժամանակ, երբ պատերազմ է գնում»: Մեր ուսուցչի հանդեպ մեր հարգանքն էլ առաջին հերթին մեզ է հարկավոր եւ ոչ թե նրան: Խոսքը վերաբերում է պարտքի կատարմանը մի մարդու առաջ, որի անվան հետ նախ եւ առաջ կապված է ինչպես մեր ժողովրդի ազգային ինքնագիտակցության փրկարար գաղափարը, այնպես էլ մեր շատ հաղթանակներ:

2002 թվականի հունվարի 1-ից սկսվում է կանխիկ **եվրոյի շրջանառությունը**: Այդ առիթով **Հայներարտբանկն առաջարկում է**

եվրո զամբյուղի մեջ մտնող արտարժույթներով ցանկացած բանկային գործարք, այդ թվում՝

- կանխիկի անսահմանափակ ընդունում,
- ավանդների եւ հաշիվների մնացորդների փոխարկում եվրոյի՝ եվրո հաշիվների ավտոմատ եւ անվճար բացումով,
- հատուկ հաշիվների բացում, որոնց մնացորդների նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ՝ տարեկան 6 տոկոս տոկսադրույքով,
- փոխարկում եվրոյի կամ ԱՄՆ դոլարի՝ միջազգային շուկաներում գործող փոխարժեքներով եւ առանց լրացուցիչ վճարի,
- փոխանցումների կատարում եւ ստացում,
- եվրոյի մուտքի հետ կապված ցանկացած տիպի տեղեկատվության եւ խորհրդատվության անվճար տրամադրում:

Այցելեք մեզ
Վազգեն Սարգսյան 2 հասցեով
կամ զանգահարեք՝
56 11 11:

AMERICAN EMBASSY
NATIONAL HIRE VACANCY ANNOUNCEMENT

OPENING DATE: December 4, 2001
CLOSING DATE: December 18, 2001
POSITION TITLE: Administrative Clerk
GRADE: FSN-6

MAJOR DUTIES AND RESPONSIBILITIES:

Under the general supervision of the Public Affairs Officer the incumbent is responsible for the overall management of public diplomacy resources and activities.

- Prepares obligating documents, including payment vouchers for grants and representation vouchers for submission to B&F.
- Oversees administration of Post's Small Democracy and GOE Grants programs. Evaluates incoming grant proposals. Advises Cultural Exchange Coordinator and PAO on grante organization backgrounds. Advises potential grantees regarding problems with the applications and recommends solutions. Write grants/cooperative agreements for PAO signature, in accordance with relevant procurement regulations. Oversees disbursement of grant funds. Ensures unspent funds are returned to Post or properly reprogrammed. Submits grant registers. Maintains inventory of granted equipment.
- Coordinates PD office Yerevan support for English language teaching activities in Armenia.
- Assits in implementation of the post book translation program.
- Provides program and logistic support for all non-FSA and non-ECA based projects.

QUALIFICATIONS:

- University degree is required. Further study or training in business administration, financial management, or related field is highly desirable.
- Three to five years experience in administration of finance is required, some experince in the fields of communication, education or culture desirable.
- Level IV (fluent) in written and spoken English as well as excellent level of written and spoken Armenia and Russian is required.

WHO MAY APPLY: Unlimited.

HOW TO APPLY: Please submit a detailed resume or an Applicaton for Federal Employment (SF-171), or an Optional Application for Federal Employment (OF-612) which are available from Amerivan Embassy guard office located at number 18, Marshal Bagramian street. Deposit the completed application form or resume in the application box located in the Embassy guard office.

Էկոլոգիական մաֆիա

Հորինվա՞ծ, թե՞ իրականություն

Բացահայտում առաջին

«Հայաստանի բնական ռեսուրսների բալանը համեմատելի է էներգետիկ մաֆիայի բալանի հետ», 2001 թ.-ի մայիսի 18-ին ասուլիսում հայտարարեց ՀՀ ոստեական գույքի կառավարման փոխնախարար Վանյա Մխիթարյանը: Իր ուսումնասիրությունների արդյունքում փոխնախարարը, որը զբաղված էր բնական ռեսուրսների կառավարման ոլորտով, պարզել էր, որ Հայաստանում 90-ական թթ.-ից ի վեր կատարված «էկոլոգիական բալանը»

Վանյա Մխիթարյան

հասնում է տարեկան մոտ 50 մլն դոլարի, չկա բնական ռեսուրսների կառավարում, վտանգված է երկրի էկոլոգիական անվտանգությունը: Ոլորտում տիրող անարխիայից, բալանից, անօրինականությունից կառավարությունը ոչ միայն անտեղյակ է, այլ նույնիսկ՝ մասնակից: **«Բնական ռեսուրսների ոլորտում ավելի մեծ գումարներ են գրպանվում, քան էներգետիկ ոլորտում», հայտարարում էր Վ. Մխիթարյանը**: Նա իբրեւ լուծում պահանջում էր կառավարության հրաժարականը (թեեւ ըստ էության ինքը հրաժարական տվեց), նաեւ՝ ստեղծել բնական ռեսուրսների կառավարման կենտրոնացված համակարգ, վարչապետին կամ կառավարությանը կից բնական ռեսուրսների հիմնահարցերի հանձնաժողով ու ազգային ծրագիր:

Նախկին փոխնախարարի սենսացիոն հայտարարություններով, կարելի է ասել, սկսվեց էկոլոգիական ոլորտում բացահայտումների շրջան, որը շարունակվում է մինչ օրս:

Բացահայտում երկրորդ

Հունիսի 13-ին ՀՀ արդյունաբերության ու առեւտրի նախարարի խորհրդական, պրոֆեսոր Ստեփան Բաբայանը հրապարակեց փաստեր արդեն կոնկրետ մի ոլորտի՝ ոչ մետաղական հանքերի (քար, ավազ եւ այլն) շահագործման ու շինանյութերի արտադրության վերաբերյալ: Այստեղի սվերային շրջանառությունը նա գնահատում էր տարեկան մինչեւ 28–48 մլն դոլար: Նա պարզել էր՝ ոչ մետաղական հանքերի «վայրենի շահագործման» հետեւանքով հանքավայրերի օգտակար

Ստեփան Բաբայան

հանածոների մոտ 90 տոկոսը դառնում է թափոն: Ինչ վերաբերում է շահագործողներին, առա դրանց միայն 25–30 տոկոսն է աշխատում օրինական դաշտում: **Իր ուսումնասիրությունների արդյունքում Ս. Բաբայանը հայտարարեց, որ քարհանքերի արդյունահանումն ու շինանյութերի սպառումը հանրապետության ամենակլանայնացված ոլորտներից է**: Առաջարկվում էր բյուջեից համապատասխան գումարներ հատկացնել (մոտ 20 մլն դրամ) արդյունաբերության ու առեւտրի նախարարության երկրաբանական հետազոտությունների ու մարկետինգերական չափումների վարչությանը, որպեսզի հանքերի մասնագիտական չափագրող այդ մարմինը տարեկան երկու անգամ՝ տարեսկզբին ու տարեվերջին, չափի օգտակար հանածոների շարժը:

Բացահայտում երրորդ

Հուլիսի 23-ին ՀՀ բնապահպանության նախարար Մուրադ Մուրադյանը «Ազատություն» ռադիոկայանով արեց ոչ պակաս սենսացիոն հայտարարություններ ու հաջորդ օրը գնաց «արձակուրդ», բայց՝ մշտական: Իր պաշտոնավարության 9 ամիսների ընթացքում լուռ մնացած նախարարը հանկարծ պաշտոնից ազատվելուց հետո սկսեց հրապարակավ հայտարարել, որ իր իսկ ղեկավարած համակարգում գոյություն ունի մաֆիա («Իմ ազատման պատվեր տվողը մաֆիան է», ասում է նա հարցազրույցում), եւ դա ապացուցելու համար ունի հիմքեր, այդ թվում՝ մի քանի խոշոր չարաշահումների մասին փաստեր: Նույնիսկ որոշ անուններ հրապարակեց, մասնավորապես, բնապահպանության ընդերքի գծով փոխնախարար Կորյուն Հակոբյանի անունը, որի ազատման վերաբերյալ դիմել էր վարչապետ Անդրանիկ Մարգարյանին, սակայն բացասական պատասխան ստացել: Մի քանի օր անց նախկին նախարարը **«Ազգին»** տված հարցազրույցում հայտարարեց, որ պատրաստվում է հրավիրել մամուլի ասուլիս ու հրապարակել իր ձեռքի տակ եղած փաստերը, «անուն առ անուն այն 20–25 մարդկանց ցուցակը, որոնցից եթե էս երկիրը չազատվի, երկիր չի դառնա»: **«Կգա ժամանակը ու ես կասեմ, թե ո՞վ է գլուխգործոցը դատախազությունում, ով՝ կառավարությունում»**, խոստանում էր Մուրադյանը, բայց այդպես

Մուրադ Մուրադյան

էլ իր խոստումը չկատարեց, քանի որ շուտով լրեց Հայաստանը: Այդ ժամանակ հրապարակի վրա էր ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավար Գագիկ Պողոսյանի սեպտեմբերի 11-ին տեղի ունեցած սպանության «բնապահպանական վարկածը», ըստ որի սպանությունն անմիջականորեն կապվում էր վերահսկողական ծառայության կողմից բնապահպանության ոլորտում կատարված սուղգումների ու բացահայտած չարաշահումների հետ: Գործի նախաքննության ընթացքում ծերբակալվեցին բնապահպանության նախարարության երկրաբանության վարչության պետ Վարդան Ղարագյոզյանն ու նախարարության ձեռնարկություններից մեկի՝ «Կոլչեդան» ՊՓԲԸ-ի տնօրեն Սամվել Մկրտչյանը, որոնք նշանակվել էին Մուրադյանի օրոք: Բայց շուտով նրանք ազատ արձակվեցին:

Նախագահի վերահսկողական ծառայության բացահայտումները

«Ազգին» տված հարցազրույցում (27.07.01) Մուրադ Մուրադյանը ասում էր, որ «էկոլոգիական մաֆիայի» գոյության մասին ժամանակին տեղեկացրել է ՀՀ վարչապետին ու նախագահին: Առաջինը, նրա պնդմամբ, իմանալով այդ մասին, լռել է, իսկ երկրորդը հանձնարարել է իր վերահսկողական ծառայությանը՝ զբաղվել խնդրով, բայց, Մուրադյանի բնորոշմամբ, «վերահսկողական ծառայությունը նոկաուտի մեջ է»: Սակայն՝ Մուրադյանը կարծես թե սխալվել էր «նոկաուտի» հարցում:

Հունիսի 13-ին ՀՀ նախագահի մամլո գրասենյակը տարածեց մի հաղորդագրություն, որում տեղեկացվում է ընդերքի օգտագործման ոլորտում տիրող վիճակի հարցով նախագահի մոտ հրավիրված աշխատանքային խորհրդակցության մասին: Այստեղ հրապարակվել են նախագահի վերահսկողական ծառայության (ՎԾ) կատարած ուսումնասիրությունների արդյունքները՝ հանքավայրերի մեծ մասի աղօրինի շահագործում, մեծ տոկոս կազմող սվերային շրջանառություն, պաշարների շարժի ու արդյունահանման մասին տեղեկատվության բացակայություն, շահագործման արտոնագրերի հետ կապված լուրջ խնդիրներ եւ վերջապես՝ բյուջե չմուտքագրված հսկայական գումարներ: Նույն օրը նախագահը հանձնարարեց գլխավոր դատախազությանը՝ ստուգել ուսումնասիրության արդյունքում արձանագրված փաստերը եւ խստագույնս պատժել մեղավորներին: Արտադրական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար Դավիթ Զադոյանին հանձնարարվեց ստեղծել աշխատանքային խումբ ու զբաղվել իրավիճակն ուսումնասիրելով ու շտկելով:

Վերահսկողական ծառայության ուսումնասիրությունները, փաստորեն, սկսվել էին շատ ավելի վաղ՝ դեռեւս այս տարեսկզբին: **«Ուսումնասիրելով ոլորտը այնպիսի տպավորություն ստացանք, որ այն բացարձակ անուշադրության է մատնված եղել»**, գնահատում է ՎԾ ղեկավար Ֆելիքս Ցոլակյանը: Մոտ երկու ամսում կատարած ուսումնասիրություններից ՎԾ-ն կազմել է ընդարձակ զեկուցագիր՝ երկու հատորներով, որտեղ ընդհանուր գծերով ու կոնկրետ փաստերով նշված են հայտնաբերած հիմնական թերությունները: Մասնավորապես, պարզվել են մի քանի «պրոցեդուրային», օրենսդրական «տրյուկներ», որոնց արդյունքում էլ ստեղծվել է վերոհիշյալ վիճակը: Օրինակ, պարզվել է, որ 1998 թ.-ից հանք շահագործողները բնավճար են վճարում օգտակար հանածոների ոչ թե արդյունահանված, այլ իրացվող ծավալների դիմաց: Պարզ ասած, մի մարմարի հանքից, ասենք, գերեզմանքար հանելու համար պայթեցվում է հանքը, փչանում է հանքի մի հսկա մասը (արդյունահանման բնագավառում Հայաստանը դեռ գտնվում է «քարե դարում»), արդյունքում բնավճար է գանձվում գերեզմանքարի ծավալի ինչ-որ տոկոսը: Բնավճարների գանձման կարգը, պարզվում է, 1992 թ.-ից մինչ օրս արդեն 5 անգամ փոխվել է, յուրաքանչյուր կառավարություն իր ուրբագրումն է կատարել դրանում: Փոփոխությունների թվում ամենահատկանշականը թերեւս 98 թ.-ին ընդունած թիվ 864 որոշումն է (Արմեն Դարբինյանի վարչապետության օրոք), որի կիրառումից, փաստորեն, պետությունը հսկայական վնասներ է կրել: Այսպես, միայն մեկ կազմակերպության՝ «Ադամանդ Կ»-ի օրինակով (որին պատկանում են «Ջերմուկի» հանքահորերը), մոտ երեք տարիների ընթացքում պետբյուջե է մուտքագրվել տարեկան 20–25 անգամ պակաս գումար: Թե ո՞ւմ «տրյուկն» է եղել այդ փոփոխությունը եւ կամ ո՞վ է շահել դրանից, վերահսկողական ծառայությունում չբացատրեցին:

Հայաստանի ընդերքը

ՎԾ մատնանշած բացերից մյուսը ընդհանրապես ընդերքի երկրաբանական շարժի մասին ճշգրիտ տեղեկատվության ստացման անհնարինությունն ու բացակայությունն է: Որպես պատճառ մատնանշվում են հաշվարկման սխալ մեխանիզմները: Հանքավայրերում արդյունահանված օգտակար հանածոների ծավալների վերահսկողության ֆունկցիան վերապահված է բնապահպանական պետական տեսչությանը: Այն պետք է հետեւի, թե ինչպե՞ս է կատարվում հանքերի շահագործումը, ստուգի ընկերությունների ներկայացրած հաշվետվությունները իր կողմից կատարված պարբերական մասնագիտական \մարշեյդերական\ ստուգումների արդյունքների հետ, որոնք ներկայացվում են նաեւ պետեկամուտների նախարարություն: Սակայն ՎԾ ղեկավարի խորհրդական Քաջիկ Նուրիջանյանի խոսքերով՝ **«տեսչությունն հաշվառման այնպիսի մեխանիզմ է ընտրել, որ ոչ մի դեպքում հնարավոր չէ մարկետինգերական ստուգումների արդյունքները համեմատել շահագործողի ներկայացրած հաշվետվության հետ»**: Մի հաշվետվությունն, ասենք, տրվում է հունվարից հունվար, իսկ մյուսը՝ մարտից հուլիս, որոնք ոչ մի կերպ հնարավոր չէ համեմատել:

Վերոհիշյալ ընդհանուր խախտումներից զատ ՎԾ երկու հատորներում կան նաեւ բազմաթիվ կոնկրետ փաստեր: Օրինակ, արտոնագրերի օրինականությունը ստուգելիս հայտնաբերվել է, որ դրանցում բացակայում են հիմքերը, հաշվառումն ու գործավարությունը կատարվել է փնթի, ջնջումներով, կան պակաս փաստաթղթեր, չկա նույնիսկ դրանց ամբողջական ցանկը: Կան նաեւ զավեշտալի փաստեր. օրինակ, արտոնագրեր են տրվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության բլանկի վրա, կնքված այդ նախարարության կնիքով՝ 1997 թ.-ի օգոստոսին, այն դեպքում, երբ 1997-ի հունիսին այդ նախարարությունն արդեն լուծարված է եղել:

ՎԾ-ն պարզել է նաեւ պատկերն ըստ հանքերի՝ որքանո՞վ է հանքն օրինական դաշտում աշխատում (ունի՞ լիցենզիա, պայմանագիր, հողհատկացման ու լեռնահատկացման մասին փաստաթղթեր): Օրինակ, Շիրակի մարզի 67 հանքերից միայն 9 են ունեցել վերը նշված բոլոր փաստաթղթերը:

Այսպիսով, 94 թ.-ից ի վեր ոլորտում ստեղծված վիճակը ՎԾ-ում բնորոշում են «փնթի վիճակ, փնթի գործեր»: Ըստ Ք. Նուրիջանյանի, կա երկու ենթադրություն՝ ստեղծված շիլաշփոթը կամ մասնագիտական թերացման արդյունք է, «շատերը տեղյակ չեն եղել ոլորտից, հետեւաբար այն ուշադրությունից դուրս է եղել, իսկ ովքեր որ տիրապետել են ոլորտին, ի չարս են օգտագործել իրենց գիտելիքները», եւ երկրորդ ենթադրությունը՝ շիլաշփոթը հասուկ է ստեղծվել, որպեսզի ով փորձի իմանալ, թե ի՞նչ է կատարվում ոլորտում, գլուխ չհանի: **«Եթե ցանկություն լիներ համապատասխան մարմինների կողմից վիճակը շտկելու, ապա՝ կշտկվեր»**:

Օրենսդրական շիլաշփոթ

Հուլիսի 20-ին ընդունված թիվ 657 որոշմամբ նախատեսված է վիճակի շտկում: Դրա իրագործումը, նախարար Զադոյանի գլխավորությամբ, դրվել է ոլորտին առնչվող տարբեր նախարարությունների ու գերատեսչությունների վրա (ՀՀ բնապահպանության, ֆինանսների եւ էկոնոմիկայի, արդարադատության, արդյունաբերության ու առեւտրի, պետական եկամուտների նախարարություններ, մարզպետարաններ, օգտակար հանածոների պետական հանձնաժողով, արդյունաբերության մեջ աշխատանքների անվտանգ կատարման եւ լեռնային հսկողության վարչություն):

Փաստորեն, կառավարությունն այդ որոշմամբ փորձում է 4 ամսում (հուլիսի 20-ից մինչեւ դեկտեմբերի 25-ը՝ վերջին ժամկետը) անել այն, ինչ չի արվել մոտ 10 տարում: Թիվ 657 որոշմամբ, կարծես թե զրոյից սկսվում է դատական կանոնակարգումը. մինչեւ դեկտեմբերի 25-ը պետք է ընդունված լինի «Ընդերքի մասին» նոր օրենսգիրքը, կոնցեսիաների, արդյունաբերական անվտանգության, քրեական, վարչական օրենսգրքերում փոփոխություններ կատարելու մասին օրենքները եւ կառավարության մոտ 15 որոշումներ ու ենթաօրենսդրական ակտեր:

Նախատեսված են նաեւ բազմաթիվ միջոցառումներ, որոնք հիմնականում վերաբերում են ընդերքի մասին տվյալների հավաքագրմանը, ամփոփմանն ու վերլուծությանը: Մասնավորապես, նախատեսվում է ամբողջությամբ փոխել ընդերքի շահագործման իրավունքի տրման կարգը, որն ընդունվել է 94 թ.-ի օգոստոսի 15-ին: Ի դեպ, հենց այդ կարգն էր մատնանշում արդյունաբերության ու առեւտրի նախարարի խորհրդական Ս. Բաբայանը՝ ներկայացնելով ոչ մետաղական հանքերում տիրող վիճակը: Ըստ այդ կարգի, տնտեսվարող սուբյեկտը ընդերքի շահագործման լիցենզիա ստանալու համար պետք է անցնի բազմաթիվ կանգառներով մի երկար ճանապարհ՝ ենթարկվելով տարբեր տրամաչափի չինովնիկների, Ս. Բաբայանի խոսքերով, «ռեկետին»: Ահա այդ շղթայի ամենահամառոտ նկարագրությունը՝ տնտեսվարող սուբյեկտը նախապես թույլտվություն է ստանում տեղական իշխանություններից, այնուհետեւ՝ երկրաբանական հիմնադրամից տեղեկանք հանքավայրի մասին, այդ տեղեկանքի հիման վրա կազմվում է հանքի նախագիծը (ինչն, ի դեպ, բավական թանկ հաճույք է), հետո դիմում է արդյունաբերության ու առեւտրի նախարարությանը՝ հանքի շահագործման արտոնագիր (հետե-

ԱԶԳ

Լրագրողական հետաքննություն

զիա) սանալու համար, այնուհետեւ՝ բնապահպանության նախարարությանը՝ շահագործման մասին պայմանագիր կնքելու, հետո ճանապարհը տանում է դեպի արդյունաբերության անվանգ շահագործման ու լեռներեսկողության վարչություն, որը հանքավայրերում տեխնիկայի օգտագործման իրավունքն է տալիս, եւ վերջապես վերջին «կանգառը»՝ նորից տեղական իշխանություններում՝ հողհատկացում սանալու: Միայն այս երկար ճանապարհն անցնելուց հետո է տնտեսվարողը դառնում օրինական շահագործող, իսկ քանի որ ոչ բոլորը ցանկություն ունեն այդքան «ներդրումներ» (միջին հաշվով մոտ 10 հազ դոլար) ու ժամանակ ծախսելով դառնալ հանքի մինչեւ 25 տարվա (այդքան է սահմանված կարգի վերջին ժամկետը) շահագործող, անխուսափելի պետք է լիներ այն պատկերը, որ կա: Այսպես, 1994-2000 թթ.-ին սկզբում ֆինանսների ու էկոնոմիկայի, ապա արդյունաբերության ու առեւտրի նախարարության կողմից հանքավայրերի շահագործման համար տրվել է 300 արտոնագիր, սակայն դրանցից միայն 16-ը՝ պայմանագիր կնքել, 91-ը՝ սացել լեռներեսկողության թույլտվություն, 70-80-ը՝ հողհատկացման: Դա նշանակում է, որ արտոնագիր սացածների 25-30 տոկոսն է հանքերը շահագործում օրինական ձեւով: 657 որոշմամբ նախատեսված է ընդերքի տրամադրման նոր կարգի ընդունումը, ըստ որի ներդրվելու է «մեկ պատուհանի» գաղափարը, այսինքն բոլոր փաստաթղթերը մեկ տեղից՝ բացառելու համար վերոհիշյալ քաշքշուքն ու կոռուպցիան:

Ըստ բնապահպանության նախարարության ընդերքի վարչության, ընթացքի մեջ են նաեւ մոտ մեկ տասնյակ որոշումներ: Առանց դրանց հնարավոր չէ կիրառել օրենքները: Մասնավորապես, ոլորտի «Մայր օրենքը»՝ 1991 թ.-ին ընդունված «Ընդերքի մասին» Հ�հ օրենսգիրքը, մասնագետների գնահատմամբ, մի կողմից ունի շատ թերություններ, մյուս կողմից՝ տարիների ընթացքում իրականում չի կիրառվել, քանի որ դրա համար անհրաժեշտ են եղել մոտ երեսուն ենթաօրենսդրական ակտեր ու փաստաթղթեր: Մինչդեռ անցած մոտ [illegible] ընթացքում ՀՀ իրար հաջորդող կառավարություններն ընդունել են ընդամենը 5 ենթաօրենսդրական ակտ:

Մաֆիայի մասին խոսակցությունները՝ բլե՞ֆ

Թիվ 657 որոշմամբ հուլիսի 20-ից ի վեր Դ. Զադոյանի գլխավորած խումբը իրականացնում է կոնկրետ միջոցառումներ, մասնավորապես՝ սուգայցեր մարզեր, հանքեր: Այդ աշխատանքների հիմնական մասն արդեն ավարտված կարելի է համարել: **Սուգայցերի արդյունքում հայտնաբերվել է մոտ 150 հազ. խորանարդ մետր օգտակար հանածոների թաքցված ծավալ** (ինչը մեծ թիվ է, եթե նկատի ունենանք, որ արդյունահանված ու փաստացի ֆիքսված ծավալները կազմում են ընդամենը 540 հազ. խմ), **ուղարկվել է 72 հանքի գործունեություն,** (այսինքն՝ եղածի մոտ 30 տոկոսը, եթե համարենք, որ Հայաստանում կա 559 հաշվառված հանքավայր, որից 238-ն է գործող),

Դավիթ Զադոյան

հարուցվել է 28 քրեական գործ, որից երկուսը ուղարկվել է դատարան: Դ. Զադոյանի գնահատմամբ, հանքերի հետ կապված աղմուկն ու հրապարակված թվերն ուռճացված են, խոսքն իրականում ոչ թե 40-50 մլն **դոլարի, այլ 5-6 մլն-ի մասին է: «Ինձ թվում է, բոլոր դեպքերում թվերն ուռճացված են լինում, սկզբում ոգեւորված ինչ-որ թվեր են ասում, հետո ուսումնասիրում ու պարզում են, որ դա այդպես չէ»:** Օրինակ, պարզվել է, որ չկա մի կազմակերպություն, որ հարկայինում գրանցված չլինի, ուղղակի այս կամ այն կազմակերպությունում պակաս է եղել արտոնագիրը, պայմանագիրը եւ այլ փաստաթղթեր: Դրա հետ մեկտեղ, սակայն, պրն Զադոյանը չի ժխտում, որ «400-500 կազ-

Ֆելիքս Ցոլակյան

մակերպությունների մեծ մասն անօրինական է աշխատում»:

Վերջերս էլ ՀՀ բնապահպանության նախարար Վարդան Այվազյանը մի քանի լրատվամիջոցներին հարցազրույց տալով՝ հայտարարեց, որ ընդերքի շահագործման ոլորտում եղած մաֆիայի մասին խոսակցությունները չափազանցված են:

Այսպիսով, վերոհիշյալ արդյունքներից ու գնահատականներից հետո մնում է հարցնել՝ ուրեմն ի՞նչ, բարձրացված աղմուկն ավելո՞ր էր, էկոլոգիական թալանի կամ, ինչպես ասում են, մաֆիայի մասին խոսակցությունները՝ բլե՞ֆ: Երբ այդ հարցով դիմեցինք ՎՕ ղեկավարին, վերջինս ասաց. **«Մենք թվեր չենք ասել հենց սկզբից, նկատել ենք թերությունները, բացերը, աղաղակող փաստերը, որոնք պարունակում են քրեական պատասխանատվության հատկանիշներ, դրանք ներկայացրել են ուր որ հարկն է: Այդ փաստերն ու օրինակներն արդեն խոսում են իրենց մասին: Իսկ ո՞վ է սահմանել, թե ի՞նչն է աղաղակող, ինչը՝ ոչ: Ես գիտեմ, որ օրենքի խախտումն արդեն աղաղակող թերություն է, իսկ թվերի մասին գնահատականներ չեմ կարող տալ: Դ. Զադոյանի հանձնաժողովի գնահատականները Ֆ. Ցոլակյանը գնահատում է «կոնյունկտուրային»:**

Մի քանի խոսուն փաստեր

Վերոհիշյալ թվերով կարելի էր բավարարվել եւ հարցը փակված համարել, եթե չլինեին մի քանի անհամապատասխանություններ ու հարցականներ:

Առաջին՝

Մարզեր կատարած սուգայցերի արձանագրություններում հանքավայրերում հայտնաբերված թերությունները, անօրինականությունները ու դատախազություն ուղարկված գործերը շատ ավելի շատ են ու աղաղակող, քան վերջնարդյունքները: Այսպես, միայն Լոռու մարզում հունիսի 22-ին կատարած սուգայցի ու խորհրդակցության արդյունքում (արձանագրություն թիվ 23-149) մարզի 26 հանքերում առանց բացառության հայտնաբերվել են անօրինականություններ ու թերություններ, գրեթե 25-ի դեպքում արձանագրվել է. «անհապաղ դադարեցնել օգտակար հանածոների ապօրինի արդյունահանումը, պարզել պետությանը հասցված վնասի չափը եւ ապահովել չմուծված գումարների մուտքագրումը պետբյուջե, ձեռնարկել միջոցներ օրինախախտումների համար մեղավոր անձանց՝ օրենքին համապատասխան պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ»: Ընդ որում, 26 հանքերից 12-ի գործերն ուղարկվել են մարզային դատախազություններ: Եթե այդ մեկ մարզը համարենք տիպային մյուսների համար, ապա սացվում է, որ ՀՀ գլխավոր դատախազությունում պետք է հարուցված լիներ ոչ թե 28 քրգործ, այլ մի քանի անգամ ավելի շատ: Այդ մտահոգությանն ի պատասխան Դ. Զադոյանը նշում է. «Գործն ուղարկել դատախազություն, չի նշանակում անպայման քրեական գործ հարուցել, դատախազությունը նախ ուսումնասիրում է, ապա նոր գործ է հարուցում կամ չի հարուցում»: Բացի այդ, ըստ Դ. Զադոյանի ներկայացրած արդյունքների, դատարան է ուղարկվել երկու քրգործ, մինչեւ ըստ ՀՀ գլխավոր դատախազության դեռեւս հոկտեմբերի 15-ի ներկայացրած տվյալների, խոսքը 3 հարուցված քրգործի մասին է: Ենթադրվում է, որ հարուցված գործերի թիվը պետք է մոտ մեկ ամսում ավելացած լիներ, մինչդեռ, կարծես թե հակառակն է սացվում:

Երկրորդ՝

Սուգայցերի հետեւանքով դադարեցվել է 72 հանքի շահագործում, իսկ ՀՀ բնապահպանության նախարարության ընդերքի վարչության տեղեկանքում կարդում ենք. «Նախարարության հանրապետական բնապահպանական պետական տեսչությունը 20.06.01 մարզերում կատարած վերահսկողական սուգայցերի հետեւանքով դադարեցրել է 82 հանքավայրի ապօրինի շահագործումը: Սա էլ դեռ քիչ է, վերահսկողական ծառայությունում տեղեկանում ենք, որ Դ. Զադոյանի սուգայցերի արդյունքների «վրայով անցնելով», մասնավորապես, Արմավիրի ու Կոտայքի մարզերում պարզվել են մի քանի թվային անհամապատասխանություններ: Մասնավորապես, ըստ ցուցակի այցե-

Կորյուն Հակոբյան

լելով 72 չշահագործվող հանքեր, պարզվել է, որ նշված ոչ բոլոր հանքերն են դադարեցրել շահագործումը եւ շարունակում են աշխատել:

Երրորդ՝

Հուլիսի 20-ից շարունակվում է շահագործման նպատակով հանքավայրերի տրամադրման գործընթացը: Այդ ընթացքում տրվել է ընդերքի շահագործման եւս 31 արտոնագիր, կնքվել է 42 պայմանագիր, նույնքան՝ լեռնահատկացման ակտ: Հարց է առաջանում, եթե ոլորտն ուսումնասիրողների միանշանակ գնահատականներով առկա իրավական դաշտը խիստ թերի է, ինչո՞ւ են շարունակվել վերոհիշյալ գործընթացները: Հնարավոր չէ՞ր մի քանի ամսով դա կանգնեցնել՝ մինչեւ ոլորտի լիակատար կարգավորումը:

Օրինակները կարելի է շարունակել: Այսպես, ոչ մի տեղ չկա Հայաստանի հանքավայրերի ճշգրիտ թիվը, գույքագրման, օգտակար հանածոների ծավալների, բնավճարների մասին եւ այլ կարեւոր տեղեկություններ: Հետաքրքիր է, թե ինչպե՞ս պետք է սուգվեր ու վերսուգվեր իրավիճակը, եթե չկա ոլորտի ճշգրիտ ու ամփոփ պատկերը: Ինչպե՞ս կարելի է սուգել հայտարարված սվերային շրջանառությունն ու բյուջե չմուտքագրվող գումարի չափը, եթե համապատասխան մարմինները չունեն (կամ էլ ուղղակի չեն հրապարակում): Այսպես, Հայաստանից արտահանվող ոչ մետաղական հանքավայրերի արտադրանք (մասնավորապես՝ քար) արտահանող կազմակերպությունների, 1997 թ.-ից արտահանված ծավալների ու դրանց դիմաց վճարված տուրքի մասին տեղեկատվություն սանալու համար մեր հարցմանն ի պատասխան ՀՀ մաքսային պետական կոմիտեն, մատնանշելով ՀՀ մաքսային օրենսգրքի հոդված 16-ի դրույթները, հրաժարվում է տեղեկատվություն տալուց: Նմանապես, պետեկամուտների նախարարությունը բյուջե մուտքագրված բնավճարների մասին մեր հարցմանն ի պատասխան տեղեկացնում է, որ ՊԵՆ-ը առանձին հանքերի գծով՝ մետաղական եւ ոչ մետաղական, բնավճարների հաշվառում չի իրականացնում, ինչպես նաեւ՝ չի կարող հրապարակել այդ ոլորտի հարկատուների ցուցակը: Միայն երկար «հետաքննություններից» հետո փոխնախարար Ա. Ալավերդյանից հնարավոր եղավ տեղեկանալ, որ 2001 թ.-ի նոյեմբերի 1-ին բնական պաշարների օգտագործման դիմաց պետբյուջե վճարը կազմել է մոտ 1 մլրդ 59 մլն դրամ՝ անցյալ տարվա 900 մլն-ի դիմաց, այսինքն՝ մոտ 159 մլն-ով ավել է: Դա, սակայն, շատ քիչ բան է ասում, եթե չկա 94 թ.-ից ի վեր մուտքագրված գումարների «դինամիկան» ըստ տարիների, ինչն, ըստ պրն Ալավերդյանի, շատ դժվար գործ է, սահմանված պետք է քրքրել անցյալ տարիների «դավթարները», որովհետեւ չկա համակարգված, ամփոփ տեղեկատվություն:

Ընդհանրապես, առնչվելով այլեւայլ գերատեսչությունների հետ, այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ «Հայաստանի ընդերքում» կատարյալ քաոս է տիրում: Ոլորտին առնչվող մարմինների միջեւ չկա ինֆորմացիայի փոխանակում ու աշխատանքի համակարգում, մի ձեռքը չգիտի, թե ի՞նչ է անում մյուսը: Ոլորտին կատարելապես տիրապետողներին էլ մատների վրա կարելի է հաշվել, ու դա նրանց մենաշնորհն է: Ընդ որում, այդ կարծիքը կրկնվում է մի քանի հարցազրույցներում: Ս. Բաբայանը, օրինակ, համարում է, որ արտոնագրերի տրամադրման կարգը հատուկ է «խուճուճ» ընտրված, որպեսզի ավելի շատ հետաքրքիր «չինովնիկների ռեկետը»:

Որտե՞ղ է թաղված, ի վերջո, շան գլուխը

Արտադրական ենթակառուցվածքները համակարգող նախարար Դ. Զադոյանը մատնանշում է նորմալ հսկողության բացակայությունը: **«Շան գլուխը թաղված էր հետեւյալում. նույն սուգողը նախապես, իբրեւ հանքի աշխատող, գնում չափում էր օգտագործված ծավալները, հետո պետությունն այդ նույն մարդուն ուղարկում էր սուգելու իր իսկ չափածը»:** Մոտավորապես նույնն է նաեւ Դ. Զադոյանի տեղակալի՝ Կորյուն Հակոբյանի պարագայում, որն էլ անցյալ տարիներին իր ղեկավարած ոլորտում կատարվածը գնահատում է այսպես... **«Ասել, թե այդ ոլորտում գոյություն է ունեցել թալան, խախտումներ, միանշանակ ասեմ, որ այդ ծավալի խախտումներ չտեսա, ուղղակի կան սվերային որոշ բաներ... Այն բլոկում, որը ես եմ ղեկավարել, աղաղակող բաներ չկան: Կար վերահսկողության բացակայության հարց»:** Նա մատնանշում է նույնիսկ հասցեատիրոջը՝

բնապահպանական պետական տեսչությանը: Դեռեւս 1994 թ.-ին ՀՀ կառավարության որոշմամբ երկրի օգտակար հանածոների շարժի ու երկրաբանահետախուզական աշխատանքների վերահսկողության համար ստեղծվում է առանձին իրավաբանական կարգավիճակով մի մարմին՝ երկրաբանամարկշեյդերական վերահսկողության ծառայությունը: 1998 թ.-ին անհայտ պատճառներով (նախարար Գեւորգ Վարդանյանի որդի, երբ տեսչության պետ էր նշանակվել ներկայիս պետ Նազիկ Ամիրյանը՝ գեներալ Մանվել Գրիգորյանի կինը) այդ ծառայությունը լուծարվում է, ու 53 հոգանոց կազմակերպությունն իր 4 տեսչություններով տարրալուծվում է բնապահպանական պետական տեսչության մեջ: Քանի որ երկրաբանամարկշեյդերական սուգումը պահանջում է խիստ մասնագիտական մոտեցում, տեսչությունը չէր կարող սուգել ու վերահսկել շահագործողների պայմանագրային պարտավորությունների կատարումը: «Պատկերացրեք, վերահսկողությունն ապահովվում էր ընդամենը մեկ երկրաբանի եւ չորս մարկշեյդերի կողմից», ասում է Կ. Հակոբյանը: Հետեւաբար ստեղծվել է վերոհիշյալ վիճակը: ՀՀ կառավարությունը վերջերս ընդունել է թիվ 1037 որոշումը, ըստ որի վերականգնվելու է մոտ երեք տարի առաջ լուծարված երկրաբանամարկշեյդերական ծառայությունը: «Իսկ ինչու՞ չեն արվել այդ քայլերը մինչ այդ: Դուք, որպես փոխնախարար, տեղյակ չե՞ք եղել վիճակին» հարցին ի պատասխան նշվեց. «Տեղյակ եմ եղել ու չեմ լռել, պարզապես ընթացք չի տրվել: Շուրջ երեք տարի ու ավելի անընդհատ այդ խնդիրների՝ անկառավարելիության ու հսկողության բացակայության մասին, 4 վարչապետի եւ 3 նախարարի գրել եմ»: Կ. Հակոբյանի վկայությամբ, իր գրածներին ընթացք չի տրվել, եւ նա սահմանված է եղել մոտ 30 էջանոց զեկուցագիր գրել նախագահի վերահսկողական ծառայությանը, «բավական լուրջ փաստաթղթային փաթեթ», որը երբ խնդրեցինք ցույց տալ, չկարողացավ ցույց տալ՝ պատճառաբանելով, թե դա թողել է նախկին աշխատավայրում: Իսկ երբ դիմեցինք ՎՕ՝ այդ փաթեթին ծանոթանալու համար, պատասխանեցին, որ Կ. Հակոբյանն իրենց դիմել է այն ժամանակ, երբ ուսումնասիրություններն արդեն ավարտվում էին: Ներկայացրել է ոչ թե «լուրջ փաստաթղթային փաթեթ», այլ՝ «ինչ-որ թղթեր»:

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պահպանության վարչության պետ Գեւորգ Դանիելյանը ստեղծված վիճակը բացատրում է դաշտը կանոնակարգող օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի անհամապատասխանությամբ. «Պետք է վերանայվեն ենթաօրենսդրական ակտերը, որպեսզի պետությունը որպես բացառիկ սեփականատեր կարողանա գործել ոչ թե օրենքների, այլ ենթաօրենսդրական ակտերի մակարդակով»:

Պետեկամուտների փոխնախարար Արմեն Ալավերդյանն էլ խորհուրդ է տալիս ուշադրություն դարձնել ընդերքի շահագործման պայմանագրերին, հաշվառմանը. «Անհրաժեշտ է ամենից առաջ հաշվառել ռեսուրսը ու նոր, դրա հիման վրա՝ հաշվառվեն ակնկալվող ու սացվող հարկերը»:

«Շան գլուխը թաղված է զվեյցարական բանկերում», ասում է նախկին փոխնախարար Վանյա Մխիթարյանը, իսկ պրոֆեսոր Բաբայանը մատնանշում է ՀՀ կառավարության 1993 թվականին ընդունած այն որոշումը, ըստ որի սկսվեց պետական սեփականություն հանդիսացող հանքավայրերի շահագործումը մինչեւ 25 տարի ժամկետով մասնավոր տնտեսվարող սուբյեկտներին բաշխելու գործընթացը:

Որտե՞ղ է թաղված, ի վերջո, շան գլուխը: Ամենակարճն ու համարձակը, թերեւս, բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի (որի անունը չենք հրապարակում իր խնդրանքով) պատասխանն էր. **«Իսկ դուք իմացա՞ք, թե ում են պատկանում հանքերը...»:**

Հետեւաբար մեր հետաքննությունը շարունակվելու է:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆ,
«Հետաքննող լրագրողների ընկերակցություն»
home.media.am\hetq

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Այսօր մենք հոգեւորական գործիչների ենք սպասում

Ս ե ր պատմության մեծագույն հոբելյաններից մեկի՝ քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարության վերջին հնչյունները լսվեցին: Միջոցառումների ժամանակացույցը թվում է, թե հագեցած էր: Ցուցահանդեսներ, համերգներ, հյուրեր, գիտաժողովներ, ծիսակատարություններ, արարողություններ, արարողություններ... եզակի իրադարձություն, որ առիթ էր ոչ միայն քրիստոնեական աշխարհին ներկայանալու ու ներկայացնելու մեր ժողովրդին իր հնագույն պատմությամբ ու մշակութային անսպառ ժառանգությամբ, այլեւ հաստատելու մեր դարավոր արմատներին արժանապատվորեն պահպանած հավատարմությունը:

Որքանո՞վ հայ ժողովուրդը մասնակցեց այս ամենին, տվեց տոնական տրամադրությանը, որքանո՞վ անհաղորդ մնաց՝ դժվար է ասել: Այստահանդեսներ հասցրած ենք, որ ամենից առաջ այս պատմական իրադարձության նշումը պետք էր նախ եւ առաջ մեր ժողովրդին, որտեղ էլ որ նա գտնվեր: Ավելին՝ պիտի հավակնենք, որ չունենար բազմաթիվ ու բազմատեսակ միջոցառումների բնույթ, այլ լուսավոր անցյալի վերարժեւորման ու նրա փառաբանման ձոն լիներ ու այդպիսին մնար մեր հիշողության մեջ, մեր արձանագրումներում: Բոլոր նախապայմանները, թվում է, ունեինք տոնն իրական ու տեւական դարձնելու համար: Դա իրական փաստն է մեր ժողովրդի կազմավորման ու ձեւավորման հնդեվրոպական ակունքների մասին, հայ մշակույթի ու հոգեւոր հարստության զգացումը մեր պատմական հիշողության մեջ: Փառավոր պատմության հերոսական ու պայծառ, դաժան ու ողբերգական շրջաններից հետո վերապրել, հասնել 21-րդ դար որպես ազատ, անկախ եւ պետականություն ունեցող մի ժողովուրդ՝ հպարտության արժանի պատմական փաստ է: Թո՛ղ որ աշխարհաստիպուռ, բո՛ղ որ ոչ բազմամիլիոն, բո՛ղ որ պանդուխտ, բո՛ղ որ այսօր հուսահատ ու ոչ երջանիկ: Ամենակարեւորն ունենք՝ երկիր: Մնացածը հուսանք, որ ժամանակի կարոտ խնդիրներ լինեն, ու կտկենք մեր մեջքը:

Մեզ հույս է պետք ու հավատ: Եվ որպեսզի մի անգամ եւս անցնենք ճակատագրով պարտադրված մեր դժվարին ճանապարհը, հոգեպես կայուն մնանք ու չաղավաղվենք՝ մեզ նաեւ հայ հոգեւոր գործիչներ են պետք: Մեր անցյալի հոգեւոր գործիչների պայծառ օրինակները ստիպում են հուսալ, որ խորհրդային շրջանի մեզ պարտադրված անաստվածության շրջանն ավարտվելու է, եւ մենք հայ եկեղեցու, հոգեւորականության կողմից կունենանք հոգեւորական գործիչներ, որոնք որպես ազգային գործիչներ կծառայեն նաեւ: Եթե դարեր շարունակ մեր եկեղեցին նեցուկ է եղել ժողովրդին, մարտնչել թշնամիների դեմ, հավաքել ու արձանագրել, մեզ հաստատել մեր պատմության ու մշակույթի ժառանգությունը, պետականություն չունեցած երկարաձիգ շրջանում ստանձնել այդ անհնարին ու դժվարագույն պարտականությունը, իրավունք ունենք հուսալու, որ հոգեւորական գործիչների անառարկելիորեն կարեւոր առաքելությունը կշարունակվի մեր ժողովրդի ճակատագրում: Իսկ մենք մեծագույն սպասումներ ունենք այդ գործիչներից: Սփյուռքում՝ մեր հայրենակիցների ուծացման ձգձգումը եւ սիրո բորբոքումը Հայաստան երկրի նկատմամբ, մեր եւ արտերկրի մեր եղբայրների միջեւ օտարացման կանխումը, հյուրընկալ երկրներում մեր ժողովրդին վայել արժանապատվության ու բարի հարաբերությունների ապահովումը: Հայաստանում հոգեւոր գործիչներից ակնկալում ենք նախկին տասնամյակներին ստեղծված եկեղեցու եւ ժողովրդի միջեւ վիհի վերացումը, անողոք պայքարը բոլոր տեսակի աղանդների դեմ, որոնք, առանց բացառության, օտար հետախուզական գործակալությունների ազդեցության արտահայտություններից են՝ կրոնական ու «բարերարությունների» դողի տակ: Երբ հայ իրականությունում 17-18-րդ դարերում սկսվեց կաթոլիկ եւ ապա ավետարանական եկեղեցիների ներխուժումը՝ շատ որոշակի, հոգեւոր իրականությունից չափազանց հեռու քաղաքական նպատակներ էին հետապնդվում: Օսմանյան կայսրությունում այն ծառայելու էր հայերի միջոցով Եվրոպայի կաթոլիկ տերությունների ազդեցության տարածմանը, Ռուսաստանի մեկուսացմանը: Հիմնվեցին հայ կաթոլիկ եկեղեցիներ՝ առիթ տալով հայ ժողովրդի մասնատմանը, բնամության ու պայքարի երկարաձիգ մթնոլորտ սերմանելով հայ իրականության: Մեջ: Հոռմի մի քանի հայ գործակալներ, խաղալով հայ ժողովրդի ի բնե հանդուրժող էության վրա, հաջողեցին կրոնափոխ անել մի լայն հատվածի, անգամ ողջ գաղութի, ինչպիսին էր լեհահայ հարուստ հայ գաղութը: Նույն նպատակը հետապնդելով անգլիական եւ ամերիկյան ավետարանական կենտրոններից ուղարկված միսիոներները սուլթանական կառավարության թույլտվությամբ «բարերարություններով» (նյութական օգնություններ, հիվանդանոցների, դպրոցների, ծերանոցների, որբանոցների, տպարանների հիմնում), հայ երիտասարդներին ամերիկյան եւ եվրոպական ուսումնական հաստատություններում կրթելով եւ նրանց հայաբնակ գավառներում որպես քարոզիչներ օգտագործելով հաջողեցին հայ ժողովրդի մի աստվար հատվածին դեպի բողոքականությանը ձգել, հիմնել եկեղեցիներ եւ ամրապնդել ամերիկյան ազդեցությունը: Սուլթանական կառավարության թողտվությունն ու համագործակցությունը պայմանավորված էր հպատակ քրիստոնյա ժողովուրդներին մասնատված, միմյանց դեմ թշնամացած ու կառավարության դեմ միածույլ դուրս գալն անհնարին դարձնելու ձգտումներով: Նույն այսօրվա Թուրքիայի մեծաքես ամերիկահաճո վիճակի արմատները կապված են վերոհիշյալ դարերում այդ եկեղեցիների ու կրոնական տարբեր ուխտերի բուռն գործունեության հետ: Ցավոք, պիտի խոստովանել, որ միսիոներական այս ներխուժումն առավելապես հաջողություն ունեցավ հայերի շրջանում՝ հաղթելով հոգեւոր գործիչների ու հայ մտավորականության պայքարում: Այլ ժողովուրդների մոտ այն նվազ հաջողությամբ պսակվեց, իսկ հրեաների մոտ՝ ինչպես տարբեր ժամանակների միսիոներական գրականությունն է արձանագրում՝ լիակատար ձախողման մատնվեց (ի պատիվ հրեաների):

Այսօր, երբ Հայաստանն անկախ պետականություն ունի, որը հովանավորում է Հայ առաքելական եկեղեցու դրույթները եւ ջերմ հարաբերությունների մեջ է ազգապահպանության իր դարավոր առաքելությունը պատվով կատարած Ս. Էջմիածնի հետ՝ անհարիր է հանդուրժողականություն ցուցաբերել մեր ազգը քայքայող կրոնական քողի տակ գործող տարբեր աղանդներին ու եկեղեցիներին: Հեռուստատեսային էկրանները, նույնիսկ հատուկ հեռուստակայանները թափված քաղցկեղի նման անտարբեր են մեզ դարձրել հավատուրացության քարոզչության նկատմամբ: Իսկ հավատուրացությունը հայի համար իր ավանդական կրոնից հեռանալն է եւ նույնիսկ Ավետարանն «այլ եկեղեցիների լեզուներով» կարդալը: Հավատուրացությունը հայի համար ազգուրացություն է, քանզի մնացած բոլորի արմատները կապ չունեն հայ ժողովրդի հետ: Եվ հանդուրժողականությունը պետության եւ եկեղեցու կողմից չպիտի վերածի նրանց հետ քաղաքական սիրաբանության, քանզի այս դեպքում կործանարար է, եթե նույնիսկ դժվար նկատելի է: Դեռեւս Կ. Պոլսի հայ պատրիարքներից Հովհաննես Կոլոս Բաղիշեցին (1678-1741) նոր ձեւավորվող, դեռեւս իր եկեղեցին չունեցող կաթոլիկ հայ համայնքին թույլ էր տալիս իր եկեղեցում արարողություններ կատարել՝ դիվանագիտորեն նրանց չբնամացնելու եւ հայ ազգային եկեղեցուց չհեռացնելու միտումով: Հանդուրժողականության այս բացառիկ երեւույթի հետ հայ պատրիարքները կարողացել են սուլթանի, անգամ շեյխ ուլ իսլամների միջոցով որոշ չափով կասեցնել հայերի հեռացումը մայր եկեղեցուց: Իսկ այսո՞ր, երբ մենք ենք մեր երկրի տերը: Հավատուրացության եւ ազգը մասնատող այս դժբախտության դեմ բազմաթիվ կրոնադավանաբանական (հայ եւ օտար, քարգմանական) հրատարակությունների կողքին հաջողության լավագույն գրականությունը պետք էր նախ եւ առաջ մեր ժողովրդին, որտեղ էլ որ նա գտնվեր: Ավելին՝ պիտի հավակնենք, որ չունենար բազմաթիվ ու բազմատեսակ միջոցառումների բնույթ, այլ լուսավոր անցյալի վերարժեւորման ու նրա փառաբանման ձոն լիներ ու այդպիսին մնար մեր հիշողության մեջ, մեր արձանագրումներում: Բոլոր նախապայմանները, թվում է, ունեինք տոնն իրական ու տեւական դարձնելու համար: Դա իրական փաստն է մեր ժողովրդի կազմավորման ու ձեւավորման հնդեվրոպական ակունքների մասին, հայ մշակույթի ու հոգեւոր հարստության զգացումը մեր պատմական հիշողության մեջ: Փառավոր պատմության հերոսական ու պայծառ, դաժան ու ողբերգական շրջաններից հետո վերապրել, հասնել 21-րդ դար որպես ազատ, անկախ եւ պետականություն ունեցող մի ժողովուրդ՝ հպարտության արժանի պատմական փաստ է: Թո՛ղ որ աշխարհաստիպուռ, բո՛ղ որ ոչ բազմամիլիոն, բո՛ղ որ պանդուխտ, բո՛ղ որ այսօր հուսահատ ու ոչ երջանիկ: Ամենակարեւորն ունենք՝ երկիր: Մնացածը հուսանք, որ ժամանակի կարոտ խնդիրներ լինեն, ու կտկենք մեր մեջքը:

Մեզ հույս է պետք ու հավատ: Եվ որպեսզի մի անգամ եւս անցնենք ճակատագրով պարտադրված մեր դժվարին ճանապարհը, հոգեպես կայուն մնանք ու չաղավաղվենք՝ մեզ նաեւ հայ հոգեւոր գործիչներ են պետք: Մեր անցյալի հոգեւոր գործիչների պայծառ օրինակները ստիպում են հուսալ, որ խորհրդային շրջանի մեզ պարտադրված անաստվածության շրջանն ավարտվելու է, եւ մենք հայ եկեղեցու, հոգեւորականության կողմից կունենանք հոգեւորական գործիչներ, որոնք որպես ազգային գործիչներ կծառայեն նաեւ: Եթե դարեր շարունակ մեր եկեղեցին նեցուկ է եղել ժողովրդին, մարտնչել թշնամիների դեմ, հավաքել ու արձանագրել, մեզ հաստատել մեր պատմության ու մշակույթի ժառանգությունը, պետականություն չունեցած երկարաձիգ շրջանում ստանձնել այդ անհնարին ու դժվարագույն պարտականությունը, իրավունք ունենք հուսալու, որ հոգեւորական գործիչների անառարկելիորեն կարեւոր առաքելությունը կշարունակվի մեր ժողովրդի ճակատագրում: Իսկ մենք մեծագույն սպասումներ ունենք այդ գործիչներից: Սփյուռքում՝ մեր հայրենակիցների ուծացման ձգձգումը եւ սիրո բորբոքումը Հայաստան երկրի նկատմամբ, մեր եւ արտերկրի մեր եղբայրների միջեւ օտարացման կանխումը, հյուրընկալ երկրներում մեր ժողովրդին վայել արժանապատվության ու բարի հարաբերությունների ապահովումը: Հայաստանում հոգեւոր գործիչներից ակնկալում ենք նախկին տասնամյակներին ստեղծված եկեղեցու եւ ժողովրդի միջեւ վիհի վերացումը, անողոք պայքարը բոլոր տեսակի աղանդների դեմ, որոնք, առանց բացառության, օտար հետախուզական գործակալությունների ազդեցության արտահայտություններից են՝ կրոնական ու «բարերարությունների» դողի տակ: Երբ հայ իրականությունում 17-18-րդ դարերում սկսվեց կաթոլիկ եւ ապա ավետարանական եկեղեցիների ներխուժումը՝ շատ որոշակի, հոգեւոր իրականությունից չափազանց հեռու քաղաքական նպատակներ էին հետապնդվում: Օսմանյան կայսրությունում այն ծառայելու էր հայերի միջոցով Եվրոպայի կաթոլիկ տերությունների ազդեցության տարածմանը, Ռուսաստանի մեկուսացմանը: Հիմնվեցին հայ կաթոլիկ եկեղեցիներ՝ առիթ տալով հայ ժողովրդի մասնատմանը, բնամության ու պայքարի երկարաձիգ մթնոլորտ սերմանելով հայ իրականության: Մեջ: Հոռմի մի քանի հայ գործակալներ, խաղալով հայ ժողովրդի ի բնե հանդուրժող էության վրա, հաջողեցին կրոնափոխ անել մի լայն հատվածի, անգամ ողջ գաղութի, ինչպիսին էր լեհահայ հարուստ հայ գաղութը: Նույն նպատակը հետապնդելով անգլիական եւ ամերիկյան ավետարանական կենտրոններից ուղարկված միսիոներները սուլթանական կառավարության թույլտվությամբ «բարերարություններով» (նյութական օգնություններ, հիվանդանոցների, դպրոցների, ծերանոցների, որբանոցների, տպարանների հիմնում), հայ երիտասարդներին ամերիկյան եւ եվրոպական ուսումնական հաստատություններում կրթելով եւ նրանց հայաբնակ գավառներում որպես քարոզիչներ օգտագործելով հաջողեցին հայ ժողովրդի մի աստվար հատվածին դեպի բողոքականությանը ձգել, հիմնել եկեղեցիներ եւ ամրապնդել ամերիկյան ազդեցությունը: Սուլթանական կառավարության թողտվությունն ու համագործակցությունը պայմանավորված էր հպատակ քրիստոնյա ժողովուրդներին մասնատված, միմյանց դեմ թշնամացած ու կառավարության դեմ միածույլ դուրս գալն անհնարին դարձնելու ձգտումներով: Նույն այսօրվա Թուրքիայի մեծաքես ամերիկահաճո վիճակի արմատները կապված են վերոհիշյալ դարերում այդ եկեղեցիների ու կրոնական տարբեր ուխտերի բուռն գործունեության հետ: Ցավոք, պիտի խոստովանել, որ միսիոներական այս ներխուժումն առավելապես հաջողություն ունեցավ հայերի շրջանում՝ հաղթելով հոգեւոր գործիչների ու հայ մտավորականության պայքարում: Այլ ժողովուրդների մոտ այն նվազ հաջողությամբ պսակվեց, իսկ հրեաների մոտ՝ ինչպես տարբեր ժամանակների միսիոներական գրականությունն է արձանագրում՝ լիակատար ձախողման մատնվեց (ի պատիվ հրեաների):

Այսօր, երբ Հայաստանն անկախ պետականություն ունի, որը հովանավորում է Հայ առաքելական եկեղեցու դրույթները եւ ջերմ հարաբերությունների մեջ է ազգապահպանության իր դարավոր առաքելությունը պատվով կատարած Ս. Էջմիածնի հետ՝ անհարիր է հանդուրժողականություն ցուցաբերել մեր ազգը քայքայող կրոնական քողի տակ գործող տարբեր աղանդներին ու եկեղեցիներին: Հեռուստատեսային էկրանները, նույնիսկ հատուկ հեռուստակայանները թափված քաղցկեղի նման անտարբեր են մեզ դարձրել հավատուրացության քարոզչության նկատմամբ: Իսկ հավատուրացությունը հայի համար իր ավանդական կրոնից հեռանալն է եւ նույնիսկ Ավետարանն «այլ եկեղեցիների լեզուներով» կարդալը: Հավատուրացությունը հայի համար ազգուրացություն է, քանզի մնացած բոլորի արմատները կապ չունեն հայ ժողովրդի հետ: Եվ հանդուրժողականությունը պետության եւ եկեղեցու կողմից չպիտի վերածվել հայ հոգեւորականների հայրենասեր, կրթյալ ու ազգային գործիչ լինելու հանգամանքը, որն ակնկալում ենք նաեւ այսօր: Այս պայքարը բարդ է, քանզի բազմաշերտ է եւ կարիքն ունի մեր յուրաքանչյուրիս: Օրհասական դարձած թողտվության դեմ սպասում են, որ բուռն պայքարի դուրս գա մեր եկեղեցին իր հոգեւոր գործիչներով: Փաստվեց, ցավոք, որ նոր կառուցվող եկեղեցիները (երբ այնքան վերականգնման կարոտ եկեղեցական հրաշակերտներ կան փրկելու համար), մասսայական կնունքները, առօրյա ու նույնիսկ տոնական արարողությունները եւ ծիսակատարությունները չեն կանխում հավատուրացությունը: Գիտաժողովներն ու կինոփառատոները դեռ բավականաչափ համոզիչ չեն: Մենք կարիք ունենք ոչ միայն աշխարհիկ, այլեւ հոգեւոր պետական գործիչների: Լավ է այն եկեղեցու հոգեւոր առաջնորդը, որի ժամանակ իր հոգեւորականները ոչ միայն սահմանափակվում են եկեղեցու պատերի մեջ, այլեւ ժողովրդին պիտանի գիտական, կրոնադավանաբանական աշխատություններ են հեղինակում, առանց երկմտելու ժողովրդի հետ երկխոսությունների գնում, ազգային գործիչների վերածվում: Մենք կարիք ունենք հոգեւորական պետական գործիչների, անկախ իրենց զբաղեցրած պաշտոնից եւ դիրքից, ամենապարզ հովվից մինչեւ մեր հոգեւոր բարձրագույն առաջնորդները, որոնք չեն բավականանա ժողովրդին սպասելով միայն եկեղեցիներում՝ Աստծո խոսքը մեզ հասցնելու համար, այլեւ դեպի ժողովուրդը կգնան, կմտնեն մեր ընտանիքները, ի չիք կդարձնեն մեզ այլասերող օտարածին խեղաթյուրումները եւ այնպես կանեն, որ կսպասենք իրենց՝ ակնկալելով նրանց օրհնությունը, հաղորդությունը, կհարգենք նրանց, կսիրենք, կպատկառենք նրանցից, զգոն ու անհանդուրժող կդառնանք ազգուրացության յուրաքանչյուր դեպքի նկատմամբ, հոգեպես նաեւ կվերադառնանք մեր հարազատ եկեղեցու գիրկը, կվերագտնենք մեր իսկական հավատը, որը մեզ հայ է պահում: Այնժամ մենք ուրախ կլինենք բարեկամ լինելու մնացած եկեղեցիների, տարբեր ուխտերի հետ, հարգանքի ու համագործակցության փոխադարձ այցելություններ ու արարողություններ կատարելու, արժանապատվորեն մասնակցելու էկումենիկ (դեռ այսօր էլ մեզ համար աղոտ է հայ եկեղեցու դիրքորոշումն այս առթիվ) իրադարձություններին՝ հանուն բոլոր տեսակի հավատքների ու կրոնների դավանող մարդկանց միջեւ բարեկամության ու խաղաղության:

Այսօր մենք հույժ անհամբեր ենք սպասում մեր 1700-ամյա եկեղեցու գործիչներին:

ՎԱՍՈՒՐԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

«Սերունդներ, մեզ ճանաչեք Ղարաբաղից»

Այս օրերին, երբ հայ ժողովրդի սոցիալական ծանր վիճակի վրա բարդվել է նաեւ Ղարաբաղի կնճռոտ հարցի անհապաղ լուծման հրամայականը օտար պետությունների միջամտություններով, հայ ժողովուրդը իրավունք չունի այլեւս դիվանագիտական մութ հաշիվների զոհ դառնալու, նույնիսկ խնդրի խաղաղ լուծման հավաստիացումների պարագայում:

Շատ հստակ է հարցը հայ մարդու համար: Ինչպես նախկին սովետական հանրապետություններում ասիճանաբար սրբագրվում են բռնակալ Ստալինի իմահաճ սխալ որոշումներն հանուն տվյալ հանրապետության բնակչության կամքի եւ ազգային շահերի, Ղարաբաղի հարցն էլ հայ ժողովուրդն արյան գնով լուծեց, եւ այդ հարցը պետք է դրվի այդ հարթության վրա, որպես արդարության գրավական: Չպետք է թույլ տալ որեւէ ուժի շրջանցել եղած անիրավությունը հայ ժողովրդի հանդեպ: Ով հակառակն է կամենում, նա բարեկամ չէ հայ ժողովրդին: Մեր հարցը մենք արդեն լուծել ենք առանց օտար միջամտությունների եւ այդպես էլ պետք է գոյատեւենք:

Սակայն անկախ որեւէ միջամտությունից, խիստ անհրաժեշտ է հաճախ վերանայել մեր պատմության վավերական փաստաթղթերը, որոնք հիշեցնում են մեր կրած վիրավորանքները եւ անիրավ ահավոր արհավիրքները, որպեսզի նույն կսկիծով ապրենք մեր ազգի ցավերն ու ողբերգությունը, որպեսզի այսօրվա բարյացակամ միջամտություններ կատարողները ստանան արդարացի պատասխան: Բազմաթիվ փաստաթղթեր կան մեր պատմության էջերում թուրքերի եւ ազերիների կատարած կոտորածների, ալան-թալանի, ազգի արժանապատվության, կրոնական զգացումները նվաստացնող վկայությունների:

Հարուստ փաստաթղթեր կան նաեւ եկեղեցական պատմության արխիվներում, եւ բավական է դրանցից մեկը միայն հրապարակել եւ շրջանառության մեջ դնել օտար պետությունների ներկայացուցիչների շրջանակներում, որը, վստահ եմ, առավել հստակեցում պիտի մտցնի հայ ժողովրդի այսօրվա կեցվածքի մասին Ղարաբաղի հարցի լուծման համար տարվող բանակցություններում: Թեեւ մենք հարց չունենք, մեր ժողովրդի խնդիրը լուծվեց, երբ Ղարաբաղը ազատագրվեց: Ահա փաստաթուղթն ամբողջությամբ:

Եզրակացությունը պետք է թողնել ընթերցողին:

ԱՐՍԵՆ ԱԲՐԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԲԵՐՅԱՆ

Նորին սրբություն Ամենայն հայոց վեհափառ կաթողիկոս եւ աստուածարեալ հայրապետ Տ. Տ. Գէորգ Ե-ին

Ամենախոնարհ զեկուցումն

Որդիական պարտականութիւն ենք համարում ամենախոնարհաբար յայտնել Ձերդ Վեհափառութեանը, որ տարւոյս մարտի 10, 23-ին Շուշում սկսած կռիւները խաչ դրին քաղաքի հայկական թաղի վրայ: Այրեց հայոց ամբողջ քաղաքամասը, 12-13 հազար հայութեան 6 հազար հոգին փախան գիւղերը, 4 հազար հոգին, մեծ մասը տղամարդ, սրի քաշեցին, գնդակահարեցան ու հրկիզեցան եւ մօտ 3 հազար հոգի մնացին քաղաքում, գերի թուրքերի ձեռքին, որոնց մի մասը՝ 400 հոգի երիտասարդ ոյժեր տներում եւ բանտում սրածեցան, 700 հոգի կին ու երեխայ, ծեր ու պառաւ, արձակեցան ու հասին գիւղերը, իսկ մնացածը, սիրուն կանանց ու աղջկերանց հետ, գտնւում են թուրքերի տներում, նահանգապետ Սուլթանովի մօտ եւ բանտում: Մօտ 400 գեղեցկուհիներից կազմւած առանձին կանանց, որտեղից բաժին են հանւում սպաներին ու ասկերներին: Քաղաքից մերկ ու դատարկ ազատուած ժողովուրդը ցրւած է Վարանդայի եւ Դիզակի գիւղերում, որի մի մասն ապաստան է գտել բարեկամների ու ազգականների տներում, մի շատ չնչին-վաճառական մասն ապրում է իր ազատած փողով եւ մեծ մասը թէ՛ նպաստ է ստանում կառավարութիւնից եւ թէ՛ մուրացկանութիւն անում:

Վահան եպիսկոպոսը սպանվեց առաջնորդարանում, չկամենալով դուրս գալ: Առաջնորդարանը, թեմական դպրոցը, եկեղեցիները թալանւած են, ապա այրւած: Կռիւը սկսելով առաւօտեան ժամը 5-ին՝ հնարաւորութիւն չի եղել կոնսիստորիայից ոչ մի դոկումենտ, ոչ մի գործ ու գանձ ազատել, նոյնպէս եւ եկեղեցիներից: Վահան եպիսկոպոսի սպանութեան մասին մեզանից յետոյ դուրս եկած հայ ոստիկանապետ Աւետիք Տէր Ղուկասեանը պատմում է, որ նոյն օրը երեկոյեան ժամը 10-ին ինքը կարողացել է մտնել Սրբազանի մօտ եւ յայտնել, թէ այլեւս հնար չկայ մնալու, պետք է կամ փախչել, կամ մի կերպ ընկնել Սուլթանովի մօտ: Սրբազանը պատասխանել է, թէ առաջնորդարան եւ կոնսիստորիա չեմ թողնիլ եւ դուրս գալ եւ վստահ, որ թուրքերն իրան ձեռք չեն տալ, յամառում է ու նստում. կէս ժամ չանցած, ասում է, յանկարծ լսեցան ոռնածայներ. ես երկիւղից անցայ միւս սենեակը եւ մի քանի րոպէից յետոյ լսեցի երեխաների լաց ու շիւան (էդտեղ էին կոնսիստորիայի դիւանապահն իր երեխաներով եւ եպիսկոպոսի որդին): Քաշելով փողոցի կողմի սենեակը եւ մտածելով, թէ ինչպէս անեմ, որ ազատեմ, տեսայ, որ արդէն տունը վառել է, եւ ծուխն ինձ բռնել է, ես նրբափողոցի լուսամուտով ինձ ձգեցի մօտիկ պարտէզը եւ գիշերը Քամու-ջաղացի փիրոզով իջայ ներքեւ...

Կոնսիստորիայի կողմից սպանւած են՝ անդամ Խորէն ա. քահ. Իսկանդարեանը, կարգապահ Անանիա Տէր-Դանիէլեանը եւ դիւանապահ Յովհաննէս Ղարաբէկեանը: Քահանաներից սպանւած է Յարութիւն ա. քահ. Վարդապետեանը, իսկ Գարեգին ա. քահ. Յովհաննիսեանն ազատել է բանտից կիսամեռ դրութեան մէջ եւ միանգամայն մերկ. սպանւած են Թեմ. դպրոցի տեսուչ Աղ. Ծատուրեանը, ուսուցիչ Գաբրիել Ղուլիքեխայեանը, հոգաբարձու Անդրեաս-Բէկ Տէր-Յարութիւնեանը, Ղուկասեան ուսումնարանի տեսուչ բժ. Նիկողայոս Եարամիշեանը եւ այլք:

Այսպէս ահա չկայ հոգեւոր վարչութիւն, եւ մնացել ենք մի անդամ ու մի ատենադպիր, մերկ ու քաղցած դրութեան մէջ, կոչւած է ժամանակաւոր մարմին գործերը վարելու:

Խնդրում ենք Վեհափառութեանդ կարգադրութիւնը թեմի համար մի կառավարիչ ուղարկելու, որպէս զի հոգեւոր գործերն ու գործակալութիւնները անիշխանութեան չմատնուեն:

Վեհափառ
Տէրութեանդ ամենախոնարհ ծառայք
Կոնսիստորիայի անդամ՝
ԿԱՐԱՊԵՏ ԲԱՍՄԵՆՑ
ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆՑ
Ատենադպիր՝
ՄԻՐՃԱ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆ

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 116, թ 16-17, ձեռագիր բնագիր

Միջազգային

ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հակաահաբեկչական լրատվությունն ԱՄՆ-ում փակի տակ է

Ռամսֆելդի «նոր կարգերը»

ԱՄՆ-ի ծավալած հակաահաբեկչական պատերազմին վերաբերող տեղեկատվությունը խիստ սահմանափակված է եւ Պենտագոնի ու Սպիտակ տան կողմից ավելի մեծ չափով է վերահսկվում, քան Պարսից ծոցի պատերազմի ժամանակ: Պաշտպանության նախարար դառնալուց անմիջապես հետո Դոնալդ Ռամսֆելդը, որը երբեմնի «սառը պատերազմի» փորձված զինվորներից է եւ աղատեղեկատվության վարպետ, ջանք չխնայեց հակաահաբեկչական պատերազմին առնչվող տեղեկատվությունը փակի տակ պահելու համար: Փարիզյան «Պուեն» շաբաթաթերթի տվյալներով, սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո նա նույնիսկ սպառնացել է բանտարկել իր աշխատակիցներին, եթե նրանք թույլ տան որեւէ «կարեւոր» տեղեկության արտահոսք:

Մի օր, լրագրողների առջեւ իր ելույթի պահին, Ռամսֆելդը նույնիսկ մեջբերեց Չերչիլի այն խոսքերը, թե «պատերազմի ժամանակ ճշմարտությունն այնքան թանկ է, որ պետք է անպայման պաշտպանվի մի քանի սուով»: Զգալով, որ չափն անցել է, Ռամսֆելդը լրագրողներին խնդրեց չարձանագրել իր ասածը, մոռանալով, որ հանդիպումը հեռարձակվում է CNN-ի ուղիղ եթերում:

Աղատեղեկատվության մյուս վարպետը Սպիտակ տան խոսնակ Արի Ֆլեշերն է, որի ամենօրյա ճեպազրույցները ոչինչ չասող ճամարտակություններ են: Նա ՁԼՄ-ների տնօրեններին խնդրել է ոչինչ չասել նախագահի անելիքների եւ Սպիտակ տան պաշտպանության միջոցառումների մասին: Նախագահ Բուշը նույնիսկ փորձեց սահմանափակել Կոնգրեսին տրվող տեղեկատվությունը, բայց Կոնգրեսականների դժգոհությունը նրան ստիպեց նահանջել:

Բայց տեղեկատվական քաղաքականությունը չի կարող սահմանափակվել լրատվական բոլոր «ծորակների» փակումով: Քանզի այդ դեպքում դատարկությունը կլցվի այլ կարգի տեղեկատվությամբ: Խոսքը մասնավորապես արաբական «Ալ Ջեզիրա» հեռուստաընկերության մասին է: Սկզբում ամերիկացիներն այն համարում էին բնական խոսափող: Եվ անկախ մամուլի երկիր համարվող ԱՄՆ-ում տեղի ունեցավ տարօրինակ միջադեպ. նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական Կոնդոլիզա Ռայսը զանգահարեց ամերիկյան հեռուստալիքների տնօրեններին, որպեսզի նրանց հորդորի «զրջահայաց լինել» բեն Լադենի եւ նրա զինակիցների հայտարարությունների հեռարձակման դեպքում: Տնօրենները խոստացան զգուշավոր լինել նյութերի ընտրության հարցում:

Շուտով գործադիր իշխանությունը հասկացավ, որ «Ալ Ջեզիրայի» տեղեկատվական զորությունը կարելի է ծառայեցնել ԱՄՆ-ի շահերին: Ամերիկացի որոշ դիվանագետներ սկսեցին արաբերենով պարբերաբար քարոզչական ելույթներ ունենալ այդ ալիքով: Նախագահ Ջորջ Բուշն ի վերջո Իսլամաբադում, Լոնդոնում եւ Վաշինգտոնում կազմեց քարոզչական խմբեր: Դրանք իսկական արագ արձագանքման ուժեր են, որոնք հակահարված են տալիս ամեն կարգի բնական ելույթներին եւ ենթադրություններին:

Անհանգիստ եւ ահաբեկված ԱՄՆ-ում հանրային կարծիքի հարցումների արդյունքները զգալի չափով պայմանավորված են նախագահի գործողություններով: ՁԼՄ-ների ներկայացուցիչներից շատերը պատրաստ են հավանություն տալ Ջորջ Բուշի յուրաքանչյուր քայլին: Այդուհանդերձ նախագահի վարչակազմն առանձնակի ուշադրությամբ հետեւում է CNN ազդեցիկ հեռուստաընկերության աշխատանքին: Սպիտակ տունը հոկտեմբերի վերջերին դրա ղեկավարներին մեղմ ձեւով հասկացրեց, որ CNN-ով չափազանց շատ են ցուցադրվում ամերիկյան ռմբակոծությունների քաղաքացիական զոհերի պատկերներ: Դիտողությունը հաշվի առնելով՝ հեռուստաընկերության ղեկավարությունը ներքին հրահանգով աշխատակիցներին կարգադրեց «չափից ավելի ուշադրություն չդարձնել Աֆղանստանի պատերազմի քաղաքացիական զոհերին եւ անխուսափելի դաժանություններին», քանի որ այդ երկրում ԱՄՆ-ի ռազմական գործողությունները սեպտեմբերյան ահաբեկչությունների պատասխանն են:

Պ. Ք.

«Տուսալի պայմաններ կան վերականգնման համար»

Վստահեցնում է Եվրոպական կենտրոնական բանկի նախագահը

Մ. Նահանգների սեպտեմբերյան իրադարձություններից հետո աշխարհի երկրներին գլոբալ ճգնաժամի ենթադրյալ սպառնալիքին է անդրադառնում Եվրոպական կենտրոնական բանկի նախագահ Ուիմ Դուիզենբերգը «Նյուզ ուիքի» հարցազրույցում:

– Սեպտեմբերի 11-ի դեպքերը խոչընդոտեցի՞ն գլոբալիզացման գործընթացին:

– Ոչ: Դրանք առավել եւս շեշտեցին, որ մենք ապրում ենք մեկ միասնական աշխարհում, որ ի վերջո կարողացել ենք հաջողությամբ պսակել համաշխարհային առեւտուրը, որի անդամ է դարձել նաեւ Չինաստանը: Սա մեծ իրագործում է, որի շարունակության հարցը հետագայում քննարկվելու է խան երկրների հետ Միջազգային արժութային հիմնադրամի հանդիպումների ընթացքում:

– Ինչպե՞ս է դա ազդելու տնտեսության դանդաղեցման գործընթացի վրա:

– Կոնկրետ չեմ կարող ասել, բայց դանդաղեցման միտումները նկատելի էին դեռ վեց ամիս առաջ: Իհարկե, դեպքերը ազդեցին, եւ ոչ միայն Եվրոպայում, այլեւ ամբողջ աշխարհում, բայց պայմաններ կան վերականգնման համար: Տնտեսության առողջացում ակնկալում ենք արդեն իսկ առաջիկա տարվա առաջին կեսին, չնայած դա պետք է լինի դանդաղ եւ փոքր չափերի:

– Ուրեմն Եվրոպայում տնտեսական ծգնաժամ չի՞ արձանագրվի:

– Ինչ-որ բան փոխվե՞լ է ավանդական քաղաքականությունից:

– Ժամանակաշրջանը խիստ հոգեբանական է: Անհրաժեշտ է վստահությունը վերականգնել, բայց դա միայն ֆինանսական քաղաքականության հետ չէ կապված: Մենք պետք է կարողանանք կայունություն, անվտանգություն եւ շարունակականություն դրսեւորել՝ ապացուցելու, որ նման դեպքեր պատահում են կյանքում, բայց անցողիկ են, իսկ մենք կարող ենք հաղթել:

– Բայց Եվրոպան ծախսելու սահմանափակումներ ունի, չէ՞:

– Գլխավոր սահմանափակումն այն է, որ մենք երբեմն կառուցվածքային քաղաքականության զոհ ենք դառնում: Բարենորոգումները երկար ժամանակ են պահանջում: Ամերիկյան տնտեսությունը շատ ավելի ճկուն է:

– Դուք հաճախ եք կրկնում այդ միտքը: Ոչինչ չի՞ փոխվում այստեղ՝ Եվրոպայում:

– Փոխվում է, բայց շատ դանդաղ: Ասպարեզներ կան, որոնք դարձել են որոշ չափով, բայց ոչ բավականաչափ ճկուն:

– Դուք արդեն երեք տարի այս պաշտոնում եք: Ավելացե՞լ է վստահությունը ձեր եւ բանկի հանդեպ:

– Միակ բանը, որով մեզ պետք է դատեն, այն է, թե որքանով ենք մենք կատարել մեր գլխավոր խնդիրը՝ գների կայունությունը եվրոյի տարածաշրջանում: Մենք հետեւել ենք այդ գծին եւ շարունակելու ենք գործել նույն ոգով: Մարդիկ սկսում են հասկանալ եւ գնահատել: Գների կայունությունը երկար ժամանակ պահպանել նշանակում է ստեղծել ակնկալությունների բնագավառում վստահության մթնոլորտ, որն, իմ կարծիքով, լավագույն լուման է, որ կարող եմ ներդնել իմ գործում:

– Որոշ մարդկանց կարծիքով վերջին շրջանում արժեզրկումն ուշացումով եկավ:

– Մենք ավելի փատաշի տեղեկություն ունեինք: Բայց մենք չենք մտահոգվում ներկա արժեզրկման թվերով: Մեզ առավել հետաքրքրում է առաջիկա տարվա թվերը:

– Պատրա՞ստ եք եվրոյին անցնելու հունվարի 1-ից:

– Կասկած չունենք, որ անցումը եվրոյին լինելու է շատ սահուն: Մեծաքանակ հանգիստ եւ բավարարված կլինեն՝ հենց որ ավարտվի մեր գործի այդ մասը:

ԱՄՍԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

Նոյեմբերի կարեւորագույն իրադարձությունները

Նոյեմբերը նշանավորվեց Ռումինիայի նախագահ Իոն Իլիեսկուի, Լեհաստանի նախագահ Ալեքսանդր Կվաշնեւսկու, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Կոիչիրո Մացուրայի Հայաստան այցելություններով: Նորից չկայացած ճանաչվեց բաշխիչ էլեկտրացանցերի սեփականաշնորհման տենդերը: Մոսկվայում տեղի ունեցավ ԱՊՀ հոբելյանական գագաթաժողովը:

1. Շարունակվեց Ռումինիայի նախագահ Իոն Իլիեսկուի այցը ՀՀ: Երեւանում մեկնարկեց ուշուի աշխարհի առաջնությունը: Լեւոն Մկրտչյանը նշանակվեց ՀՀ կրթության եւ գիտության նախարար:
2. Երեք օրով Հայաստան ժամանեց Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարք Բարդուղիմեոս Առաջինը:
3. Հայաստան այցելեց բրիտանական թագավորական ընտանիքի անդամ դուքս Ռիչարդ Գլոսթերը տիկնոջ՝ դքսուհի Բրիջիթ Գլոսթերի հետ:

ՀՀ նախկին վարչապետ Արմեն Դարբինյանը դարձավ ռուս-հայկական համալսարանի ռեկտոր:

7–8. ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը Ստրասբուրգում մասնակցեց ահաբեկչության դեմ պայքարին նվիրված ԵԽ նախարարների կոմիտեի 109-րդ նիստին:

12–16. Մոսկվայում անցկացվեցին հայկական մշակույթի օրեր:

14–16. Պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Լեհաստանի նախագահ Ալեքսանդր Կվաշնեւսկին: Այցի ավարտին ստորագրվեցին մի շարք երկկողմ փաստաթղթեր:

Նախագահները մասնակցեցին գործարարների հայ-լեհական ժողովի բացման արարողությանը: Լեհաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ Ազգային ժողովի, մշակական հանձնաժողովների, պատգամավորական խմբակցությունների եւ խմբերի ղեկավարների հետ: Այցելեց 1915 թվականի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր եւ Երեւանի պետական համալսարան: Ալեքսանդր Կվաշնեւսկին այցելեց Մայր աթոռ Սուրբ Էջմիածին եւ հանդիպեց Հայ առաքելական եկեղեցու առաջնորդ Գարեգին Երկրորդի հետ:

14. Նախկին պատգամավոր Ազատ Արշակյանը ազատ արձակվեց դատարանի դահլիճից:

15. Ելույթ ունենալով Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 56-րդ նստաշրջանի նիստում, Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղը երբեւէ չի եղել անկախ Ադրբեջանի մասը:

15. Ըստ «Ուոլ սթրիթ ջոռնալ»-ի գնահատականի՝ Հայաստանն ամբողջ ԱՊՀ-ում միակ պետությունն է, որն ունի «հիրավի ազատ տնտեսություն»:

15. Թուրքիան չընդգրկվեց եվրոպական հանձնաժողովի այն տասը երկրների ցուցակում, որոնք համարվեցին առավել պատրաստված 2004 թվականին եվրամիությանը անդամակցելու համար:

15. Աշխատանքը վերսկսեց հայկական ատոմակայանը:

16. Ստեփանակերտի նախկին քաղաքապետ Կարեն Բաբայանը դատապարտվեց հինգ տարվա ազատազրկման:

16–17. ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը Մոսկվայում մասնակցեց ԱՊՀ անդամ երկրների պաշտպանության նախարարների խորհրդի նիստին:

19. Պաշտոնական այցով Երեւան ժամանեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Կոիչիրո Մացուրան:

Վանո Սիրադեղյանը զրկվեց ՀՀ Աժ պատգամավորի մանդատից՝ նիստերին անհարգելի բացակայությունների պատճառով:

20. Երեւանում կայացավ «Բրաբիոն. ծաղիկների տոն» փառատոնը:

20–22. Երեւանում կայացավ «Վերածնունդ մշակույթով» միջազգային կոնֆերանսը:

23. Հայաստանում ԱՄՆ-ի նորանշանակ դեսպան Ջոն Օրդուեյը հանձնեց իր հավատարմագրերը:

27. Նախագահ Ռոբերտ Քոչարյանը հանդիպեց ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի հետ:

28. Ավարտվեց ՀՀ ֆուտբոլի 10-րդ առաջնությունը: ՀՀ չեմպիոն հռչակվեց Երեւանի «Փյունիկը»:

29. Հայտերի բացակայության պատճառով բաշխիչ էլեկտրացանցերի սեփականաշնորհման տենդերը ճանաչվեց չկայացած:

29–30. Մոսկվայում տեղի ունեցան ԱՊՀ 10-ամյակին նվիրված ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների, վարչապետների եւ արտգործնախարարների խորհուրդների նիստերը:

ՄՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Քաղաքական եւ տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն

«Հայերը՝ վերադրելու պատմություն» վավերագրական ֆիլմ Վաշինգտոնի WETA հեռուստակայանով

ԵՐԵՎԱՆ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Դեկտեմբերի 5-ին Վաշինգտոնի WETA հասարակական հեռուստակայանը ցուցադրել է մեկժամյա վավերագրական ֆիլմ Հայաստանի եւ հայերի մասին: «Հայերը՝ վերադրելու պատմություն» խորագրով ֆիլմը նվիրված է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:

Ֆիլմի հովանավորն է Մանուկյան Սիմոն հիմնադրամը, իսկ հեղինակն ու բեմադրող ռեժիսորը՝ Էնդրյու Գոլդբերգը: Այն ցուցադրվել եւ դեռ ցուցադրվելու է ԱՄՆ մի շարք խոշոր քաղաքների հասարակական հեռուստակայանների կողմից:

Ֆիլմի նկարահանումները կատարվել են 11 երկրներում: Հեղինակները հարցազրույցներ են ունեցել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի, Նոբելյան մրցանակի դափնեկիր էլի Ուիսելի, ամերիկահայ գրող-բանաստեղծ Փիթր Բալաֆյանի, դոկտոր Ռոբերտ Լիֆթոնի, բրիտանացի պատմաբան Քրիստոֆեր Ուոքերի, պրոֆեսորներ Ռոնալդ Սյունիի, Նինա Գարսոյանի, Ջորջ Բուռնությանի եւ ուրիշների հետ:

Ցուցադրումն ուղեկցվում էր ուղիղ եթերում հեռարձակվող մեկնաբանություններով: Դատելով դահլիճում տիրող աշխուժությունից եւ հնչող հեռախոսազանգերի քանակից, կարելի է եզրակացնել, որ ֆիլմը հետաքրքրություն է առաջացրել ԱՄՆ մայրաքաղաքում:

«Մասնավոր հայացքի» սյուժեները

Բաց հասարակության ինստիտուտի հիմնադրամի տրամադրած դրամաշնորհի միջոցներով «Մասնավոր հայացք» անկախ ստուդիան՝ «Մոսկվա» կինոթատրոնի եւ Հայաստանի կինոգետների ու կինոլուսագրողների ասոցիացիայի աջակցությամբ, դեկտեմբերի 1-5-ը կազմակերպել էր աուդիո-վիզուալ արվեստների եւ անկախ ֆիլմարտադրողների միջազգային կինոփառատոն, որն արդեն երկրորդն է եւ այս տարի անցկացվում էր մրցութային հիմունքներով: Փառատոնի ափսարհագրական քարտեզն ընդարձակ չէր, թեեւ, Հայաստանից բացի, ֆիլմեր էին ներկայացրել Ռուսաստանը, Լատվիան, Վրաստանը եւ Թուրքիան: Ինչեւէ, մասնակից երկրներից յուրաքանչյուրը փառատոն էր բերել իր սյուժեն, եւ, ինչ ասել կուզի, «Մասնավոր հայացք 2001»-ը հետաքրքիր էր հենց դրանով:

«Ազատության ուրվականը»

Հայկական սյուժեն

Անկախ կինոստուդիաներում ստեղծված հայկական ֆիլմերը ցուցադրվեցին փառատոնի բացման նախօրեին: Այս ծրագիրն այնքան լայն ծրագրի «մեխերից» էր: 20-րդ դարի բռնատեսերի մասին Սոկուրովի ծեռնարկած քառերգության երկրորդ ափսաանը՝ Հիսլերի կյանքի մեկ օրը ներկայացնող «Սոլոֆից» հետո, առաստելազերծման նույն սկզբունքով ներկայացնում է արդեն ծանր հիվանդ Լենինի մեկ օրը: Ի դեմ, Հիսլերի եւ Լենինի դերակատար Լեոնիդ Մոզգովոյը խաղում էր նաեւ Խառլամովայի ֆիլմում, բայց նույնքան տպավորիչ չէր:



«Ցուլը»

Լատվիական սյուժեն

Մարիս Մասկալանսի «Տանիք Լուսնի ճանապարհին» վավերագրական ժապավենի հետ մեկտեղ լատվիացիները մրցութային ծրագրին մասնակցում էին Իվո Կալոթենիեսի «Արքաներ» խաղարկային կարճամետրաժով: Եթե առաջինը շոշափում էր բնապահպանական լուրջ խնդիրներ, երկրորդը հիշեցնում էր Ժիրայր Ավետիսյանի «Ջրհորի մոտ» ֆիլմը՝ այն տարբերությամբ, որ ջրհորին փոխարինել էր ճախմաքը:

Վրացական սյուժեն

Մեր հարեւանների պատվիրակությունն ամենամեծն էր մյուսների համեմատ, իսկ կինոծրագիրը՝ ամենաընդարձակը՝ դարձյալ համեմատաբար, մինչդեռ ուշադրության արժանի ֆիլմերը երեքն էին՝ Ռուսուդան Չկոնիայի «Անանուն երեխաները» անապատանների մասին, Գեորգի Ճիճինաձեի «Զեղազենին», որ էսքիզ էր տղամարդկանց մենաստանի կյանքից եւ ժամանակին Փարաջանովի հետ աշխատած Գարի Կունցեւի ու նրա որդու՝ Վախթանգ Կունցեւ-Գաբաշիձեի «Տունը, որտեղ ծնվում են հեքիաթները»: Վերջինիս հերոսն էր դարձել Թբիլիսիում ապրող տիկնիկագործ Գարի Դավթյանը, բայց ֆիլմը, չնայած հետաքրքիր մտահղացմանը, ավելի շատ նմանվել էր տիկնիկային կինոհամերգի՝ Սերգեյ Օբրազցովի ոգով:

Ֆրանսիական սյուժեն

Փառատոնի շրջանակներում տեղ էր գտել նաեւ ֆրանսիական դասական ֆիլմերի երկօրյակ, ուր ընդգրկված էին անառարկելի արժեքներ՝ Լուիս Բունյուելի եւ Սալվադոր Դալիի սյուռռեալիստական կինոմանիֆեստը՝ «Անդալուզյան շունը» (1928) եւ «Ազատության ուրվականը» (1974), որը նկարահանվել է, երբ սյուռռեալիզմն արդեն վերհուշ էր Բունյուելի համար: Ինչ վերաբերում է Ռոբեր Բրեսոնի «Գյուղական քահանայի օրագրին», (1950), որն առաջին անգամ էր ցուցադրվում Հայաստանում, ֆիլմն ընթանում էր առանց թարգմանության, եւ «Մոսկվա» կինոթատրոնի լեփլեցուն տեսարահում, ի վերջո, մնացինք երեքով, եթե չհաշվենք եւս երեք համառ հանդիսատեսների, ովքեր, տաք զրույցով տարված, նույնիսկ չնկատեցին, որ ֆիլմը վերջացել է:

«Մասնավոր հայացք» միջազգային 2-րդ կինոփառատոնի հիմնական մրցանակները

■Լավագույն կինոծրագրի համար. Լատվիա

■Լավագույն ազգային ֆիլմի համար. «Սոմի», ռեժ՝ Օզքան Ալփեր (Թուրքիա)

■Լավագույն հայկական ֆիլմի համար. «Վերուս» անկախ կինոստուդիա

■«Մասնավոր հայացք 69» մրցանակ. «Տեքստ կամ մեկնաբանության գովերգ», ռեժ՝ Եկատերինա Խառլամովա (Ռուսաստան)

■Լավագույն դերասանի համար. «Անանուն երեխաներ», ռեժ՝ Ռուսուդան Չկոնիա (Վրաստան)

Կինեմատոգրաֆում ներդրած ավանդի համար. Գարի Կունցեւ (Վրաստան)

■Հանդիսատեսի համակրանքի մրցանակ. «Առավոտյան ոռմանս», ռեժ՝ Վախթանգ Կունցեւ-Գաբաշիձե (Վրաստան):

Ռեպլիկներ

■**Մարլեն Դիթրիխ.** «Համբույրները մի վայրկեվ, բայց եւ մի հավիտյան»:

■**Սալմա Հայեկ.** «Մեծ սիրուց խուսափում են, որովհետեւ վախենում են կորցնել ինքնահիրաքեռումն ու հայտնվել ուրիշի իշխանության տակ»:

■**Օրսոն Ուելս.** «Ավանդույթի տակ հաճախ ուղղակի հասկացվում է վաս սովորույթների մի հավաքածու»:

■**Նաստասյա Կինսկի.** «Գեղեցիկ մարդիկ անվստահ են: Նրանց հատուկ են հետաքրքրասիրությունն ու մանկամտությունը: Ըստ էության, գեղեցկությունը, հմայքը բնավորության այդ գծերի պատճառը չեն, այլ հետեւանքը»:

■**Մել Գիբսոն.** «Ես գիտեմ, թե քանի բաժակ վիսկի պիտի խմել, որպեսզի ամենաչնաշխարհիկ կինն այդիպ կենգուրու երեւա»:

■**Լի Սթրասբերգ.** «Դերասանն իսկույն կմոռացվի, եթե հանդիսատեսն ի դեմս նրա տեսնի իր ծառայողական պարտականությունները կատարող մարդու»:

■**Ժան Գաբեն.** «Ֆիլմ նկարելու համար անհրաժեշտ է առաջինը՝ լավ պատմություն, երկրորդը՝ դարձյալ լավ պատմություն եւ երրորդը՝ կրկին լավ պատմություն»:

Արժե դիտել

10 դեկտեմբերի, 00.50 Սինեմաֆս

■«Վանդակը»★: Ռեժիսոր՝ Թարզեմ Սինգհ: Դերերում՝ Ջենիֆեր Լոպես, Վինս Վոն, Վինսենթ Դ'Օնոֆրիո: ԱՄՆ, 2000:

Հոգեբույժն իր նորագույն մեթոդի շնորհիվ խորասուզված է մոլագարի հոգու մութ խորքերը, բայց ռեժիսորին հետաքրքրում է ոչ այնքան դրա նոպաակը, որքան անհերեւակայելի շրջագայությունը ենթագիտակցության տեսարժան վայրերով:

12 դեկտեմբերի, 21.00 Պրոմեթեւս

■«Բեթի ֆույրիկը»★★: Ռեժիսոր՝ Նիլ Լաբյութ: Դերերում՝ Ռենե Զելվեգեր, Մորգան Ֆրիմեն, Քրիս Ռոք: ԱՄՆ-Գերմանիա, 2000:

Սեւ հումորով լի այս կատակերգության հերոսուհին՝ հմայիչ մատուցողուհի Բեթին, ապրում է ավելի շատ երեւակայական, քան թե իրական աշխարհում:

12 դեկտեմբերի, 23.40 ՀՌԲ

■«Մարգո թագուհին»★★★: Ռեժիսոր՝ Պատրիս Շերո: Դերերում՝ Իզաբել Աջանի, Վենսան Պերես, Վիրնա Լիզի, Ժան-Յուգ Անգլադ: Ֆրանսիա, 1994:

Ալեքսանդր Դյումայի համանուն վեպի էկրանացումը:

12 դեկտեմբերի, 24.00 Պրոմեթեւս

■«Գայթակղություն»★: Ռեժիսոր՝ Մայքլ Քրիսթոֆեր: Դերերում՝ Անտոնիո Բանդերաս, Անջելինա Ջոլի: ԱՄՆ, 2000:

Ճակատագրական սիրո ռոմանտիկ պատմություն:

13 դեկտեմբերի, 02.30 Արմենիա

■«Դրակուլա»★★★: Ռեժիսոր՝ Ֆրենսիս Ֆորդ Կոպոլա: Դերերում՝ Գարի Օլդմեն, Ուայնոնա Ռայդեր, էնթընի Հոփքինս, Քիանու Ռիվզ: ԱՄՆ, 1992:

Ամենանշանավոր վամպիրի գրական կնքահոր՝ Բրեմ Սթոքերի վեպի այս էկրանացումը թերեւս լավագույնն է կոմս Դրակուլայի չարաղետ կյանքի բոլոր կինոտարբերակներից:

14 դեկտեմբերի, 00.45 ՊՐՊ

■«Անառակը»★★: Ռեժիսոր՝ Գաբրիել Այոն: Դերերում՝ Վենսան Պերես, Ֆանի Արդան, Ժոզիան Բալասկո: Ֆրանսիա, 1999:

18-րդ դարի լուսավորչական դեմքը՝ Դենի Դիդրոն, բարեկամուհու կալվածքում ծածուկ աշխատում է իր «Հանրագիտարանի» վրա, որն արգելված է եկեղեցու եւ կառավարության կողմից:

15 դեկտեմբերի, 18.50 Հ1

■«Փրկեք Գրեյսին»★: Ռեժիսոր՝ Նայջել Քոուլ: Դերերում՝ Բրենդա Բլեթին, Քրեյգ Ֆերգյուսոն, Չեկի Կարիո: Մեծ Բրիտանիա, 2000:

Տարեց այրին վճռում է ապրուստը վաստակել՝ խոլորձների փոխարեն մարիխուանա աճեցնելով:

16 դեկտեմբերի, 13.45 Սինեմաֆս

■«2001 թվականի տիեզերական ոդիսականը»★★★: Ռեժիսոր՝ Սթենլի Կուբրիկ: Դերերում՝ Քիր Դալի, Ուիլյամ Սիլվեսթր, Գարի Լոքվուդ: Մեծ Բրիտանիա, 1968:

Աստղանավորդների թռիչքը Յուպիտեր ուղեւորություն է դեպի Անհայտը՝ ի որոնումն ճշմարտության, բարձրագույն կեցության իմաստի:

16 դեկտեմբերի, 23.30 Հ1

■«Հավատարմություն»★★: Ռեժիսոր՝ Անջեյ Ժուլավսկի: Դերերում՝ Սոֆի Մարսո, Պասկալ Գրեգորի, Գիյոմ Կանե: Ֆրանսիա, 2000:

Կոմսուհի դը Լաֆայետի «Կլեւի իշխանուհին» սիրային վեպի (1678 թ.) արդիականացված տարբերակը:

16 դեկտեմբերի, 23.55 Ա1+

■«Երեք քայլ զառանցանքի մեջ»★★: Ռեժիսորներ՝ Ռոժե Վադիմ, Լուի Մալ, Ֆեդերիկո Ֆելլինի: Դերերում՝ Ջեյն Ֆոնդա, Ալեն Դելոն, Բրիջիտ Բարդո, Թերենս Սթեմփ: Իտալիա-Ֆրանսիա, 1967:

Ֆիլմի երեք նովելներն էլ նկարահանվել են էդգար Ալան Պոյի առեղծվածային պատմվածքների հիման վրա:

Կարմենը կինոյում

1915-1916

«Կարմեն»
1915, ԱՄՆ: Ռեժիսոր՝ Չարլի Չապլին: Դերերում՝ Չ. Չապլին, էդնա Փըրվիենս, Ջոն Ռենդ:

Սա Սեսիլ Դե Միլի վեհաշուք ֆիլմի պարոդիան է, որտեղ մեծ կատակերգուի անողոք ծաղրի թիրախն են դարձել օպերային փիուն ոճն ու հուզառաս մելոդրամատիզմը: Չապլինն ինքը սանձնել է սնապարծ, ցուցամոլ Դեն Խոսիերիի էքսցենտրիկ դերը: Դրագունի համազգեստ հագած այս ծաղրածուն շրջում է հեծելազորայինի սուսերը քարշ տալով, մինչդեռ դրա պատյանում սուսերի մի կծաս մնացուկ է, որով, լավագույն դեպքում, նա տապական է կտրում, կամ էլ մեջքը քորում: Բայց Կարմենի սպանության եւ Խոսիերիի մահվան տեսարանում Չապլինն անսպասելիորեն հրաժարվել է բուֆոնադային գրոտեսկից: Նրա ստեղծագործության վաղ շրջանի հետազոտող Գեորգի Ավենարիուսը գրել է. «Գունատ, տանջահար դեմք, ներքին կրակից այրվող աչքեր, որոնցում ոչինչ չի մնում խեղկատակությունից, պարոդիայից ու բուռլեսկից: Չապլինն այդ տեսարանը լուրջ է խաղում: Մահամերձ Դեն Խոսիերիի վերջին հայացքը իսկապես ողբերգական է»: Իսկ ֆրանսիացի ռեժիսոր եւ կինոտեսաբան Լուի Դելյուկը դեռ 1921-ին այն կարծիքն է հայտնել, որ մեռնող Չապլինին տեսնելուց հետո այլեւս ոչ մի տենորի չես նայի «Կարմենի» վերջին արարվածում: Միայն թե դրամատիզմով լեցուն այդ դրվագը եզրափակվում է դարձյալ պարոդիական վերջաբանով: Խոսիերիի դիակին գողունի մոտենում է գլամարտիկ էսկամիլյոն՝ արդեն տապալված ախոյանի հետույքին ափացի տալու բուռն ցանկությամբ: «Հանգուցյալ» Խոսիերին սկսում է խույս տալ հարվածից եւ ապա ինքն է ափացի հասցնում չարադավ հակառակորդին: Էսկամիլյոն դուրս է թռչում կադրից, իսկ հարություն առած Խոսիերին ոտի է ցատկում եւ օգնում ելնել «սպանված» Կարմենին: Նրանք երկուսով տնտղում են այն բուտֆորիական դանակը, որով հարվածելիս շեղքը լիովին մտնում է բռնակի մեջ: Ֆիլմի վերջաբանը, հանդիսանար կարծիքով, փչացնում է միայն Չապլինի խաղընկերուհին՝ էդնա Փըրվիենսը, որը «ոչ Կարմեն է խաղում, ոչ էլ Կարմենի պարոդիա»: Այս շիկահեր գեղեցկուհուն Չապլինը հանդիպել էր 1915-ի հունվարին, Սան Ֆրանցիսկոյում, մի հյուրասիրության ժամանակ: Էդնան, դպրոցն ավարտելով, հեռացել էր հայրական տնից (նրա ծնողները հանխատեր էին Արիզոնայում) եւ քարտուղարուհի էր աշխատում մի արդյունաբերողի մոտ: Չապլինն աղջկան սիրեցրեց թողնել ամեն ինչ եւ պայմանագիր կնքել «Էսենեյ» կինոֆիրմայի հետ: Հետագա 8 տարիների ընթացքում նա Չարլիի հարսնացուն էր 20 ֆիլմում: «Կարմենը» չի դասվում այս նշանավոր զույգի լավագույն գործերի շարքը: Ըստ ժորժ Սադուլի, Չապլինը պարոդիստի ձիրք չուներ, որովհետեւ նրա ստեղծագործությունը շատ էր յուրահատուկ:

«Կարմեն»
1916, ԱՄՆ: Ռեժիսոր՝ Չարլի Չապլին: Դերերում. Չ. Չապլին, էդնա Փըրվիենս, Ջոն Ռենդ:

«Էսենեյ» ֆիրմայի տերերը, մեղադրելով Չապլինին դեկորների վրա վատնած գումարների համար, նրան հարկադրեցին «Կարմենի» պարոդիային եւս երկու մաս հավելել՝ գերածախսը հանդիսատեսի գրպանից փոխհատուցելու ակնկալությամբ: Այսպես, Չապլինի կամքին հակառակ, հրապարակ եկավ ֆիլմի երկրորդ, ընդարձակ տարբերակը, որից «Կարմենը» բնավ չշահեց:

Էջը պատրաստեց ՇԱՎԵՆ ԲՈՅԱՋՅԱՆԸ

Մարզական

Մարզիչներ, արդյունքներ

Ով կլինի վեցերորդը

Որպես կանոն, ֆուտբոլի ազգային հավաքականների գլխավոր մարզիչների հետ ֆեդերացիաների կնքած պայմանագրերի ժամկետն ավարտվում է ընտրական մրցաշարերի ավարտին: Վարուժան Սուքիասյանի պայմանագրի ժամկետը լրանում էր դեկտեմբերին, սակայն հավաքականի մարզիչը սթափ գնահատելով իրավիճակը, հրաժարական էր տվել: Մարզչի այս քայլը բոլորովին էլ անսպասելի չէր, քանի որ Հայաստանի հավաքականն անհաջող հանդես եկավ ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում եզրափակելով 5-րդ խմբի մրցաշարային աղյուսակը: Հայ ֆուտբոլիստներին այդպես էլ չհաջողվեց ընտրական մրցաշարում հաղթանակ տոնել: Մեր հավաքականն անցկացրած 10 հանդիպումներից 5-ում պարտվեց, 5 խաղ էլ ավարտեց ոչ-ոքի արդյունքով: Խփած եւ բաց թողած գնդակների տարբերությունն է 7-19:



1992 թ. ազգային հավաքականի շտաբը

Իհարկե, զուտ թվային արդյունքները չեն միայն դժգոհություն պատճառում: Հավաքականի խաղի ոճակը բնավ էլ չէր կարող գոհացնել ֆուտբոլասերներին: Վարուժան Սուքիասյանի խոստացած «առյուծների թիմն» այդպես էլ չկայացավ: Հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում Վարուժան Սուքիասյանը նշանակվեց մրցաշրջան-99-ի ավարտին փոխարինելով Սուրեն Բարսեղյանին: Նրա գլխավորությամբ առաջին հանդիպումը հավաքականն անց է կացրել 2000 թ. հունվարի 9-ին, Լոս Անջելեսում, Գվատեմալայի հավաքականի հետ (1-1): Հարկ է նշել, որ ընկերական մրցախաղերում հավաքականը Սուքիասյանի գլխավորությամբ վաստ արդյունքի չի հասել [illegible], 10-8: Բայց ահա, ընտրական մրցաշարում հավաքականը փաստորեն տաղալվեց անփառունակ ելույթներով հիասթափեցնելով իր երկրպագուներին: Հետաքրքրասերների համար նշենք, որ 1992 թ.-ից, երբ կազմավորվեց ՀՀ ազգային հավաքականը, նրա ղեկը սանձել են 5 գլխավոր մարզիչներ: Որպես կանոն, մարզիչների փոփոխությունը տեղի է ունեցել ընտրական հերթական փուլի ավարտից հետո: Բացառություն է կազմում Էդուարդ Մարգարովը՝ հավաքականի առաջին մարզիչը, որին պաշտոնանկ արեցին ընտրական մրցաշարի 3 հանդիպումներից հետո: Նրան փոխարինած Սամվել Դարբինյանին նույն ճակատագիրը սպասում էր ընտրական մրցաշարի ավարտին:

Ընտրական մրցաշարեր

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ	%
1. Սուրեն Բարսեղյան	10	2	2	6	8-15	8	26,6
2. Խորեն Հովհաննիսյան	10	1	5	4	8-17	8	26,6
3. Սամվել Դարբինյան	7	1	1	5	5-13	4	19,0
4. Վարուժան Սուքիասյան	10	0	5	5	7-19	5	16,6
5. Էդուարդ Մարգարով	3	0	1	2	0-4	1	11,1

Ընկերական մրցախաղեր

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ	%
1. Վարուժան Սուքիասյան	7	3	2	2	10-8	11	52,3
2. Սուրեն Բարսեղյան	4	2	0	2	3-4	6	50,0
3. Էդուարդ Մարգարով	3	1	1	1	1-1	4	44,4
4. Խորեն Հովհաննիսյան	6	1	0	5	2-24	3	16,6
5. Սամվել Դարբինյան	2	0	0	2	0-8	0	0

Ընդհանուր ցուցանիշներ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ	%
1. Սուրեն Բարսեղյան (1998-99 թթ.)	14	4	2	8	11-19	14	33,3
2. Վարուժան Սուքիասյան (2000-01)	17	3	7	7	17-27	16	31,3
3. Էդուարդ Մարգարով (1992-94)	6	1	2	3	1-5	5	27,7
4. Խորեն Հովհաննիսյան (20.6.96-97)	16	2	5	9	10-41	11	22,9
5. Սամվել Դարբինյան (1995-5.6.96)	9	1	1	7	5-21	4	14,8

Հետաքրքիր է, թե ո՞ր մարզչի գլխավորությամբ է ազգային հավաքականը ավելի հաջող մրցելույթներ ունեցել: Ստորեւ ներկայացվող վիճակագրական տվյալները, կարծում եմ, որոշակիորեն կպատասխանեն մարզասերներին հուզող հարցերին: Եվ այսպես, ներկայացնում ենք հավաքականի ցուցանիշները յուրաքանչյուր մարզչի օրոք (տես աղյուսակները):

Բերենք եւս մի շարք փաստեր, որոնք լրացնում են վերը բերված ցուցանիշները: Էդուարդ Մարգարովի օրոք ՀՀ հավաքականն իր անդրանիկ հաղթանակն է տոնել (Մալթա՝ 1-0), միաժամանակ բացելով գոլերի հաշիվը (Արսեն Ավետիսյան): Ընտրական մրցաշարում հավաքականն այդպես էլ գոլ չխփեց, ուստի հաղթանակի մասին խոսք լինել չէր կարող:

Սամվել Դարբինյանի գլխավորությամբ մեր ֆուտբոլիստներին հաջողվել է ընտրական մրցաշարում առաջին անգամ հաղթել, այն էլ՝ մրցակցի դաշտում (Մակեդոնիա՝ 2-1): Ընկերական հանդիպումներում հավաքականը գոլ չի խփել:

Խորեն Հովհաննիսյանի օրոք հավաքականն ընտրական մրցաշարերում հասել է լավագույն արդյունքի՝ գրավելով 4-րդ տեղը: Միաժամանակ հավաքականը կրել է նաեւ ամենախոշոր հաշվով պարտությունները (Չիլի, Վրաստան 0-7), 11 խաղ անընդմեջ հաղթանակ չի տոնել (5 ոչ-ոքի, 6 պարտություն):

Սուրեն Բարսեղյանը միակ մարզիչն է, որ իր նորամուծը հավաքականում նշել է հաղթանակով, այն էլ՝ 2 անընդմեջ (Լիբանան՝ 1-0, Անդորրա՝ 3-1): Նրա գլխավորությամբ հավաքականն ընտրական մրցաշարում 2 հաղթանակ է տոնել (Անդորրա՝ 3-1, 3-0): Միեւնույն ժամանակ 7 խաղ շարունակ (որից 5-ն ընտրական մրցաշարերում) հավաքականը չի կարողացել գրավել մրցակցի դարպասը կրելով 4 անընդմեջ պարտություն:

Վարուժան Սուքիասյանի գլխավորությամբ հավաքականն ընկերական մրցախաղերում դրական հաշվեկշիռ ունի: Իսկ ահա ընտրական մրցաշարում թիմն այդպես էլ չճաշակեց հաղթանակի քաղցրությունը:

ԸՄԲՇԱՄԱՐՏ

Մեկնարկը տվեց

Հունաստանի Պատա քաղաքում մեկնարկել է հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի 46-րդ առաջնությունը: Պարգեւները վիճարկողների թվում են նաեւ վեց հայ ըմբիշներ: Նրանցից առաջինը մրցագորգ դուրս եկավ 63 կգ քաշային ըմբիշ Վաղինակ Գալստյանը: Փորձառու ըմբիշը դանիացի Մորթեն Հելսնի հետ գոտեմարտում իրեն հիանալի դրսեւորեց: Ընդամենը 1 րոպե 24 վրկ-ում տարբեր հնարքների շնորհիվ վաստակելով 13 միավոր, Վաղինակը հաղթող ճանաչվեց: 97 կգ քաշային Ռոբերտ Պետրոսյանը սլովակ Ռոման Մեդունայի հետ գոտեմարտում սկզբում տիրում էր նախաձեռնությանը, սակայն հետագայում փորձի պակասը զգացնել տվեց: Մեր մարզիկը սխալ թույլ տվեց եւ ի վերջո զիջեց մրցակցին: Ճիշտ է, հաջորդ գոտեմարտը իսրայելցի Հենրի Պատիաշվիլու հետ Ռոբերտը շահեց, սակայն դուրս մնաց մեդալների համար մղվող պայքարից: 57 կգ քաշայինների մրցավեճում իր նորամուծը հաղթանակով նշեց գյումրեցի Արսաշես Սինասյանը, որը 11-7 հաշվով պարտության մատնեց ռումինացի Ֆլորին Գաբիլային:

Պայքարը արվում է

Շախմատի աշխարհի առաջնության վերջնագծում պայքարը բավական սրվել է, քանի որ ասպարեզում մնացել են ուժեղագույնները: Տղամարդկանց մրցաշարի քառորդ եզրափակիչ առաջին 4 պարտիաներից միայն մեկն արդյունավետ ելք ունեցավ. աշխարհի ներկայիս չեմպիոն Անանդը հաղթեց Շիրովին: Սվիդլեր-Գելֆանդ, Պոնոմարյով-Բարեեւ եւ Իվանչուկ-Լոթյե հանդիպումներն ավարտվեցին ոչ-ոքի: Կանանց կիսաեզրափակիչում Խու Յուհուան պարտության մատնեց Ալեքսանդրա Կոստենյուկին, իսկ Չիբուրդանիձեն եւ Չժու Չենը խաղաղ դաշն կնքեցին:

Լավագույնը Բեքհեմն է

Անգլիայի մարզական լրագրողների ասոցիացիան Դեյվիդ Բեքհեմին ճանաչել է Անգլիայի մրցաշրջան-2001-ի լավագույն մարզիկ: 2-րդ տեղում է թեթեւ ատլետիկայի աշխարհի ներկայիս չեմպիոն Ջոնաթան Էդվարդսը: Լավագույն եռյակը եզրափակել է եւս մեկ ֆուտբոլիստ՝ «Լիվերպուլի» հարձակվող Մայքլ Օուենը: «Լիվերպուլը» ճանաչվել է տարվա լավագույն թիմ:

Կումանը գլխավորեց «Այաքսը»

Անցյալում հոլանդացի նշանավոր ֆուտբոլիստ Ռոնալդ Կումանը նշանակվել է Ամստերդամի «Այաքսի» գլխավոր մարզիչ: Նա կփոխարինի մի քանի օր առաջ թիմից հեռացված Կո Ադրիանսեին: Պատճառը թիմի ցածր ցուցանիշներն են եվրագավաթներում «Այաքսի» հետ Կումանի պայմանագրի ժամկետը մինչեւ 2004 թ. հուլիսն է: Մարզչական աշխատանքում նրան կօգնի «Այաքսի» նախկին պաշտպան Ռուդ Կրոլը: Նա ժամանակին օգնել է Հոլանդիայի հավաքականի գլխավոր մարզիչ Լուիս վան Գալին:

Գլխավոր մարզչի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ Կումանը նշել է, որ ինքը նույն զգացումն ունի, ինչ-որ այն ժամանակ, երբ 20 տարեկանում ընդունվեց «Այաքս»: Կումանը 17 տարի անց է կացրել պրոֆեսիոնալ ֆուտբոլում՝ հանդես գալով հոլանդական «Գրոնինգեն», «Այաքս», «Էյնդհովեն», «Ֆեյենորդ», իսպանական «Բարսելոն» թիմերում: Հոլանդիայի եւ Իսպանիայի առաջնություններում նա ընդհանուր առմամբ անցկացրել է 533 խաղ եւ խփել 193 գոլ: Համաշխարհային ֆուտբոլի պատմության մեջ Կումանն ամենաարդյունավետ պաշտպանն է: Նա տիրապետում էր ուժգին հարվածների հիանալի հրացնելով տուգանային: Կումանն, անշուշտ, 80-ական թթ. վերջերի Եվրոպայի լավագույն պաշտպաններից էր: 1988 թ. նա Հոլանդիայի հավաքականի կազմում դարձավ Եվրոպայի չեմպիոն, 1990 եւ 1994 թթ. հանդես է եկել ֆուտբոլի աշխարհի առաջնության եզրափակիչ փուլում: Ավարտելով ելույթները, 1997 թ. Կումանն ընտրվեց Հոլանդիայի հավաքականի գլխավոր մարզիչ Գուս Խիդինկի օգնական, հետո «Բարսելոնի» երկրորդ մարզիչն էր՝ օգնելով Լուիս վան Գալին:

Գլխավոր մարզչի պաշտոնում Կումանի աշխատանքային սաժն առայժմ չնչին է. անցյալ տարի նա գլխավորում էր «Վիտեսը»:

Սուր մրցակցություն չծավալվեց

Ռուսաստանցի թենիսիստուհի Աննա Կուռնիկովան շարունակում է զվարճացնել իր երկրպագուներին տարբեր մարզուհիների հետ անցկացվող ընկերական հանդիպումներով: Հերթական հանդիպումը նա անցկացրեց ամերիկյան Դենվեր քաղաքում Մոնիկա Սելեշի հետ: Խաղը դիտելու համար թենիսի սիրահարները ստիպված էին վճարել 50-150 դոլար: Սակայն այդպես էլ նրանք գեղեցիկ եւ համառ մրցակցության ականատես չեղան: Սելեշից ընդամենը 1 ժամ պահանջվեց Կուռնիկովային հաղթելու համար (6-2, 6-2):

ՈՒԵՖԱ-Ի ԳԱՎԱԹ

Անդերսոնը «Լիոնին» ուղեգիր է պարգեւում

UEFA CUP

ՈՒԵՖԱ-ի գավաթի 1/16 եզրափակիչի պատասխան հանդիպումներում գրանցվեցին մի քանի անակնկալներ: «Սերվետը» հյուրընկալվելիս ջախջախեց «Հերտային»: Ճիշտ է, վերջինս հենց խաղասկզբից 10 հոգով էր հանդես գալիս, բայց դա արդարացում չէ: Ֆրանսիական «Լիոնն» առաջին խաղում 1-4 հաշվով զիջելով «Բրյուգեին», սեփական հարկի տակ, շնորհիվ բրազիլացի Սոնին Անդերսոնի խփած 3 գոլերի, մտավ 1/8 եզրափակիչ: Դրամատիկ պայքարում անցավ «Պարի Սեն Ժերմենի» եւ «Գլազգո Ռեյնջերսի» մրցախաղը: Թիմերի 2-րդ հանդիպումում էլ դարպասները մնացին անառիկ: 118-րդ րոպեին հաշիվը բացելու հիանալի հնարավորություն ընձեռվեց հյուրերին, սակայն Ռոնալդ դե Բուրը չկարողացավ իրացնել 11 մ հարվածը: Այնուամենայնիվ, շոտլանդացիները հաղթեցին 11 մ հարվածաշարով:

1/16 եզրափակիչի արգելքը հաջողությամբ հաղթահարեցին իտալական թիմերից երեքը՝ «Միլանը», «Ինտերը» եւ «Պարմա»: Միայն «Ֆիորենտինան», որն անհաջող է հանդես գալիս երկրի առաջնությունում, դուրս մնաց պայքարից:

Ահա 1/16 եզրափակիչի պատասխան հանդիպումների արդյունքները (փակագծում առաջին խաղի արդյունքն է):

«Ֆրայբուրգ» Գերմանիա-«Ֆեյենորդ» Հոլանդիա՝ 2-2 (0-1)
«Սելթիկ» Շոտլանդիա-«Վալենսիա» Իսպանիա՝ 1-0 (0-1), 4-5՝ 11 մ
«Լիդս» Անգլիա-«Գրասհոպերս» Շվեյցարիա՝ 2-2 (2-1)
«Մալյորկա» Իսպանիա-«Սլովան» Չեխիա՝ 1-2 (0-3)
«Էյնդհովեն» Հոլանդիա-ՊԱՕԿ Հունաստան՝ 4-1 (2-3)
«Լիլ» Ֆրանսիա-«Ֆիորենտինա» Իտալիա՝ 2-0 (1-0)
«Հերտա» Գերմանիա-«Սերվետ» Շվեյցարիա՝ 0-3 (0-0)
«Ինտեր» Իտալիա-«Իպսվիչ» Անգլիա՝ 4-1 (0-1)
«Պարի Սեն Ժերմեն» Ֆրանսիա-«Գլազգո Ռեյնջերս» Շոտլանդիա՝ 0-0 (0-0), 3-4՝ 11 մ
«Լովեչ» Բուլգարիա-ԱԵԿ Հունաստան՝ 1-1 (3-2)
«Բոնդբյու» Դանիա-«Պարմա» Իտալիա՝ 0-3 (1-1)
«Սպորտինգ» Պորտուգալիա-«Միլան» Իտալիա՝ 1-1 (0-2)
«Լիոն» Ֆրանսիա-«Բրյուգե» Բելգիա՝ 3-0 (1-4)

Բաժինը վարում է ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հեռքերով

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Վարդան Օսկանյան. Ամենամեծ խոչընդոտը Ադրբեջանի սեւեռումն է ինքնավարության գաղափարի վրա

ԵՐԵՎԱՆ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Դեկտեմբերի 7-ին Բրյուսելում տեղի է ունեցել Եվրոպայանտյան գործընկերության խորհրդի նախարարների հանդիպումը, որին մասնակցել է ՀՀ ԱԳՆ ղեկավարությունը՝ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի գլխավորությամբ: Հանդիպման հիմնական թեման Եվրոպայանտյան տարածաշրջանում առկա անվտանգության խնդիրներն էին:

Ինչպես հայտնում են ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից, հանդիպման ընթացքում իր ելույթում ՀՀ ԱԳ նախարարը հիմնականում անդրադարձել է սեպտեմբերի 11-ի ահաբեկչությանը եւ դրա հետեւանքներին մեր տարածաշրջանի համար, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդիրներին:

Խոսելով սեպտեմբերի 11-ի իրադարձությունների մասին, նախարար Օսկանյանը նշել է, որ դրանց հաջորդած ամենակարեւոր փոփոխություններից մեկը սառը-պատերազմյան մտածողության վերացումն էր, որն իր արտացոլումն է գտել նաեւ ռուս-ամերիկյան հարաբերություններում: Հայաստանը ողջունում է այդ զարգացումը, քանի որ այն մեր տարածաշրջանում նվազեցնում է լարվածությունը եւ հնարավոր բեւեռացումը: Այդ իրադարձությունների հետեւանքով նորովի է արժեւորվում Հայաստանի վարած փոխլրացման քաղաքականությունը, որը, թեեւ նախկինում կասկածանքի էր ենթարկվում, այսօր առավել քան արդարացվում է:

Լեռնային Ղարաբաղի խնդրի առնչությամբ նախարար Օսկանյանը նշել է, որ Ադրբեջանի սեւեռումը ինքնավարության գաղափարի վրա ամենամեծ խոչընդոտն է դարաբաղյան կարգավորման գործընթացում: Այդ գաղափարը ծնունդն է Ստալինի վարած «բաժանիր եւ տիրիր» քաղաքականության, որի հետեւանքով ստեղծված կարգավիճակը ԼՂ-ի համար չուներ որեւէ պատմական նախադեպ: Նախարար Օսկանյանը նշել է նաեւ, որ Լեռնային Ղարաբաղը երբեք չի եղել անկախ Ադրբեջանի կազմում:

ԵԱԳԽ նախարարական հանդիպմանն ընդունվել է 2002-04 թթ. ԵԱԳԽ գործողությունների ծրագիր:

ԵՐԿԱՐ ՍՊԱՍՎԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Աշխարհահռչակ ռեժիսոր Ասոմ Եղոյանը Հայաստանում է

ԵՐԵՎԱՆ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստան է ժամանել կանադահայ ռեժիսոր Ասոմ Եղոյանը, որի հետ հանդիպում էր կազմակերպվել դեկտեմբերի 7-ին ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարությունում: Մշակույթի նախարար Ռոլանդ Շառոյանը, հուշանվերներ հանձնելով աշխարհահռչակ կինոբեմադրիչին, խոսացավ հայրենի կառավարության զորակցությունը տաղանդավոր արվեստագետին՝ նրա ծեռնարկումներում: Ինքը՝ Եղոյանը խուսափեց հարցերին պատասխանելուց, թերեւս, նկատի ունենալով «Արարատ» ֆիլմի շուրջ արդեն իսկ բարձրացած աղմուկը:



Ասոմ Եղոյանի այցելության նպատակը «Արարատ» ֆիլմի երաժշտության ձայնագրությունն է Հայաստանում: Ֆիլմի նկարահանումները դեռ չեն ավարտվել, սակայն աղմուկը նրա շուրջ ամբողջ աշխարհում եւ հատկապես Թուրքիայում բորբոքվում է աննախադեպ ուժգնությամբ: Կինոնկարի առանցքը թուրքերի կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունն է: Գլխավոր դերերում հանդես են գալիս Շառլ Ազնավուրը, Եղոյանի կինը՝ Արսինե Խանջյանը, Դեյվիդ Ալփերը եւ ուրիշներ:

Ֆրանսիական մամուլի բնորոշմամբ, «Արարատը» «ֆիլմ է ֆիլմի մեջ»: Կինոնկարի ցուցադրման իրավունքն արդեն գնել են Ֆրանսիան, Անգլիան, Գերմանիան եւ Իսպանիան: Ամենայն հավանականությամբ, «Արարատը» կներկայացվի տարբեր կինոփառատոներում:

Պաղեստինի առաջնորդի տիկինը դավաճանում է

Անգլիական «Թայմս» շաբաթաթերթը գրում է, որ 3սեր Արաֆաթի տիկինը՝ Սոհա Արաֆաթը, սիրային կապ ունի ծագումով լիբանանցի գործարար Իլեն Նախշոնի հետ: Մինչ Արաֆաթը Ռամալլայում պայքարում է Պաղեստինի ազատության համար, նրա փարիզաբնակ տիկինը վայելում է ֆրանսիական կյանքի պերճանքն ու շքեղությունը: Թերթը մանրամասներ չի հաղորդում Նախշոնի մասին, սակայն ընդգծում է, որ 36-ամյա Սոհան արաբ հասարակության մեջ վերջին անգամ երեւացել է այս տարվա նոյեմբերի սկզբին՝ Կահիրեում կայացած արաբ կանանց համաժողովում: Արդեն մի քանի տարի վեցամյա դստեր հետ Սոհան բնակվում է Փարիզում, որովհետեւ ատում է Իսրայելը եւ խաբկանի է համարում այդ տարածաշրջանում խաղաղության մասին մտածելը: Պաղեստինը կյանքի համար խիստ վտանգավոր երկիր է, իսկ Փարիզում ապրելը տիկին Սոհան համարում է նպատակահարմար, քանի որ զբաղված է հանուն Պաղեստինի երեխաների դրամահավաք նվիրատվություն կազմակերպելով: Արաֆաթից 32 տարով երիտասարդ Սոհան հերքում է նրանից հեռանալու ցանկերը:

Ռ. Պ.

Կորեացիներն սպառնում են Բրիջիս Բարդոյին

Ֆրանսիացի հայտնի դերասանուհի եւ կենդանիների պաշտպան Բրիջիս Բարդոն էլեկտրոնային փոստով հազարից ավելի նամակներ է ստացել հարավկորեացիներից: Ֆրանսիերը հաղորդում է, որ այդ ուղերձները լի են վիրավորական արտահայտություններով եւ սպառնալիքներով: Բարդոն սկսեց նման էլեկտրոնային նամակներ ստանալ, երբ փետրվարի 2002 թ. ափեարհի առաջնության առթիվ (անցկացվելու է Հարավային Կորեայում եւ Ճապոնիայում) կորեացիներին կոչ արեց վերջ դնել «բարբարոսական խոհարարական ավանդույթին»՝ շան միս ուտելուն:

Սեուլում հրատարակված հաղորդագրության մեջ Բրիջիս Բարդոն ընդգծում է, որ իր կոչը «ընդհանրապես չի ընդունվել»: Միաժամանակ նա հայտարարում է, թե չի հրաժարվելու իր պայքարից եւ ավելացնում, որ իրեն աջակցում են ՖԻՖԱ-ն եւ Ֆրանսիայի ֆուտբոլի հավաքականը:

Պ. Բ.

For Your Internal News of Armenia
Log on to
www.azg.am
In English, Russian, Armenian and Turkish

Արժեթղթերի գնման/վաճառքի համար դիմել Հայաստանի Ֆոնդային Բորսայի անդամ բրոքերային ընկերություններին

Արդինբրոք ՍՊԸ
ք. Երեւան, Թումանյան 28/20
Հեռ.՝ 542674

Արմենբրոկ ՓԲԸ
ք. Երեւան, Հանրապետության 5բ
Հեռ.՝ 528986

Ալինվեստ ՍՊԸ
ք. Երեւան, Ռոստովյան 21, բն. 41
Հեռ.՝ 454112, (09) 429412

Ասպես ՍՊԸ
ք. Երեւան, Ե. Քոչար 21/1, բն. 37
Հեռ.՝ 571218

Արժեթղթեր Կենտրոն ՍՊԸ
ք. Երեւան, Հանրապետության 5բ
Հեռ.՝ 525801, 581578

Աերոբրոք ՍՊԸ
ք. Երեւան, Կոմիտաս 22/50
Հեռ.՝ 222725, 278469

Ալիխանյան Բրոքեր ՍՊԸ
ք. Վանաձոր, Գ. Լուսավորչի 45ա
Հեռ.՝ (051) 40297

Այս երգումքի ՍՊԸ
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 71/27
Հեռ.՝ (051) 22422

Այսի Բրոկ Դիլ Տրաստ ՍՊԸ
ք. Երեւան, Հալաբյան 47, բն. 31
Հեռ.՝ 348837

Գոլդ-Ինվեստ ՓԲԸ
ք. Երեւան,Գ. Լուսավորչի 15/1
Հեռ.՝ 525822

Երեւան-Բրոքեր ՍՊԸ
ք. Երեւան, Ամիրյան 2/8
Հեռ.՝ 524357, 151820

Էյլեն-Ինվեստ ՓԲԸ
ք. Երեւան, Նալբանդյան 50, բն. 26
Հեռ.՝ 528232, 540914

Ինվեստիս ՓԲԸ
ք. Երեւան, Ռաֆյան 8, բն. 30բ
Հեռ.՝ 567767, 582478, 562404

Կապիտալ Ինվեստ ՍՊԸ
ք. Երեւան, Ազաթանգեղոսի 7
Հեռ.՝ 569680, 526417

Կապիտալ Մենեջմենթ ԲԲԸ
ք. Երեւան, Ամիրյան 2/8
Հեռ.՝ 560138

Կապիտալ Տրաստ ՓԲԸ
ք. Երեւան, Գ. Լուսավորչի 15/1
Հեռ.՝ 580745

Ս.Գ.Ս. ՍՊԸ
ք. Գյումրի, Աբովյան 242-1
Հեռ.՝ (041) 22184, (051) 23109

Նորդ-Վեստ-Ինվեստ ՍՊԸ
ք. Գյումրի, Աբովյան 247
Հեռ.՝ (041) 30868

Պրիվատ Ինվեստ ՓԲԸ
ք. Երեւան, Նալբանդյան 50/ 26
Հեռ.՝ 521812, 521051, 52ՁՁ778

Սարբրոք ՍՊԸ
ք. Երեւան, Գայի 24
Հեռ.՝ 630480, 542547

Վինկո ՍՊԸ
ք. Երեւան, Ամիրյան 24, բն. 5
Հեռ.՝ 531805

Տոնսոն ՍՊԸ
ք. Երեւան, Դեղատան 2
Հեռ.՝ 545477, 545407

Օրիգինալ Ինվեստ ՓԲԸ
ք. Երեւան, Վարդանանց 5ա
Հեռ.՝ (09) 420449

Armex

Հայաստանի Ֆոնդային Բորսա
Armenian Stock Exchange

2001 թ. դեկտեմբեր 7-ի առեւտրային նստաշրջան

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆԱՆՇՈՒՄ

Թողարկող Issuer	Հատ. ABBR	Հարթակ Listed	Գնում* Bid: Լավագույն գին Best price	Գնում* Bid: Միջ. կշռ. գին Avg. price	Գնում* Bid: Ընդհ. քան. Total qnt.	Վաճառք* Ask: Լավագույն գին Best price	Վաճառք* Ask: Միջ. կշռ. գին Avg. price	Վաճառք* Ask: Ընդհ. քան. Total qnt.	Կատարված գործարքներ Transactions: Նվազ. գին Day low	Կատարված գործարքներ Transactions: Առավ. գին Day high	Կատարված գործարքներ Transactions: Միջ. կշռ. գին Avg. price	Կատարված գործարքներ Transactions: Փոփ.% Avg%	Կատարված գործարքներ Transactions: Ծավալ (Բազ. դրամ) Volume
ՀԱԳԻՐՀ (ԱԳԻՆՅԱՆ)	ACHI	B											
ԱՐԱՓԱԾ ԲԱՆԿԱԳՈՐԾ. ԱՄ	AGBM	B											
ԱՅՈՒՍԻՍ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ Գ/Ն	APAH	B											
ԱՊԱՍԵԿՈՒՍԻՀ	APAK	B											
ԱՐԴՎԻՆ ԷԼԱԵՆ.Գ/Ն (ԱՆԱՍՀՈՐ)	ARDV	B											
ԱՐԵԼՍՈՒՅՍ	ARSL	B											
ԱՐՏԵՔՍ	ARTX	B											
ԱՍԵՎ ՍԵՎԱՆ	ASEV	B	1,000.0	1,000.0	1								
ԱՍՏԵՎԱՆԱԾ (ԱՐԹԻԿ)	ASTM	B											
ԱՎՏՈՍԳՐԵՂՍՏԵՐԻ Գ/Ն	AVAG	B											
ԱՎԻԱՀԱՍԼԻՐ	AVHM	B	90.0	90.0	80								
ԱՎՏՈԲԱՆԿ	AVTB	B											
ԱՎՏՈՍՏԻԿԱ Գ/Ն	AVTM	B	300.0	300.0	1								
ԻՆՏԵՍԻ ԲԵՆՏՈՆԻՏ Կ/Տ	BENT	B											
ԲԻԵԼ ՊԼԱԶՄԱ	BHSP	B											
ՇԱՐԵԼՑ ԳՈՐԾԻՔՍԻՆ. Գ/Ն	CHGG	B											
ԿԱՊԻՏԱԼ ՍԵԼԵՔՏՍԵԼՔ	CPMT	B				950.0	950.0	2,300					
ԴԱԼԻՏՍԻՆ ԱՄՏ. ՏՐ. ՍԿ	DAJK	B											
ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ԲՈՒԺՏԵՆ. Գ/Ն	DBJG	B											
ԴԻԼԻՏՍԻՆ ԱՌՈՂՋ. ՀԼ	DJAH	B											
ԶՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ	DZKT	B											
ԷԼԵԿՏՐՈԱԳՐԻՏՍՍՐՔ	ECHS	B											
ԷՍԱՐՍԻՆԻ ԱՍՓՔՍԵՐԻ. Գ/Ն	ECSG	B											
ԵՐ. ԷԼԵԿՏՐԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ Գ/Ն	EELJ	B											
ԵՐՖՐԵԶ	EFRZ	B	1,400.0	1,400.0	3								
ԵՐ. ՀԻԴՐՈՖԻԼՏՐՈՒՄ Գ/Ն	EHHG	B											
ԵՐ. ՈՒՍԵՐՇԱԿԱՆ Գ/Ն	EJWG	B											
ԵՐԿԱԹԵԹՆԻ 7	EKB7	B											
ԵՐ. ԿԱՇԽԵ ԳԱԼԱՆՏԵՐԵԱՅԻ Ֆ/Ս	EKGF	B	1,080.0	1,080.0	10								
ԵՐ. ԿԵՆՏԱՅԱՅԻ ՔԻՄԻԱՅԻ Գ/Ն	EKQG	B	400.0	400.0	100	900.0	900.0	33					
ԷԼԵԿՏՐԱՍՊԱՐԱՏ	ELAP	B	470.0	470.0	10								
ԷԼԵԿՏՐԱՄՈՆՏԱԺ	ELMJ	B											
ԷԼԵԿՏՐԱՍՍՐՔ	ELSQ	B											
ԵՐ. ԼՈՒՍԱՏԵՍԼԻԿ	ELUS	B											
ԵՐԵՎԱՆԻ ՍԱՐՇԱԿՈՒՇԿՆԵՐԻ Ֆ/Ս	EMKFC0	B	500.0	500.0	100								
ԷԼԵԿՏՐԱՍԵՌՍՈ	EMOR	B											
ԵՄՏԱ	EMTA	B											
ԷՊԼԻՆԱԾԻՆ ՊԼԱՍՏԱՍ Գ/Ն	EPLG	B											
ԵՐԱԶ	ERAZ	B											
ԵՐ. ԺԱՍՄՈՒՅՍՅԻ Գ/Ն	ERJG	B	1,500.0	1,380.0	15								
ԵՐԿԱԹԵԹՆԻ	ERKB	B											
ԵՐ. ՇԱՄՊԱՆ. ԳԻՆՆԵՐԻ Գ/Ն	ESHG	B											
ԱՆԱՖՈՏ ԵԵՆ. Գ/Ն (ԵՐԵՎԱՆ)	ETCG	B											
ԵՐ. ՏԵԽՆՈԼՈԳ. ԱՍՓՔ ԵՐ Գ/Ն	ETXS	B											
ՎԱՆ ԱԶ (ԵՐԵՎԱՆ)	EVAF	B											
ԵՐ. ՈՍԿԵՐՇԱԿԱՆ Գ/Ն - 1	EVGI	B											
ԳԱՆՎ	GANV	B											
ԳԱՐՈՒՆ	GARN	B											
ԳՈՐԾԻՔ ԳԱՄՄ	GGAM	B											
ԳԵԳԱՄՄ	GGMA	B											
ԳՅՈՒՄՐԻ ԱՄՊ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ Կ/Տ	GMPG	B											
ՀԱԳԱՐՈԲԱՆԿ	HAGB	B											
ՀԱՇԽՈ	HASH	B	100.0	100.0	3,180								
ՀԱՏԻՍ	HATC	B											
ՀԱՅՕՆԱՍՆՈՏ	HATS	B	1,400.0	1,400.0	30								
Հ.Է.Ղ. ՀԱՅԱՍ ԳՐՈՒՊ	HEHG	B	450.0	450.0	10								
ՀԱՅԷԼԵԿՏՐԱՄԵԲԵԼ	HELM	B											
ՀԱՅԿԱԲԵԼ	HKBL	B											
ՀԱՅՔՈՄԵԲԵԼ	HOMO	B											
ՀԱՅՔ ՇԻԼԱՆԱՍՊԱԾ	HSHN	B											
ՏԵՐՈՒՈՒԿ ՀԱՆՔԱՅԻՆ ՏՐՈ Գ/Ն	JHJG	B											
ԿԱՇԻ	KASH	B											
ԿԱՍՈՒՐՇԻՆ	KMSH	B											
ԿՈՒՆԵԿՏ	KNET	B											
ԿԱՍԿԱ	KNKA	B											
ՈՍԼԵ Գ/Ն (ԿԱՊՈՒՍԻ)	KREL	B											
ՍԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ Գ/Ն	MQER	B	3,000.0	3,000.0	2								
ՍԱՐՏԻՆԻՆԻՆ	MRSH	B											
ՍԵՐՇՈՒՍԿՈՅՍՆ	MSKV	B											
ՍՍԱԽՍ ՏԱԲԿ	MSTB	B											
ՍԵՏՇԻՆ	MTSH	B											
ՆՈՒԲԱՐԱՇԵԼԻՆ ՏՐԻԿՈՏԱԺԻ Ֆ/Ս	NBTF	B											
ՆԵՅՐՆ	NERN	B											
ՊԼԱՍՏԻԿ	PLAS	B											
ՓՈՐՈՒԿ ԱԱՐԵ	PQRN	B											
ՌԱՍՏՐ Գ/Ն	RSTR	B											
ՌԵԶՈՍՏՐ	RZTR	B											
ՍԵԼԵՆԱ	SELN	B											
ՇԻԱՄԲԵԼԱՆՈՐԳՈՒՍ	SHMN	B											
ԵՐ. ՇՈՒՇԱՆ ՏԵՔՍՏԻԼ Կ/Տ	SHTK	B											
ԿԱՏԱՐՈՂ. ԱԱՐՔ. Գ/Ն	SKSG	B											
ՍԻՍԿԱՆ	SSKN	B											
ԻՆՏԵՐՍՏԱՆՈԿ ԳԱՀ	STAN	B											
ՏՈՍՊ	TASP	B											
ՏԱՎՐՈՍ	TAVR	B											
ՈՒԿՐԻՆ	UKSH	B											
ՍԻՍՏՈՐՆԵՑ ԲԱՆԿ	UNBK	B											
ՎԱՆԱՁՈՐԻ ԿՈՒՐԿԻ Ֆ/Ս	VAKF	B											
ՎԱՆՈՒԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԼՍ. Գ/Ն	VEVG	B											
ՎՇԼՐԿ	VSHK	B											
ՎԻՏԱՄԻՆՆԵՐԻ Գ/Ն	VTMG	B											
ԵՐԵՎԱՆ ԿԱՌՈՒՑ	YKHQ	B				8,000.0	8,000.0	1,000					
ԵՐ. ՊԱՀԱԾՈՆԵՐԻ Գ/Ն	YPHG	B											
ԵՐ. ՈԼԵԼԻ Գ/Ն	YRLE	B											
ԶՆԱՆՁՏԵՂԱՇՍՏՈՑ ՊՐՈՄԵՏԵՅ	ZNGP	B											

* Շրջանառության գնանշումները ներկայացված են հարթակի մասին տեղեկության առեւտրային նստաշրջանի փակման դրությամբ: Բոլոր գները ՀՀ դրամով:
** 4 կամ ավելի կողմերի հաստատումը դա բաժնետիրական ընկերության հասարակ անվանական բաժնետոմսի հարյուրումն է: Այն դեպքում, երբ 4 կամ ավելի կողմերի կնքված է CO, արդեն դա ՍՊԸ-ի բաժնեմասն է:
Այլ տեղեկություններ հրատարակվում են ինտերնետային էջում www.armex.am

© Armex

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիլ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 7. 12. 2001 Գինը՝ 100 դրամ